

**ՄԱԿ-Ի ՄԱՐԴՈՒ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԻ  
ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ  
ՋԱՏԱԳՈՎՈՒԹՅԱՆ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԵՎ  
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

**ՄԱԿ-Ի ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ  
ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ ԶԱՏԱԳՈՎՈՒԹՅԱՆ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

*Գործնական ձեռնարկ քաղաքացիական  
հասարակության դերակատարների և  
իրավաբանների համար*

ՀՏԴ 341.231.14(07)

ԳՄԴ 67.412.1g7

Պ 505



## Պետրոսյան Հասմիկ, Սիմոնյան Անահիտ

Պ 505

ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների գործարկումը ջատագովության շրջանակներում. Գործնական ձեռնարկ քաղաքացիական հասարակության դերակատարների և իրավաբանների համար / Հ. Պետրոսյան, Ա. Սիմոնյան; Խմբագրական կազմ՝ Նիկոլայ Հովհաննիսյան, Նարինե Ալեքսանյան, Անժելա Ավագյան.- Եր.: Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2021.- 120 էջ:



Սույն հետազոտությունը մաս է կազմում «ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրապարակվող ձեռնարկների շարքի՝ «Քաղաքացիական հասարակություն» (ՔՀ) թեմայով: Շարքն ընդգրկում է գրույցներ չորս ծավալուն թեմաների վերաբերյալ.

Քննադատական մտածողություն (ՔՄ)

Պատերազմ և խաղաղություն (ՊԽ)

Քաղաքացիական հասարակություն (ՔՀ)

Կրթություն, պատմության մեթոդաբանություն, մշակույթ և արժեքներ (ԿՊՄՄԱ)

ՀՏԴ 341.231.14(07)

ԳՄԴ 67.412.1g

ISBN 978-9939-1-1256-5

© Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2021



## Վլադիմիր ՇԿՈԼՆԻԿՈՎ

ՄԱԿ-ի ՄԻԳՀԳ-ի  
Հարավային Կովկասի  
համար մարդու իրավունքների  
հարցերով ավագ խորհրդական

Այս ձեռնարկը հանրության ուշադրությանն է ներկայացնում Միավորված ազգերի կազմակերպության պայմանագրային մարմինների գործունեությունից, մասնավորապես՝ մարդու իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ անհատական գործերով վճիռներ կայացնելու իրավասությունից օգտվելու հնարավորությունները: Հրապարակումը պարունակում է գործնական տեղեկություններ մարդու իրավունքներով զբաղվող փաստաբանների, ինչպես նաև թեմայով հետաքրքրված անձանց կամ կազմակերպությունների համար:

Թեև հայտնի է, որ Միավորված ազգերի կազմակերպության Պայմանագրային մարմինները՝ որպես ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների մեխանիզմի անփոխարինելի և անքակտելի մաս, ուսումնասիրում են անդամ պետությունների պարբերական զեկույցները նրանց կողմից ստորագրված և վավերացված միջազգային կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունների իրականացման վերաբերյալ, այդ մարմինները հանդես են գալիս նաև առաջարկություններով՝ ինչպես բարելավել մարդու իրավունքների պաշտպանությունը այդ պետություններում: Մարդու իրավունքների ոլորտում Պայմանագրային մարմինների անդամ հանդիսացող միջազգային փորձագետներից առաջարկություններ ստանալու հնարավորությունը Միավորված ազգերի կազմակերպության՝ մարդու իրավունքներին վերաբերող կոնվենցիաների վավերացման առավելություններից մեկն է:

Ավելի սահմանափակ շրջանակների է հայտնի, որ ՄԱԿ-ի Պայմանագրային մարմինները կարող են վճիռներ կայացնել անհատական գործերով, որոնցում, անդամ պետությունների կողմից միջազգային կոնվենցիաների դրույթներին համապատասխան գործունեությունը քննվում է անհատների կողմից ներկայաց-

ված բողոքների կոնկրետ դեպքերում, եթե անհատները կարծում են, որ խախտվել են իրենց իրավունքները, իսկ ներպետական կառույցները չեն կայացրել արդար վճիռ՝ պետության միջազգային հանձնառություններին համապատասխան: ՄԱԿ-ի Պայմանագրային մարմիններին անհատական բողոքներ ներկայացնելով՝ անհատները կարող են իրավական պաշտպանության միջոցներ հայցել:

Արդարություն որոնելուն զուգահեռ՝ ՄԱԿ-ի Պայմանագրային մարմինների վճիռը հայցելու մի շարք պատճառներ կան: Դրանցից մեկը գործերին տեսանելիություն հաղորդելն է, քանի որ միջազգային համարվող գործերն ավելի մեծ հավանականությամբ են արժանանում ՋԼՄ-ների ուշադրությանը: Այսպիսի ուշադրության պատճառով ՄԱԿ-ի Պայմանագրային մարմինների կողմից քննվող և վճռվող գործերը հաճախ հայտնի են դառնում և նախադեպ են սահմանում: Այսպիսով, ՄԱԿ-ի Պայմանագրային մարմիններին հայց ներկայացնելը հաճախ այնպիսի միջոց է, որին դիմում են իրավապաշտպանները և փաստաբանները *ռազմավարական դատավարություն* կոչվող մեխանիզմի շրջանակներում: Այս կերպ՝ ՄԱԿ-ի Պայմանագրային մարմնի կայացրած վճիռը օգտակար է դառնում նմանատիպ, սկզբնական գործի մասին բողոքի հիմքով կայացված վճռի շնորհիվ, ուստի հստակ է, որ ՄԱԿ-ի Պայմանագրային մարմինների կայացրած որոշումը դրական ներուժ ունի մարդու իրավունքների համակարգային խախտումներին վերջ դնելու հարցում:

Հայաստանի Հանրապետությունը, բարեբախտաբար, ոչ միայն վավերացրել է մարդու իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի մի շարք կոնվենցիաներ, այլ նաև ընդունել է, այսպես կոչված, անհատական բողոքների ընթացակարգերը, ինչը նշանակում է, որ ՀՀ քաղաքացիները հնարավորություն ունեն հայց ներկայացնել ՄԱԿ-ի Պայմանագրային մարմիններին և շարունակել արդարության որոնումը, եթե, իրենց կարծիքով, տուժել են մարդու իրավունքների խախտումներից և չեն կարողացել Հայաստանում հասնել դրական վճռի:

Այս ձեռնարկի նպատակն է գործնական գիտելիքներ տալ նրանց, ովքեր ցանկանում են ավելին իմանալ այն մասին, թե մարդու իրավունքների ենթադրյալ խախտումներին վերաբերող հայցերը ինչպես ներկայացնել ՄԱԿ-ի Պայմանագրային մարմիններին, որոնք են բողոք ներկայացնելու անհրաժեշտ քայլերը, և ինչպես ստանալ այլ օգտակար տեղեկություններ: Այս ձեռնարկը նաև ներկայացնում է կառավարությունների գործունեության պատշաճ աշխատակարգերը, որոնցով հնարավոր է ապահովել ՄԱԿ-ի Պայմանագրային մարմինների որոշումների իրականացումը:

Որպես ՄԱԿ-ի մարդու իրավունքների Գերագույն հանձնակատարի գրա-

սենյակի հարավկովկասյան տարածաշրջանում մարդու իրավունքների հարցերով գլխավոր խորհրդական՝ իմ շնորհակալությունն եմ հայտնում Եվրասիա համագործակցություն հիմնադրամին, այս ձեռնարկի ստեղծման գաղափարի հեղինակներին և կազմողներին՝ կատարած աշխատանքի համար: Հուսով եմ, որ այս հրապարակումն օգտակար կլինի ընթերցողներին և գործնականում կկիրառվի՝ ի նպաստ Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդման:



## Նիկոլայ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՀՀ մարդու իրավունքների  
ծրագրի ղեկավար

Մարդու իրավունքները համընդհանուր են: Դրանք չեն կարող մարդուց օտարվել: Նաև չի կարող մի իրավունք գործել կամ կիրառվել, իսկ մեկ այլը՝ ոչ. նրանք գործում են որպես ամբողջություն: Այնուամենայնիվ, ամբողջ աշխարհում մարդիկ, և հատկապես խոցելի խմբերը, բախվում են իրենց իրավունքների լիարժեք իրացման բազմաթիվ խոչընդոտների:

Միջազգային իրավունքը պարտավորեցնում է կառավարություններին՝ վերացնել իրավական, կառուցվածքային, սոցիալական, տնտեսական և այլ խոչընդոտները, որոնք խանգարում են բոլորի իրավահավասարությունն ապահովել և մարդու իրավունքներն ամբողջությամբ կիրառել: Մարդու իրավունքների օրակարգը միջազգային և ազգային մակարդակներում կիրարկելու համար ՄԱԿ-ը որդեգրել է իրավունքների պաշտպանության մի շարք մեխանիզմներ: Այդ մեխանիզմները ՄԱԿ-ի մարմինների հետ աշխատանքի լայն հնարավորություններ են ընձեռում ինչպես քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, այնպես էլ անհատներին: Թե՛ բողոքի անհատական ընթացակարգերի, թե՛ հատուկ ընթացակարգերի կիրարկումները կարող են դրական ազդեցություն ունենալ պետության ներսում մարդու իրավունքների վերաբերյալ տարվող քաղաքականության փոփոխությունների վրա:

ԵՀՀ-ն ձեր ուշադրությանն է ներկայացնում սույն ձեռնարկը, որում մանրամասն ներկայացված են ա) անհատական բողոքների՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի Հատուկ ընթացակարգերի և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների պայմանագրերով նախատեսված՝ Հայաստանում կիրարկելի ընթացակարգերը, բ) թե պրակտիկ ջատագովության ինչ հնարավորություններ են նախատեսված քաղաքացիական և իրավաբանների համար, գ)

թե ՄԱԿ-ի Պայմանագրային մարմիններին ներկայացված ղր դեպքերն են ընդունելի և որոնք՝ անընդունելի, և՛ ինչու, դ) անհատական դիմումների մեխանիզմը կիրառելու ռազմավարական մոտեցումները, ե) թե ղր դեպքում է հնարավոր ռազմավարական դատավարություններ իրականացնել, ինչպես նաև գործնական նշանակություն ունեցող այլ նյութեր: Ձեռնարկը հրապարակման են պատրաստել մի շարք բարձրակարգ մասնագետներ. իրավաբաններ Անահիտ Սիմոնյանը, Հասմիկ Պետրոսյանը, Նարինե Ալեքսանյանը, Խմբագիր Անժելա Ավագյանը: Մենք նրանց շնորհակալություն ենք հայտնում, որ նրանք չդադարեցրին իրենց աշխատանքն աշխարհը ճարակած համավարակի և Արցախի նկատմամբ սանձազերծած պատերազմի ընթացքում՝ անգամ: Շնորհակալ ենք նաև Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակին՝ այս աշխատանքին երկարատև և հետևողական աջակցության համար:

Լիահույս ենք, որ այս ձեռնարկը կօգնի քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, իրավաբաններին, Հայաստանի քաղաքացիներին՝ ավելի արդյունավետ դարձնել մարդու իրավունքների պաշտպանությունը մեր երկրում:

*ԵՀՀ մարդու իրավունքների թիմի անունից*



## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

<b>ՄԱԿ</b>	Միավորված ազգերի կազմակերպություն
<b>ՄԱԿ ԱԽ</b>	Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհուրդ
<b>ՄԱԿ ԳԱ</b>	Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեա
<b>ՄԱԿ ԳՔ</b>	Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղար
<b>ՄԱԿ ՄԽ</b>	Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների խորհուրդ
<b>ՄԱԿ ՄԻԳՀԳ</b>	Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների հարցերով Գերագույն հանձնակատարի գրասենյակ
<b>ՄԻՀՀ</b>	Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
<b>ՄԻԿ</b>	Մարդու իրավունքների կոմիտե
<b>ՊՄ</b>	Պայմանագրային մարմիններ
<b>ՀԸ</b>	Հատուկ ընթացակարգեր
<b>ԹՄ</b>	Թեմատիկ մանդատ
<b>ՊՎՄ</b>	Պետության վերաբերյալ մանդատ
<b>ՌԽՎԿ</b>	Ռասայական խտրականության վերացման կոմիտե
<b>ԿՆԽՎԿ</b>	Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե
<b>ՏՍՄԻԿ</b>	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե
<b>ԽԴԿ</b>	Խոշտանգումների դեմ կոմիտե
<b>ԵԻԿ</b>	Երեխաների իրավունքների հարցերով կոմիտե

**ՆԵՐԱԾԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ** .....12

Ինչու է պատրաստվել այս ձեռնարկը.....13

Ձեռնարկի կառուցվածքը, ուսումնասիրության մեթոդը.....15

**ԲԱԺԻՆ 1.** Միավորված ազգերի կազմակերպության պայմանագրային մարմինները. Առանձնահատկություններ 7 գործառույթներ ..... 18

1.1. Պայմանագրային մարմինների հակիրճ նկարագիր..... 19

1.2. Պետությունների կողմից պարբերական զեկույցների ներկայացում..... 26

1.3. Անհատական դիմումներ ..... 32

**ԲԱԺԻՆ 2.** Միավորված ազգերի կազմակերպության հատուկ ընթացակարգեր. Առանձնահատկություններ և գործառույթներ ..... 39

2.1. Հատուկ ընթացակարգերի մեխանիզմների ստեղծում և զարգացում ..... 40

2.2. Հատուկ ընթացակարգերի գործառույթներ և գործիքակազմ..... 46

**ԲԱԺԻՆ 3.** Աշխատանք պայմանագրային մարմինների և հատուկ ընթացակարգերի հետ՝ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ոչ պետական դերակատարների և մասնագիտական շրջանակների գործունեության խթանման համատեքստում..... 56

3.1. Պայմանագրային մարմինների հետ ոչ պետական դերակատարների աշխատանքի ձևաչափ և հիմնական տարբերակներ ..... 57

3.2. Հատուկ ընթացակարգերի հետ քաղաքացիական հասարակության դերակատարների աշխատանքի ձևաչափ և հիմնական տարբերակներ ..... 80

3.3. Աշխատանք Պայմանագրային մարմինների և Հատուկ ընթացակարգերի հետ. հայաստանյան փորձի դիտարկում ..... 86

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ** ..... 92

**ՀԱՎԵԼՎԱԾ 1.** Ընդհանուր խորհուրդներ Պայմանագրային մարմիններին ներկայացվող դիմումը կազմելու համար ..... 95

**ՀԱՎԵԼՎԱԾ 2.** Հատուկ ընթացակարգերի հետ աշխատանքներ նախաձեռնելու առավելություններն ու սահմանափակումները .... 99

**ՀԱՎԵԼՎԱԾ 3.** Պայմանագրային մարմինների և Հատուկ ընթացակարգերի միջև հիմնական գործառութային տարբերությունները ..... 101

**ՀԱՎԵԼՎԱԾ 4.** ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների և հատուկ ընթացակարգերի հետ աշխատանքների իրականացման վերաբերյալ կարիքների գնահատման հարցաշար .....104

**ABSTRACT** ..... 110

ՆԵՐԱԾԱԿԱՆ  
ԱԿՆԱՐԿ



## ԻՆՉՈՒ Է ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԱՅՍ ՁԵՌԱՐԿԸ

Միավորված ազգերի կազմակերպությունը 1948 թ. ընդունեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը,

որում ամրագրվեցին մարդու այն հիմնարար իրավունքներն ու ազատությունները, որոնց ապահովումը պետք է լիներ մարդու դեմ ուղղված ռճիրները, մարդու արժանապատվության նվաստացումը, ինչպես նաև մի խմբի կողմից մեկ այլ խմբի ստորադասումն ու չարաշահումը, սոցիալական-տնտեսական պայմանների անհավասարությունը կանխարգելելու երաշխիքը:

Ելնելով պետական իշխանությունների գործառույթների տրամաբանությունից՝ անդամ պետությունները պարտավորվում են ոչ միայն ձեռնպահ մնալ մարդու իրավունքների ոտնահարումից, այլ նաև մարդուն այլոց ոտնձգություններից պաշտպանելու և նրա համար ապահով կենսապայմաններ ստեղծելու միջոցներ ձեռնարկել:

Հռչակագրով ճանաչված իրավունքների և ազատությունների երաշխավորումն առավել արդյունավետ դարձնելու համար հաջորդ տասնամյակների ընթացքում ստեղծվեցին ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության հիմնական իրավական պայմանագրերը՝ դաշնագրերը, որոնցում տեղ գտան մարդու իրավունքների պաշտպանության տարբեր խնդիրների և ոլորտների առնչվող դրույթներ: Դաշնագրերը, վավերացվելով պետությունների կողմից, իրավական պարտադիր ուժ ունեցող փաստաթղթեր են, որոնցով պետք է ուղղորդվի յուրաքանչյուր անդամ պետության կառավարություն՝ հիրականացումն մարդու իրավունքների պաշտպանության, իրացման և խթանման իր գործառույթների:

Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր դաշնագրի դրույթների՝ անդամ պետությունների կողմից պահպանումը և կատարումը մշտադիտարկելու և խրախուսելու, ինչպես նաև դրանց առնչությամբ մեկնաբանություններ և պարզաբանումներ տալու նպատակով ձևավորվեցին համապատասխան **Պայմանագրային մարմինները**<sup>1</sup> (այսուհետ՝ նաև ՊՄ): Այսպիսով, Պայմանագրային մարմինները ՄԱԿ-ի՝ ՄԻՀՀ-ում ամրագրված սկզբունքների պահպանումն ապահովելու նպատակով ձևավորված առանցքային մեխանիզմներից են:

Ժամանակի ընթացքում, սակայն, ուրվագծվեց կարիքը՝ ունենալու աշխարհի տարբեր անկյուններում մարդու իրավունքների իրադարձութ-

1. Պայմանագրային մարմինների մասին լրացուցիչ տեղեկությունները հասանելի են այստեղ. <https://www.ohchr.org/EN/HRBodies/Pages/TreatyBodies.aspx>

յունների ու ոտնահարումների բացահայտման և ահազանգման մեխանիզմ, որի գործառույթները կախված չեն այն հանգամանքից, թե արդյոք պետությունը վավերացրել է այս կամ այն կոնվենցիան: Որպես նման մեխանիզմ՝ 1967 թ. ձևավորվեցին **Հատուկ ընթացակարգերը** (այսուհետ՝ նաև ՀԸ), որոնք մարդու իրավունքների պաշտպանության յուրօրինակ և առաջադեմ մեխանիզմ են: Դրանցում ընդգրկված են անկախ փորձագետներ կամ փորձագիտական խմբեր, որոնք կոչված են աշխարհի տարբեր անկյուններում մշտադիտարկելու և բացահայտելու, միջազգայնորեն տեսանելի դարձնելու մարդու իրավունքների ոտնահարման փաստերն ու իրադարձությունները, ինչպես նաև վերահսկելու մարդու իրավունքների իրավիճակը և ապահովելու մարդու իրավունքների պաշտպանությունը:

Թե՛ Պայմանագրային մարմինների և թե՛ Հատուկ ընթացակարգերի աշխատանքի արդյունավետությունը մեծապես կախված է **քաղաքացիական հասարակության դերակատարների ակտիվությունից**: Քաղաքացիական հասարակության դերակատարների՝ հասարակական կազմակերպությունների, փաստաբանների, ակտիվիստների, անհատ փորձագետների համագործակցությունը Պայմանագրային մարմինների և Հատուկ ընթացակարգերի հետ՝ դատավարական, հետազոտական և ադվոկացիոն բնույթի աշխատանքների շրջանակներում, խթանիչ մեխանիզմ է, որը հնարավորություն է տալիս ՄԱԿ-ի այս մեխանիզմներին՝ առավել նպատակային օգտագործել իրենց լծակներն ու ռեսուրսները՝ պետությունների կողմից մարդու իրավունքները հարգելու, ստանձնած իրավական պարտավորությունները կատարելու համար:

Տիրապետելով Պայմանագրային մարմինների և Հատուկ ընթացակարգերի հետ աշխատանքի համար անհրաժեշտ գիտելիքների, գործիքների և հմտությունների, ոչ պետական դերակատարները կարող են ընդլայնել սեփական ազդեցությունը իրենց երկրում կամ այլուր տեղի ունեցող գործընթացների վրա, բարձրաձայնել իրավունքի պաշտպանության առավել սուր և զգայուն խնդիրները:

Նման գիտելիքի ձևավորմանը, գործիքների և հմտությունների զարգացմանն է միտված այս ձեռնարկը: Կատարված ուսումնասիրության արդյունքում ձեռնարկում մանրամասն անդրադարձ է կատարվում Պայմանագրային մարմինների և Հատուկ ընթացակարգերի աշխատանքների տրամաբանությանը և պրակտիկաներին, ներկայացվում են այդ մեխանիզմների հետ ոչ պետական դերակատարների ներգրավման հնարավորություններն ու եղանակները, քննարկվում է նման ներգրավման շրջանակներում ծավալված տեղական և միջազգային փորձը:

## ՁԵՌՆԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԸ

Իրականացված ուսումնասիրության նպատակն է ներկայացնել Պայմանագրային մարմինների և Հատուկ ընթացակարգերի գործառույթային

շրջանակը, դրանց հետ աշխատելու և համագործակցելու հիմնական գործիքներն ու մարտավարությունը, ոչ պետական դերակատարների դերը ՊՄ-ների և ՀԸ-ների հետ աշխատանքում, նման համագործակցության միջազգային և տեղական փորձը, հիմնական եզրակացությունները՝ ՊՄ-ների և ՀԸ-ների հետ աշխատանքի կազմակերպման, արդյունավետության, ինչպես նաև հնարավոր սահմանափակումների տեսանկյունից:

Ձեռնարկը նախատեսված է **մարդու իրավունքների հիմնախնդիրներով զբաղվող ոչ պետական դերակատարների և փորձագիտական շրջանակների**, մասնավորապես՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, իրավաբանների և փաստաբանների, իրավապաշտպանների, ակտիվիստների համար:

Կատարված ուսումնասիրությունն ամփոփվել է ձեռնարկի երեք բաժնում:

**«Միավորված ազգերի կազմակերպության պայմանագրային մարմինները. առանձնահատկություններ և գործառույթներ» վերտառությամբ բաժին 1-ում** ներկայացված է ՊՄ-ների ձևավորման և գործառույթային առանձնահատկությունների վերաբերյալ համառոտ տեղեկություն: Բաժնում տրված են Պայմանագրային մարմինների հակիրճ նկարագրերը, քննարկվում են Պայմանագրային մարմիններին պետությունների կողմից զեկույցների ներկայացման և անհատական դիմումների մեխանիզմները:

**«Միավորված ազգերի կազմակերպության Հատուկ ընթացակարգերը. առանձնահատկություններ և գործառույթներ» վերտառությամբ բաժին 2-ում** ներկայացված է ՀԸ-ների մեխանիզմի ստեղծումը, համառոտ քննարկվում են մանդատակիրների գործառույթներն ու գործիքակազմը, մասնավորապես՝ կոմունիկացիաների պատրաստումն ու ներկայացումը, պաշտոնական այցերի իրականացումը և զեկույցների ներկայացումը Մարդու իրավունքների կոմիտեին և Գլխավոր ասամբլեային:

**«Աշխատանք Պայմանագրային մարմինների և Հատուկ ընթացակարգերի հետ՝ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ոչ պետական դերակատարների և մասնագիտական շրջանակների գործունեության խթանման համատեքստում» վերտառությամբ բա-**

**ժին 3-ը** անդրադառնում է ՊՄ-ների և ՀԸ-ների հետ աշխատանքների իրականացման գործիքակազմին, համագործակցության հնարավորություններին և մեխանիզմներին, որոնք կարող են օգտագործվել քաղաքացիական հասարակության դերակատարների կողմից ներպետական մակարդակում մարդու իրավունքների պաշտպանությունը խթանելու նպատակով: Այս բաժնի երրորդ ենթաբաժնում քննարկվում են ՊՄ-ների և ՀԸ-ների հետ աշխատանքի հայաստանյան փորձն ու առանձնահատկությունները, արվում են առաջարկություններ թիրախային դերակատարների կողմից մեխանիզմների առավել արդյունավետ կիրառման համատեքստում:

Ուսումնասիրությունն իրականացվել է վերլուծական հետազոտության մեթոդով: Ուսումնասիրվել են Պայմանագրային մարմինների և Հատուկ ընթացակարգերի գործառույթների վերաբերյալ հիմնական իրավական փաստաթղթերը, Պայմանագրային մարմինների և Հատուկ ընթացակարգերի հետ աշխատանքն ու համագործակցությունը քննարկող ձեռնարկները:

Ուսումնասիրության հիմնական աղբյուրներ են հանդիսացել ՄԱԿ-ի մարդու իրավունքների հիմնական կոնվենցիաները, Պայմանագրային մարմինների կողմից հրապարակված ընդհանուր մեկնաբանություններն ու ընդհանուր դիտարկումները, Պայմանագրային մարմինների կողմից քննված նախադեպային գործերը, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով Գերագույն հանձնակատարի գրասենյակի պաշտոնական կայքէջը<sup>2</sup> և կայքէջի հայաստանյան բաժինը<sup>3</sup>, Հատուկ ընթացակարգերի վերաբերյալ Գլխավոր հանձնակատարի գրասենյակի ձեռնարկը<sup>4</sup>, «ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերի մեխանիզմի պատմությունը. ծագում, զարգացում, ռեֆորմներ» Մ. Լիմոնի և Հ. Փավերի աշխատությունը<sup>5</sup>, Հատուկ ընթացակարգերի վերաբերյալ Մարդու իրավունքների միջազգային ծառայության կողմից պատրաստված ձեռնարկը<sup>6</sup>, Հատուկ ընթացակարգերի վերաբերյալ Կոլումբիայի հա-

2. Report: Online hate increasing against minorities, says expert: <https://www.ohchr.org/EN/pages/home.aspx>

3. United Nations Human Rights office of the high commissioner: Countries enacaregion: <https://www.ohchr.org/en/countries/enacaregion/pages/amindex.aspx>

4. OHCHR handbook: Special procedures: [www.ohchr.org/Documents/Publications/NgoHandbook/ngohandbook6.pdf](http://www.ohchr.org/Documents/Publications/NgoHandbook/ngohandbook6.pdf)

5. History of the United Nations special procedures mechanis: Origins, evolution and reform: [https://www.universal-rights.org/wp-content/uploads/2015/02/URG\\_HUNSP\\_28.01.2015\\_spread.pdf](https://www.universal-rights.org/wp-content/uploads/2015/02/URG_HUNSP_28.01.2015_spread.pdf)

6. A practical guide to the un special: [https://www.ishr.ch/sites/default/files/documents/a\\_practical\\_guide\\_to\\_the\\_un\\_special\\_procedures\\_final.pdf](https://www.ishr.ch/sites/default/files/documents/a_practical_guide_to_the_un_special_procedures_final.pdf)



մալսարանի իրավունքի դպրոցի պատրաստած ձեռնարկը<sup>7</sup>:

Ուսումնասիրության շրջանակներում իբրև հավելյալ՝ աջակցող մեթոդ է կիրառվել առցանց հարցումը: Նախապես մշակված հարցաշարը տարածվել է ուսումնասիրության թիրախային լսարանի՝ իրավաբանների, փաստաբանների, ԲՀԿ-ների, իրավապաշտպանների շրջանում: Հարցման արդյունքում ստացված տվյալներն ամփոփված են 3-րդ բաժնի 3-րդ ենթաբաժնում:

Ձեռնարկում ներառված է նաև չորս հավելված: **Հավելված 1-ում** ներկայացված են ընդհանուր խորհուրդներ Պայմանագրային մարմիններին ներկայացվող դիմումը կազմելու համար, **Հավելված 2-ում** ներկայացված են Հատուկ ընթացակարգերի հետ աշխատանքներ նախաձեռնելու առավելություններն ու թերությունները, **Հավելված 3-ում** ներկայացված են Պայմանագրային մարմինների և Հատուկ ընթացակարգերի միջև հիմնական գործառության տարբերությունները: **Հավելված 4-ում** ներկայացվում է ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների և Հատուկ ընթացակարգերի հետ աշխատանքների իրականացման վերաբերյալ կարիքների գնահատման հարցաշարը, որն օգտագործվել է սույն ուսումնասիրության շրջանակներում:

---

7. Engaging UN special procedures to advance human rights at home: a guide for US advocates: [https://web.law.columbia.edu/sites/default/files/microsites/human-rights-institute/files/special\\_rapporteurs\\_report\\_final.pdf](https://web.law.columbia.edu/sites/default/files/microsites/human-rights-institute/files/special_rapporteurs_report_final.pdf)

ԲԱԿԺԻՆ

1



**ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԸ.  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ**

Այս բաժնում ներկայացված են ՄԱԿ-ի պայմանագրային մարմինները՝ իրենց մանդատների և գործառույթային առանձնահատակությունների տեսանկյունից:

Բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝

- 1.1. Պայմանագրային մարմինների հակիրճ նկարագիր.
- 1.2. Պետությունների կողմից պարբերական զեկույցների ներկայացում.
- 1.3. Անհատական դիմումներ:

### **1.1. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐ**

ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության համակարգը բաղկացած է 9 հիմնական դաշնագրերից, որոնցում սահմանվում են մարդու իրավունքների միջազգային առանցքային սկզբունքները, նորմերը և դրույթները:

Մասնավորապես, 1965 թ. ստեղծվեց Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան, 1966 թ. ստեղծվեցին Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրերը, 1979 թ. ստեղծվեց Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան, 1984 թ. ստեղծվեց Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ կոնվենցիան, 1989 թ. ստեղծվեց Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան, 1990 թ. ստեղծվեց Բոլոր ներգաղթյալ աշխատողների և նրանց ընտանիքի անդամների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան, 2006 թ. ստեղծվեցին Բոլոր անձանց հարկադիր անհետացումից պաշտպանելու մասին և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիաները<sup>8</sup>:

Վերը նշված դաշնագրերի և կոնվենցիաների ընդունման և դրանց կարգավորման շրջանակի տարանջատման նպատակով մարդու իրավունքների պաշտպանության նկատմամբ առավել հասցեավորված և թիրա-

8. Միավորված ազգերի կազմակերպության հիմնական միջազգային կոնվենցիաները և դաշնագրերը հասանելի են այստեղ <https://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/CoreInstruments.aspx>

խային վերահսկողություն իրականացնելու գործուն մեխանիզմների ներդրումն էր: Անդամ պետությունների կողմից միջազգային այս պայմանագրերի դրույթների պահպանումը և կատարումը մշտադիտարկելու և խրախուսելու, ինչպես նաև դրանց առնչությամբ մեկնաբանություններ և պարզաբանումներ տալու նպատակով ձևավորվեցին նաև համապատասխան Պայմանագրային մարմինները:

Պետությունները, միանալով միջազգային պայմանագրերին, պարտավորվում են Պայմանագրային մարմիններին պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել իրենց իրավասության ներքո գտնվող տարածքում մարդու իրավունքների վիճակի և ձեռնարկվող քայլերի վերաբերյալ: Հարկ է նշել, որ Պայմանագրային մարմինների իրավասությունը գործում է այն պետությունների նկատմամբ, որոնք վավերացրել են համապատասխան միջազգային պայմանագիրը՝ ընդունելով այդ մարմինների իրավասությունը: Պայմանագրային մարմինները կոմիտեներ են, որոնք կազմված են անկախ փորձագետներից՝ ընտրված անդամ պետությունների կողմից: Կոմիտեների անդամների քանակը տարբեր է: Ներկայումս գործում է տասը կոմիտե, որոնք մշտադիտարկում և վերահսկում են ինը պայմանագրերի և մեկ կամ ընտիր արձանագրության դրույթների կատարումը անդամ պետությունների կողմից:

Միջազգային պայմանագրերի դրույթների կատարման մշտադիտարկումը գործնականում արդյունավետ կերպով իրականացնելու համար կոմիտեներն ունեն հետևյալ գործառույթները.

- Անդամ պետությունների կողմից ներկայացված պարբերական զեկույցների ուսումնասիրություն:
- Անհատական դիմումների քննություն:
- Հետաքննություն անդամ պետություններում մարդու իրավունքների կոպիտ ոտնահարումների առնչությամբ՝ վկայության առկայության դեպքում:
- Ընդհանուր մեկնաբանությունների հրապարակում:

*Ռասայական խտրականության վերացման կոմիտեն (ՌԻՄԿ)*<sup>9</sup> կոչված է հետևելու Ռասայական խտրականության վերացման մասին միջազգային կոնվենցիայի դրույթների կատարմանը: 1970 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ժողովի ընթացքում անդամ պետությունների հայտնած

9. ՌԻՄԿ-ն բաղկացած է 18 անդամից, իրականացնում է տարեկան հանդիպումների երեք շրջափուլ՝ յուրաքանչյուրը 3-4 շաբաթ տևողությամբ: Լրացուցիչ տեղեկատվությունը հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/en/hrbodies/cerd/pages/cerdindex.aspx>

մտահոգությունն առ այն, որ կոնվենցիայի իրականացման ապահովումն արդյունավետ չի լինի առանց հստակ մեխանիզմների, հանգեցրեց այս կոմիտեի ձևավորմանը, ինչը նախադեպ հանդիսացավ մյուս կոմիտեների ստեղծման համար:

Պետությունները պարտավորվում են կոնվենցիայի ակցեսիայից հետո մեկ տարվա ընթացքում նախնական զեկույց ներկայացնել կոմիտեին, իսկ հերթական զեկույցները պետք է ներկայացվեն յուրաքանչյուր երկու տարին մեկ: Բացի պետությունների զեկույցների ընդունումից՝ կոմիտեն իրականացնում է ևս երեք գործառույթ՝ նախազգուշացման ընթացակարգ, միջպետական հայցերի քննություն, անհատական դիմումների քննություն: Կոմիտեն հրապարակում է նաև ընդհանուր մեկնաբանություններ՝ մարդու իրավունքների վերաբերյալ:

*Մարդու իրավունքների կոմիտեն (ՄԻԿ)*<sup>10</sup> կոչված է իրականացնելու Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի դրույթների կատարման մշտադիտարկում: ՄԻԿ-ը ձևավորվել է 1979 թ.:

Պետությունները պարտավորվում են դաշնագրին միանալուց հետո մեկ տարվա ընթացքում նախնական զեկույց ներկայացնել կոմիտեին, իսկ հերթական զեկույցները պետք է ներկայացվեն յուրաքանչյուր չորս տարին մեկ: Բացի պետությունների կողմից զեկույցների ընդունումից՝ կոմիտեն իրականացնում է միջպետական հայցերի և անհատական դիմումների քննություն:

*Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (ԿՆԽՎԿ)*<sup>11</sup> ստեղծվել է 1982 թ. և կոչված է իրականացնելու Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի դրույթների կիրառման մշտադիտարկում: Բացի պետությունների կողմից ներկայացված զեկույցների ընդունումից՝ կոմիտեն իրականացնում է նաև անհատական դիմումների քննություն, ինչպես նաև կանանց իրավունքների կոպիտ խախտումների հետաքննություն՝ տեղեկության առկայության դեպքում:

*Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն*

10. ՄԻԿ-ը բաղկացած է 18 անդամից, իրականացնում է տարեկան հանդիպումների երեք շրջափուլ՝ յուրաքանչյուրը չորս շաբաթ տևողությամբ: Լրացուցիչ տեղեկատվությունը հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/EN/HRBodies/CCPR/Pages/CCPRIndex.aspx>

11. ԿՆԽՎԿ-ն բաղկացած է 23 անդամից, իրականացնում է տարեկան հանդիպումների երեք շրջափուլ՝ յուրաքանչյուրը երեք շաբաթ տևողությամբ: Լրացուցիչ տեղեկատվությունը հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/EN/HRBodies/CEDAW/Pages/CEDAWIndex.aspx>

(SUՄԻԿ)<sup>12</sup>, որ ստեղծվել է 1985 թ., կոչված է իրականացնելու Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրի դրույթների կատարման մշտադիտարկում: SUՄԻԿ-ը, ի տարբերություն մյուս կոմիտեների, ստեղծվել է ոչ թե դաշնագրի ուժով, այլ ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից՝ որպես պետությունների ներկայացրած զեկույցները քննող մարմին:<sup>13</sup> Պետությունները պարտավորվում են դաշնագրի ակցեսիայից հետո երկու տարվա ընթացքում նախնական զեկույց ներկայացնել կոմիտեին, ինչից հետո հերթական զեկույցները պետք է ներկայացվեն յուրաքանչյուր հինգ տարին մեկ: Բացի պետությունների ներկայացրած զեկույցների ընդունումից՝ SUՄԻԿ-ը իրականացնում է նաև միջպետական հայցերի քննություն, անհատական դիմումների քննություն, ինչպես նաև սոցիալ-տնտեսական իրավունքների կոպիտ խախտումների հետաքննություն՝ վկայության առկայության դեպքում:

*Խոշտանգումների դեմ կոմիտեն* (ԽԴԿ)<sup>14</sup>, որն ստեղծվել է 1987 թ., կոչված է իրականացնելու Խոշտանգումների, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ միջազգային կոնվենցիայի դրույթների կիրառման մշտադիտարկում: Կոմիտեն իրականացնում է նաև անհատական դիմումների քննություն, միջպետական հայցերի քննություն, ինչպես նաև կոնվենցիայի դրույթների կոպիտ խախտումների հետաքննություն՝ վկայության առկայության դեպքում: Պետությունները պարտավորվում են կոնվենցիայի ակցեսիայից հետո մեկ տարվա ընթացքում նախնական զեկույց ներկայացնել կոմիտեին, իսկ հերթական զեկույցները պետք է ներկայացվեն յուրաքանչյուր չորս տարին մեկ:

*Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն*<sup>15</sup> ստեղծվել է 2006 թ.: Այս ենթակոմիտեի գործառույթն է իրականացնել այցելություններ ազատագրված վայրեր և ներկայացնել դրանցում տիրող իրավիճակին վերաբերող զեկույցներ: Կոմիտեն նաև իրավասու է խորհրդատվական աջակցություն ցուցաբերել անդամ պետություններում խոշտանգումների

12. SUՄԻԿ-ը կազմված է 18 անկախ փորձագետներից, իրականացնում է տարեկան հանդիպումների երկու շրջափուլ՝ չորս շաբաթ տևողությամբ: Լրացուցիչ տեղեկատվությունը հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/EN/HRBodies/CESCR/Pages/CESCRIndex.aspx>

13. SUՄԻԿ-ը ստեղծվել է ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի 1985/17 բանաձևի ուժով

14. ԽԴԿ-ն բաղկացած է տասը անկախ փորձագետներից, իրականացնում է տարեկան հանդիպումների երկու շրջափուլ՝ չորս շաբաթ տևողությամբ: Լրացուցիչ տեղեկատվությունը հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/EN/HRBodies/CAT/Pages/CATIndex.aspx>

15. Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն կազմված է 25 անկախ փորձագետներից, ովքեր ընտրվում են չորս տարի ժամկետով. Լրացուցիչ տեղեկատվությունը հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/EN/HRBodies/OPCAT/Pages/OPCATIndex.aspx>

կանխարգելիչ ազգային մարմինների ձևավորմանը և գործունեությանը<sup>16</sup>:

*Երեխաների իրավունքների հարցերով կոմիտեն* (ԵԻԿ)<sup>17</sup> ստեղծվել է 1990 թ. և կոչված է իրականացնելու Երեխաների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիայի դրույթների կիրառման մշտադիտարկում: Կոմիտեն նաև հետևում է կոնվենցիայի երկու՝ Երեխաներին զինված հակամարտություններում ներգրավելու և Երեխաների վաճառքի և պոռնկագրության վերաբերյալ կամընտիր արձանագրությունների դրույթների կատարմանը: Պետությունները պարտավորվում են կոնվենցիայի ակցեսիայից հետո երկու տարվա ընթացքում նախնական զեկույց ներկայացնել կոմիտեին, իսկ հերթական զեկույցները պետք է ներկայացվեն յուրաքանչյուր հինգ տարին մեկ:

*Բոլոր աշխատող միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության կոմիտեն*<sup>18</sup> ստեղծվել է 2004 թ. և կոչված է իրականացնելու Բոլոր աշխատող միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիայի դրույթների կիրառման մշտադիտարկում: Պետությունները պարտավորվում են կոնվենցիայի ակցեսիայից հետո մեկ տարվա ընթացքում նախնական զեկույց ներկայացնել կոմիտեին, իսկ հերթական զեկույցները պետք է ներկայացվեն յուրաքանչյուր հինգ տարին մեկ: Կոմիտեն նաև քննում է անհատական դիմումներ մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ:

*Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն*<sup>19</sup> կոչված է իրականացնելու Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի դրույթների կիրառման մշտադիտարկում: Այն իր գործունեությունն սկսել է 2009 թ.: Պետությունները պարտավորվում են կոնվենցիայի ակցեսիայից հետո երկու տարվա ըն-

16. Խոշտանգումների, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ միջազգային կոնվենցիայի կամընտիր արձանագրության պահանջով անդամ պետությունները պետք է ձևավորեն խոշտանգումների կանխարգելման ազգային մարմիններ. Լրացուցիչ տեղեկությունը հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/EN/HRBodies/OPCAT/Pages/NationalPreventiveMechanisms.aspx>

17. ԵԻԿ-ը կազմված է 18 անկախ փորձագետներից, իրականացնում է տարեկան հանդիպումների երեք շրջափուլ՝ չորս շաբաթ տևողությամբ. Լրացուցիչ տեղեկատվությունը հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/EN/HRBodies/CRC/Pages/CRCIndex.aspx>

18. Կոմիտեն բաղկացած է 14 անկախ փորձագետներից և իրականացնում է տարեկան հանդիպումների երկու շրջափուլ: Լրացուցիչ տեղեկատվությունը հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/EN/HRBodies/CMW/Pages/CMWIndex.aspx>

19. Կոմիտեն բաղկացած է 18 անկախ փորձագետներից և իրականացնում է տարեկան հանդիպումների երկու շրջափուլ: Լրացուցիչ տեղեկատվությունը հասանելի է այստեղ. [www.ohchr.org/EN/HRBodies/CRPD/Pages/CRPDIndex.aspx](http://www.ohchr.org/EN/HRBodies/CRPD/Pages/CRPDIndex.aspx)

թացքում նախնական զեկույց ներկայացնել կոմիտեին, իսկ հերթական զեկույցները պետք է ներկայացվեն յուրաքանչյուր չորս տարին մեկ: Բացի դրանից՝ Կոմիտեն քննում է իրավախախտումների վերաբերյալ անհատական դիմումները և իրականացնում է հետաքննություններ կոպիտ իրավախախտումների վերաբերյալ տեղեկությունների դեպքում:

*Բռնությամբ անհետացման հարցերով կոմիտեն*<sup>20</sup> կոչված է իրականացնելու Բռնությամբ անհետացած անձանց պաշտպանության մասին կոնվենցիայի դրույթների կիրառման մշտադիտարկում: Պետությունները պարտավորվում են կոնվենցիայի վավերացումից հետո երկու տարվա ընթացքում կոմիտեին ներկայացնել երկրում տիրող իրավիճակի վերաբերյալ զեկույց: Կոմիտեն նաև իրավասու է քննել անհատական դիմումներ և համապատասխան վկայության առկայության դեպքում իրականացնել հետաքննություն մարդու իրավունքների կոպիտ ոտնահարումների վերաբերյալ:

Կոմիտեների անդամ հանդիսացող անկախ փորձագետներն ընտրվում են անդամ պետությունների կողմից, հաշվետու են կոմիտեներին, որոնց անդամակցում են: Նրանց կողմնակալության վերաբերյալ եզրահանգում կարող է կատարել միայն համապատասխան կոմիտեն: Փորձագետների անկախությունն ու անկողմնակալությունը ապահովելու նպատակով կարող են հաշվի առնվել նրանց նախկին աշխատավայրը, գործունեությունը, բարեկամական կապերը, սակայն որևէ անձնական կամ սոցիալական հատկանիշ չպետք է պատճառ դառնա նրանց նկատմամբ խտրական մոտեցում դրսևորելու համար<sup>21</sup>:

Պետությունների կողմից ներկայացվող պարբերական զեկույցների ուսումնասիրության դեպքում, եթե առկա է կոմիտեի անդամներից որևէ մեկի կողմնակալության վերաբերյալ եզրակացություն, ապա նա չի մասնակցում դրա քննարկումներին, պետության հետ զեկույցի շուրջ երկխոսությանը և եզրակացությունների մշակմանը, ինչպես նաև իրավունք չունի մասնակցելու այդ առնչությամբ ոչ հանրային քննարկումներին, խորհրդակցություններին կամ հանդիպումներին<sup>22</sup>:

Անհատական դիմումների քննության դեպքում կոմիտեի անդամը կարող է համարվել կողմնակալ, եթե ազգությամբ այն պետությունից է, որի դեմ բերվել է բողոքը, կամ ունի այլ իրական կամ ենթադրյալ անձնական

20. Կոմիտեն բաղկացած է 10 անկախ փորձագետներից, իրականացնում է տարեկան հանդիպումների երկու շրջափուլ: Լրացուցիչ տեղեկատվությունը հասանելի է այստեղ. [www.ohchr.org/EN/HRBodies/ced/Pages/CEDIndex.aspx](http://www.ohchr.org/EN/HRBodies/ced/Pages/CEDIndex.aspx)

21. 2012թ-ին կոմիտեների կողմից կազմվել է դրանց անդամների անկախության ապահովման ուղեկիշներ. (Addis Ababa guidelines), HRI/MC/2012

22. Տե՛ս նախորդ հղումը. Հոդված 9



կամ մասնագիտական շահագրգռություն գործի ելքով, եթե նախկինում ներգրավված է եղել նույն դեպքի քննությանը այլ մարմնի կազմում<sup>23</sup>: Կոմիտեներից յուրաքանչյուրը, այնուամենայնիվ, ելնելով անդամների մանդատի շրջանակից և բնույթից, առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերում անդամների ընտրության չափորոշիչներին: Անդամները կարող են ընտրվել ինչպես ակադեմիական, պետությունների գործադիր, դատական և օրենսդիր մարմինների, այնպես էլ մասնավոր ոլորտից, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից: Որոշ քննադատներ համարում են, որ կոմիտեների կազմավորման ոչ միատեսակ չափանիշների հետևանք են դրանց կողմից հարցերին ոչ միատեսակ մեկնաբանությունները, իսկ երբեմն՝ հակասական եզրակացությունները:<sup>24</sup> Մինևույն ժամանակ, ի հակադրություն այս մտահոգության, կոմիտեների անդամների մասնագիտական բազմազանության արդյունքում խնդիրները բազմակողմանի վերլուծության և գնահատականի են արժանանում, ինչն ավելի արդյունավետ է դարձնում դրանց քննությունը:

ՄԱԿ-ի պայմանագրային մարմինները պարբերաբար հրապարակում են մեկնաբանություններ դաշնագրերի դրույթների կիրառման, իրենց աշխատանքի մեթոդների վերաբերյալ՝ անդամ պետությունների համար դրանք ավելի կանխատեսելի և որոշակի դարձնելու նպատակով<sup>25</sup>:

Անդամ պետություններում մարդու իրավունքների իրավիճակի մշտադիտարկման գործառույթի շրջանակներում կոմիտեներին զեկույցներ կարող են ներկայացնել ոչ միայն պետությունները, այլ նաև հասարակական կազմակերպությունները և մարդու իրավունքների պաշտպանության ազգային ինստիտուտները, ինչը թույլ է տալիս իրավիճակն ուսումնասիրել բազմակողմանիորեն՝ լսելով կողմերին և շահառուներին:

23. Տե՛ս նախորդ հղումը. Հոդված 10

24. Ռոլանդ Բենք, «Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի դեմ պայքարի միջազգային ջանքեր. արդյոք նոր մեխանիզմները բարելավել են պաշտպանությունը», հասանելի է այստեղ. <http://www.ejil.org/pdfs/8/4/788.pdf>

25. Մարդու իրավունքների Պայմանագրային մարմինների կողմից հրապարակված ընդհանուր մեկնաբանությունները հասանելի են այստեղ. [https://undocs.org/en/HRI/GEN/1/Rev.9%20\(Vol.%20I\)](https://undocs.org/en/HRI/GEN/1/Rev.9%20(Vol.%20I)) , [https://undocs.org/en/HRI/GEN/1/REV.9\(VOL.II\)](https://undocs.org/en/HRI/GEN/1/REV.9(VOL.II))

## 1.2. ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Միացյալ ազգերի կազմակերպության դաշնագրերին միանալուց հետո պետությունները պարտավորվում են ներկայացնել զեկույցներ այն միջոցառումների վերաբերյալ, որոնք ձեռնարկվել են դաշնագրերի դրույթների տեղայնացման և կիրառման ուղղությամբ՝ մարդու իրավունքների պաշտպանությունը պատշաճ ապահովելու նպատակով:<sup>26</sup> Այդ միջոցները կարող են լինել ինչպես օրենսդրական և դատախարակական, այնպես էլ այլ ոլորտներում: ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության դաշնագրերը վավերացնելուց հետո անդամ պետությունների՝ մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ պարբերական զեկույցներ ներկայացնելու պարտավորությունը այն մեխանիզմներից է, որոնց միջոցով պայմանագրային մարմինները՝ կոմիտեները, մշտադիտարկում են դաշնագրերի դրույթների արդյունավետ կիրառումը:

Դաշնագրերին միանալուց (ակցեսիա կամ վավերացում) հետո պետությունները պարտավորվում են ներկայացնել առաջնային զեկույցներ այդ պահին առկա իրավիճակի վերաբերյալ, ինչի քննության արդյունքում կոմիտեները պետությանն են ներկայացնում առաջարկներ՝ կապված այն քայլերի հետ, որոնք վերջինս պետք է իրականացնի դաշնագրի կիրառման ուղղությամբ:

Այնուհետև պետությունները պարտավորվում են ներկայացնել պարբերական զեկույցներ: Զեկույցների միջոցով կոմիտեները հնարավորություն են ունենում գնահատել պետություններում առկա մարդու իրավունքների խնդիրները, դաշնագրերի կատարման ընթացքը, ձեռքբերումներն ու թերացումները, ինչի արդյունքում պետություններին ներկայացվում են նոր առաջարկներ մարդու իրավունքների իրավիճակի բարելավման ուղղությամբ. այս բանաձևն է ընկած կոմիտեների զեկույցման ընթացակարգի տրամաբանության հիմքում:<sup>27</sup>

Պետության կողմից զեկույցում ներառվող տեղեկատվության նկատմամբ կոմիտեներն ունեն տարբեր պահանջներ. Մի մասը պահանջում է ներկայացնել տեղեկատվություն նախապես արված հարցադրումների հիման վրա, մի մասը՝ դաշնագրի հոդվածների առնչությամբ, երրորդները

26. Զեկույց ներկայացնելու պարտավորությունը սահմանված է դաշնագրերի համապատասխան հոդվածներով, ինչպես նաև ընթացակարգային կանոններով. օրինակ՝ ՔՔԻԴ՝ հոդված 40.1, ՏՄՄԿ՝ հոդված 17.1, ԿԽՎԿ՝ 18.1, ՌԽՎԿ՝ հոդված 9.1, ԽԴԿ՝ հոդված 19.1, ԵԻԿ՝ հոդված 44.10:

27. Ազատության ընդլայնում՝ ուղղված զարգացմանը, անվտանգությանն ու մարդու իրավունքներին՝ բոլորի համար. Գլխավոր քարտուղարի զեկույց A/59/2005/Add.3, հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/Documents/Publications/A.59.2005.Add.3.pdf>

պետության հայեցողությանն են թողնում տեղեկատվության շրջանակը: Օրինակ՝ Խոշտանգումների դեմ կոմիտեն հարցման ենթակա թեմաների ցանկը նախապես տրամադրում է պետությանը, և վերջինս պարտավորվում է զեկույց ներկայացնել միայն տվյալ հարցերի շրջանակում: Այս մոտեցման նպատակն է կանխորոշել զեկույցի շրջանակը և ուղղությունը՝ կանխելով պետության կողմից լրացուցիչ կամ ոչ ամբողջական տեղեկատվության տրամադրումը:

Զեկույցների պատրաստման ընթացքում պետությունը պետք է կազմակերպի հանրային քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ՝ լսելու նրանց դիտարկումներն ու առաջարկները: Հանրային քննարկումներին, մասնավորապես, պետք է ներգրավվեն հասարակական կազմակերպությունները, որոնք զբաղվում են մարդու իրավունքների պաշտպանությամբ և իրավիճակի մշտադիտարկմամբ և կարող են պետությանն առաջարկել զեկույցում որոշակի տեղեկատվություն ներառել այս կամ այն հարցի վերաբերյալ: Հասարակական կազմակերպությունների առաջարկները կարող են ընդունվել կամ մերժվել պետության կողմից, ինչը, սակայն, չի խոչընդոտում կազմակերպություններին տեղեկատվությունն ուղղակիորեն ներկայացնել ՄԱԿ-ի պայմանագրային մարմիններին:

Նախքան զեկույցների քննությունը կոմիտենները ձևավորում են աշխատանքային խմբեր, որոնք պետք է ուսումնասիրեն տվյալ պետության վերաբերյալ տարբեր շահագրգիռ կողմերի ներկայացրած զեկույցները և մշակեն հարցեր և հարցման ենթակա թեմաների ցանկ (անգլ.՝ list of issues): Հարցման ենթակա թեմաների ցանկի առանձնացումը նպատակ ունի հստակեցնել որոշ հարցեր, որոնք տեղ չեն գտել զեկույցում կամ պարզաբանման կարիք ունեն: Օրինակ՝ կարող են լինել խնդիրներ, որոնք բարձրաձայնվել են հասարակական կազմակերպությունների զեկույցներում, սակայն պետությունը դրանց չի անդրադարձել: Որոշ կոմիտեններ հասարակական կազմակերպություններին թույլատրում են տարբեր ձևաչափերով ներգրավվել կոմիտեի՝ զեկույցները քննարկող աշխատանքային խմբերի աշխատանքներին:<sup>28</sup>

Զեկույցների քննարկումը տեղի է ունենում կոմիտենների հանդիպման շրջափուլերի ընթացքում: Լսումները կոմիտեններն իրականացնում են տարբեր ձևաչափերով. մի մասը նախապես լսում են պետության ներկայացուցչի զեկույցը, ապա՝ հղում հարցեր (Մարդու իրավունքների կոմիտե, Ռասայական խտրականության վերացման կոմիտե, Բռնությամբ անհետացման հարցերով կոմիտե), մի մասի դեպքում պետության ներկայա-

28. ՀԿ-ների՝ կոմիտենների աշխատանքային խմբերին մասնակցության վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս երրորդ բաժնում:

ցուցիչը զեկույց է ներկայացնում համապատասխան դաշնագրի հող-վաճների հիման վրա՝ ներկայացնելով դրանց կատարման ուղղությամբ ձեռնարկված միջոցները և ձեռքբերումները (Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե, Երեխաների իրավունքների պաշտպանության կոմիտե): Այս փուլը կառուցողական երկխոսության փուլն է, երբ պետության ներկայացուցչին հնարավորություն է տրվում պարզաբանումներ ներկայացնել զեկույցում տեղ գտած տեղեկատվության և հասարակական կազմակերպությունների կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ: Հարցերը մշակվում են՝ հաշվի առնելով նաև այլ շահագրգիռ կողմերի ներկայացրած տեղեկատվությունը:

Լսումների ընթացքում անկախ փորձագետները քննարկում են խնդիրների պատճառները, լուծման ուղղությամբ հնարավոր քայլերը:

Պետությունների կողմից զեկույցի չներկայացման դեպքում կոմիտեն կարող է որոշում կայացնել առկա իրավիճակը այլ շահագրգիռ կողմերի զեկույցների հիման վրա դիտարկելու վերաբերյալ: Այս դեպքում ևս պետությունը տեղեկացվում է, որ կոմիտեն կայացրել է իրավիճակի վերանայման մասին որոշում՝ հնարավորություն ունենալով ներկայացնել զեկույցը այդ փուլում: Այս իրավիճակում ևս կարևոր է հասարակական կազմակերպությունների կողմից զեկույցների ներկայացումը՝ որպես տեղեկատվության աղբյուր և ուղղորդիչ հանգամանք:

## Ա) Եզրահանգումներ և առաջարկներ

Պետության ներկայացուցիչների հետ երկխոսության միջոցով՝ պետության կողմից ներկայացրած զեկույցների, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի ներկայացրած տեղեկատվության հիման վրա անցկացվող լսումների արդյունքում, կոմիտենները հրապարակում են եզրափակիչ դիտարկումներ (անգլ.՝ *Concluding observations*) և առաջարկներ (անգլ.՝ *Recommendations*):<sup>29</sup> Եզրահանգումները, մասնավորապես, վերաբերում են դաշնագրին միանալու արդյունքում պետության ստանձնած պարտավորությունների կատարմանը՝ ձեռքբերումներին, թերացումներին և ձախողումներին: Դրանցում ամփոփվում են այն քայլերը, որոնք պետությունը կատարել է դաշնագրի դրույթներն իրականացնելու, ներքին օրենսդրությունը դաշնագրին համապատասխանեցնելու, մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված քաղաքականությունը դաշնագրում ամրագրված իրավունքներին և սկզբունքներին համապատասխանեցնելու

29. Կոմիտենների ներկայացրած եզրահանգումներն ու առաջարկները հասանելի է այստեղ. <https://www.refworld.org/type/CONCOBSERVATIONS.html>

ուղղությամբ, ինչպես ամփոփվում է իրավիճակը, որում պետությունը ձախողել է ձեռնարկել անհրաժեշտ միջոցները: Կոմիտեներն այս փուլում ամփոփում են նաև նախորդ զեկուցման շրջափուլի արդյունքում արված առաջարկների կատարման ընթացքը: Եզրահանգումներ են ներկայացվում նաև պետության ներսում տիրող մարդու իրավունքների իրավիճակի շուրջ, որի հիման վրա նույնականացվում են այն քայլերը, որոնք առաջարկվում են պետությանը՝ մարդու իրավունքների պաշտպանվածությունն ապահովելու համար:

Կոմիտեների եզրակացություններն ու առաջարկները կարող են կարևոր դեր ունենալ նաև ՄԱԿ-ի այլ մարմինների և մեխանիզմների համար՝ անդամ պետություններում մարդու իրավունքների իրավիճակն ուսումնասիրելիս: Մասնավորապես, վերջիններս կարող են իրենց ստացած տեղեկատվությունը ամբողջացնել նաև ուսումնասիրելով կոմիտեների եզրահանգումները:

## **Բ) Հսկողություն առաջարկների կատարման նկատմամբ և գնահատում**

Չնայած որ կոմիտեների կողմից ներկայացված առաջարկների կատարման ուղղությամբ ձեռնարկված քայլերի վերաբերյալ տեղեկատվությունը պետությունները կարող են ներառել պարբերական զեկույցներում, երբեմն, ելնելով առաջարկների բնույթից, անհրաժեշտություն է առաջանում հետևել դրանց կատարմանը<sup>30</sup>: Պետությունները պարտավորվում են մեկ տարվա ընթացքում ներկայացնել զեկույց կատարված քայլերի վերաբերյալ:

Կոմիտեներն ունեն իրենց առաջարկների կատարման նկատմամբ հսկողության տարբեր մեխանիզմներ<sup>31</sup>:

Մարդու իրավունքների կոմիտեն, Ռասայական խտրականության վերացման հարցերով կոմիտեն, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն և Բռնությամբ անհետացման հարցերով կոմիտեն առաջնայնություն են տալիս հրատապ կատարման ենթակա առաջարկներին:

Մարդու իրավունքների կոմիտեի ընթացակարգային կանոններով նա-

30. Առաջարկների կատարման նկատմամբ հսկողության առանձին մեխանիզմներ ունեն Մարդու իրավունքների կոմիտեն, Խոշտանգումների դեմ կոմիտեն, Ռասայական խտրականության վերացման հարցերով կոմիտեն, Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեն, Բռնության անհետացման հարցերով կոմիտեն:

31. Եզրափակիչ դրույթների կատարման նկատմամբ վերահսկողություն. HRI/ICM/2009/6

խատեսվել են մեխանիզմներ կատարման նկատմամբ հսկողությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով<sup>32</sup>: Մասնավորապես, մեկ տարվա ընթացքում պետության կողմից տեղեկատվություն չստանալու դեպքում կատարման ընթացքի վերաբերյալ զեկուցողի կողմից պետությանն է ուղարկվում հիշեցում՝ երկու ամիս անց և չորս ամիս անց, այնուհետև՝ վեց ամիս անց, կրկին տեղեկատվություն չստանալու դեպքում, ուղարկվում է հանդիպման առաջարկ: Հիշեցումները տեղադրվում են նաև հրապարակային եղանակով:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն շեշտադրում է այն առաջարկները, որոնց իրականացումն իրատեսական է մեկ կամ երկու տարվա ընթացքում:

Սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների կոմիտեն ևս կարող է, մինչև պարբերական զեկուցման շրջափուլը, լրացուցիչ տեղեկություն պահանջել կատարման ընթացքի վերաբերյալ:

Խոշտանգումների դեմ կոմիտեն շեշտադրում է հատկապես այն առաջարկները, որոնք ուղղված են՝ ա) ազատությունից զրկված անձանց իրավական պաշտպանության ապահովմանը կամ ուժեղացմանը, բ) պատշաճ, անկողմնակալ և արդյունավետ քննության իրականացմանը, գ) խոշտանգումների կամ անմարդկային վերաբերմունքի դեպքում կասկածյալների նկատմամբ քրեական հետապնդմանը և իրավախախտների պատասխանատվությանը:

Զեկույցում ներկայացված տվյալներն ուսումնասիրվում և գնահատվում են հատուկ նշանակված զեկուցողի կողմից, որը գնահատումն իրականացնում է ինչպես պետության ներկայացրած տվյալների, այնպես էլ այլ շահագրգիռ կողմերին (հասարակական կազմակերպություններ, մարդու իրավունքների ազգային ինստիտուտներ) և ՄԱԿ-ի այլ մեխանիզմներին (ինչպիսիք են Հատուկ ընթացակարգերը, Համընդհանուր պարբերական դիտարկումը և այլն) կատարված հարցումների հիման վրա:

Մարդու իրավունքների կոմիտեն 1990 թ. առաջինն էր, որ ձևավորեց իր առաջարկների նկատմամբ վերահսկողություն ունեցող հատուկ զեկուցողի մանդատը, որն իրավասու է կապ հաստատել անդամ պետությունների հետ և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ մշտադիտարկելու պետության գործողությունները, ներկայացնելու զեկույցներ, ինչպես նաև առաջարկներ միջանկյալ քայլերի վերաբերյալ<sup>33</sup>:

32. Մարդու իրավունքների կոմիտե, Կատարման նկատմամբ վերահսկողության գործընթացի ուժեղացում. CCPR/C/95/3

33. Մարդու իրավունքների կոմիտեի ընթացակարգեր, CCPR/C/3/Rev.8 (Sept 22, 2005):

Ռասայական խտրականության վերացման կոմիտեն և Խոշտանգումների դեմ կոմիտեն ևս ունեն նույնատիպ ընթացակարգեր<sup>34</sup>: Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն չունի զեկուցողի մշտական մանդատ, սակայն պետությունների վերաբերյալ զեկուցողներն ու կոմիտեների անդամները պատասխանատու են, համապատասխանաբար, կոմիտեի առաջարկների և անհատական դիմումների հիման վրա ներկայացված առաջարկների կատարման նկատմամբ վերահսկողության համար<sup>35</sup>:

Կատարման նկատմամբ վերահսկողության արդյունքում զեկուցողի կողմից կազմվում է հետևյալ եզրակացություններից մեկը<sup>36</sup>.

- Պետությունը ձեռնարկել է անհրաժեշտ քայլեր մարդու իրավունքների խախտումը վերացնելու ուղղությամբ:
- Պետությունը ձեռնարկել է որոշակի քայլեր, սակայն դրանք դեռևս բավարար չեն մարդու իրավունքների խախտումը վերացնելու համար:
- Պետության ձեռնարկած քայլերն ուղղված չեն մարդու իրավունքների խախտումը վերացնելուն:
- Պետությունն իրականացնում է այնպիսի քայլեր, որոնք հակասում են ներկայացված առաջարկներին:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի պրակտիկայում կատարման ընթացքի ուսումնասիրման արդյունքում հնարավոր է նաև եզրահանգել, որ տվյալները բավարար չեն գնահատման համար:

Սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեն առաջարկների կատարման նկատմամբ վերահսկողության շրջանակներում ձեռք բերված տվյալներն ուսումնասիրում է հերթական շրջափուլի նախալուծումների ընթացքում, երբ ուսումնասիրվում է պետության ներկայացրած պարբերական զեկույցը:

Կոմիտեների առաջարկները պետությունների համար համապարտադիր նշանակություն չունեն, սակայն կարևոր ցուցիչ են պետության ժողովրդավարական կառավարման և մարդու իրավունքների պաշտպանության

34. Խոշտանգումների դեմ կոմիտեի ընթացակարգեր, CAT/C/3?Rev.4 (August 9, 2002):

35. Ռասայական խտրականության վերացման կոմիտեի ընթացակարգեր (ընդունված՝ 15 օգոստոսի, 2005), Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի ընթացակարգեր, UN Doc A/56/38, Appendix 1:

36. Կոմիտեների առաջարկների կատարման վերահսկողության վերաբերյալ զեկույցները հասանելի են այստեղ [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/TreatyBodyExternal/FollowUp.aspx?Treaty=CCPR&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/TreatyBodyExternal/FollowUp.aspx?Treaty=CCPR&Lang=en)

գնահատման առումով: Դրանց կատարման նկատմամբ վերահսկողության արդյունքում վեր են հանվում պետական մարմինների կողմից մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված քայլերը, ինչպես նաև ձախողումները և մարդու իրավունքների ուղղակի խախտումները:

### 1.3. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐ<sup>37</sup>

ՄԱԿ-ի մարդու իրավունքների հիմնական դաշնագրերով ամրագրված իրավունքների պաշտպանությունը անդամ պետությունների կողմից պատշաճ կերպով իրականացնելու նպատակով Պայմանագրային մարմինները ստանձնել են ևս մեկ գործառույթ, այն է՝ մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ անհատական դիմումների քննությունը:

Անհատական դիմումները պետք է վերաբերեն կոնկրետ իրավախախտման, այսինքն՝ այն դեպքերին, երբ կամ պետությունը ուղղակիորեն ոտնահարել է մարդու իրավունքները, կամ ձախողել է պաշտպանել մարդուն այլոց ոտնձգություններից՝ չստեղծելով արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ կամ չկիրառելով դրանք:

Որպեսզի հնարավոր լինի պետության դեմ ներկայացնել անհատական դիմում, տվյալ պետությունը նախ պետք է վավերացրած լինի միջազգային պայմանագիրը, որով ամրագրված իրավունքի խախտման առնչությամբ նախատեսվում է դիմում ներկայացնել, այնուհետև տվյալ պետությունը պետք է վավերացրած լինի համապատասխան կամընտիր արձանագրությունը և ընդունած լինի տվյալ պայմանագրային մարմնի՝ անհատական դիմումներ քննելու իրավասությունը: Մասնավորապես,

- Մարդու իրավունքների կոմիտեի՝ անհատական դիմումներ քննելու իրավասությունը նախատեսված է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի առաջին կամընտիր արձանագրությամբ.
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի իրավասությունը նախատեսված է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների դաշնագրի կամընտիր արձանագրությամբ.
- Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի իրավասությունը նախատեսված է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ.

37. Անհատական դիմումների ներկայացման համար գործնական խորհուրդները տե՛ս Հավելված 1-ում:



- Խոշտանգումների դեմ կոմիտեի իրավասությունը նաժատեսված է Խոշտանգումների դեմ կոնվենցիայի 22-րդ հոդվածի համաձայն արված հայտարարությամբ.
- Երեխաների իրավունքների պաշտպանության կոմիտեի իրավասությունը նախատեսված է Երեխաների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիայի երրորդ կամընտիր արձանագրությամբ.
- Ռասայական խտրականության վերացման կոմիտեի իրավասությունը նախատեսված է Ռասայական խտրականության վերացման մասին կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն արված հայտարարությամբ.
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի իրավասությունը նախատեսված է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ.
- Միգրանտ աշխատողների իրավունքների հարցերով կոմիտեի իրավասությունը նախատեսված է Միգրանտ աշխատողների իրավունքների պաշտպանության կոնվենցիայի 77-րդ հոդվածի համաձայն արված հայտարարությամբ.
- Բռնությամբ անհետացման հարցերով կոմիտեի իրավասությունը նախատեսված է Բռնությամբ անհետացման մասին կոնվենցիայի 31-րդ հոդվածի համաձայն արված հայտարարությամբ:

Մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ անհատական դիմում կարող է ներկայացնել կամ տվյալ անձը, կամ նրա լիազոր ներկայացուցիչը: Կոմիտեներին անհատական դիմումների ներկայացման ընթացակարգերը շատ քիչ տարբերություններ ունեն: Լիազորագրում պետք է նշված լինի, որ այն տրված է հենց կոմիտե դիմում ներկայացնելու համար: Իրավախախտումից տուժած անձի մահացած լինելը կարող է հիմք հանդիսանալ ընտանիքի անդամների կողմից դիմում ներկայացնելու համար: Իրավախախտման զոհի ձերբակալված լինելու փաստն ինքնին բավարար չէ դիմումը այլ անձի կողմից ստորագրված լինելու համար: Այն պարագայում, երբ ձերբակալությունը խոչընդոտ է անձի ստորագրությունը ստանալու համար, կոմիտեին պետք է հիմնավոր փաստեր ներկայացվեն այդ առնչությամբ:

Դիմումատուն կարող է պահանջել, որպեսզի դիմումի առնչությամբ կոմիտեի որոշումը լինի անանուն՝ անվտանգության նկատառումներից ելնելով:

Դիմումները կարող են ներկայացվել իրավական պաշտպանության ներ-

պետական միջոցների սպառումից հետո հինգ տարվա ընթացքում: Որոշ դեպքերում, երբ առկա է հիմնավոր պատճառ դիմումը ուշացնելու համար, կոմիտեները կարող են քննության առնել նաև ժամկետանց դիմումները:

## Ա) Դիմումի ընդունելիության չափանիշները

Ինչպես նշվեց, իրավախախտումը, որի վերաբերյալ դիմումը ներկայացվում է կոմիտեին, *պետք է կատարված լինի տվյալ պետության կողմից կոմիտեի իրավասությունն ընդունելուց հետո*<sup>38</sup> կամ սկսված լինի դրանից առաջ, սակայն շարունակվի նաև իրավասությունը ընդունելուց հետո<sup>39</sup>: Եթե իրավախախտումը տեղի է ունեցել կոմիտեի իրավասությունը ճանաչելուց առաջ, սակայն դրանից հետո տուժողը դիմել է իրավապահ մարմիններին դեպքի քննության կամ փոխհատուցման համար, բայց չի գտել արդյունավետ իրավական պաշտպանություն, ապա կրկին կարող է դիմել կոմիտեներին<sup>40</sup>:

Նախքան կոմիտեներին դիմելը *պետք է սպառված լինեն արդյունավետ իրավական պաշտպանության ներպետական մեխանիզմները*: Այս պահանջի նպատակն է պետությանը թույլ տալ իրականացնել դեպքի քննություն և վերականգնել անձի խախտված իրավունքները<sup>41</sup>: Հարկ է նկատել, որ խոսքը իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների մասին է, այսինքն՝ եթե դիմումատուն հիմնավորի, որ առկա իրավական պաշտպանության միջոցները արդյունավետ չեն եղել, ապա հնարավոր է նաև դիմել կոմիտեներին՝ առանց ներպետական միջոցները սպառելու: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ են հիմնավոր փաստարկներ, որոնք կապացուցեն, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցները արդյունավետ համարվել չեն կարող:

Իրավական պաշտպանության մեխանիզմների մասին խոսելիս նկատի

38. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն, հոդված 4 (2), Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կոնվենցիայի կամընտիր արձանագրություն, հոդված 2 (f):

39. Lovelace v. Canada, UNHRC, Views of 30 July 1981, UN Doc. A/36/40 (Sup. No. 40), para. 11:

40. Gerasimov v. Kazakhstan, UNCAT, Decision of 24 May 2012, CAT/C/48/D/433/2010, para 11.2; S.E. v. Argentina, UNHRC, Views of 26 March 1990, CCPR/C/WG/36/DR/275/1988, para. 5.4:

41. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի առաջին կամընտիր արձանագրություն, հոդված 5(2)(b), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն, հոդված 4(1), Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կոնվենցիայի կամընտիր արձանագրություն, հոդված 2 (d), Ռասայական խտրականության վերացման մասին կոնվենցիա, հոդված 7 (a), Խոշտանգումների դեմ կոնվենցիա, հոդված 22(5)(b), Երեխաների իրավունքների պաշտպանության կոնվենցիայի կամընտիր արձանագրություն, հոդված 7(5), Բռնությամբ անհետացած անձանց պաշտպանության մասին կոնվենցիա, հոդված 31(2)(d):

են առնվում ոչ միայն դատական պաշտպանության միջոցները, այլև, երբեմն, արտադատական մեխանիզմները, որոնք կարող են արդյունավետ պաշտպանության միջոց համարվել: Միևնույն ժամանակ, միջոցների արդյունավետությունը գնահատելիս պետք է հաշվի առնվի դեպքի բնույթը. օրինակ՝ քրեաիրավական գործընթաց նախատեսող արարքի դեպքում վարչական և քաղաքացիական պաշտպանության միջոցները արդյունավետ չեն կարող համարվել<sup>42</sup>: Ներպետական ատյանների սպառման հարցը կոմիտեի քննության առարկա չի դառնա, եթե պետությունն այս առնչությամբ առարկություն չներկայացնի:

Կոմիտեները քննության կարող են առնել միայն այն դեպքերի վերաբերյալ դիմումները, որոնք չեն քննվել նախկինում կոմիտեների կամ վեճերի քննություն իրականացնող միջազգային այլ մարմնի կողմից<sup>43</sup>: Այն դեպքում, երբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիմումը համարել է անընդունելի, կոմիտեն կարող է նույն հիմքով դիմումը քննության առնել: Կոմիտեի կողմից կարող է քննության առնվել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արդեն իսկ քննված դեպքի առնչությամբ դիմումն այն դեպքում, եթե վերջինս ներկայացված է այլ հիմքերով:

## **Բ) Անհատական դիմումների քննության ընթացքը**

Դիմումը ստանալուց հետո այն գրանցվում է, ինչը համարվում է կոմիտեի կողմից դիմումի ուսումնասիրության առաջին փուլը: Դիմումի գրանցումից հետո կոմիտեն սկսում է հաղորդակցություն տվյալ պետության կառավարության հետ՝ վերջինին հնարավորություն տալով դիրքորոշում հայտնել ինչպես ընդունելիության չափանիշների պահպանման, այնպես էլ դիմումում բերված բովանդակային հարցերի շուրջ: Այս փուլում պետությանը սովորաբար տրվում է վեց ամիս ժամանակ՝ պատասխան ներկայացնելու համար: Միևնույն ժամանակ, երկու ամսվա ընթացքում, կառավարությունը կարող է կոմիտեին խնդրել դիմումը ճանաչել անընդունելի, եթե կան բավարար փաստեր ընդունելիության չափորոշիչների չպահպանման վերաբերյալ: Կառավարության կողմից դիմումի ընդունելիության չափանիշների վերաբերյալ առարկության դեպքում, նախ և առաջ, դիմումատուին առաջարկվում է դիրքորոշում ներկայացնել այս

42. Vicente et al. v. Colombia, UNHRC, Views of 19 August 1997, CCPR/C/60/D/612/1995, para. 5.2; Coronel et al. v. Colombia, UNHRC, Views of 24 October 2002, CCPR/C/76/D/778/1997, para. 6.2:

43. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն, հոդված 4 (2), Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կոնվենցիայի կամընտիր արձանագրություն, հոդված 2 (c), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրին կից առաջին կամընտիր արձանագրություն, հոդված 5 (2) (a):

առնչությամբ՝ հիմնավորելով ընդունելիության չափանիշների պահպանումը: Եթե կառավարությունը ներկայացնում է բավարար փաստեր առ այն, որ դիմումի ընդունելիության չափանիշները չեն պահպանվել, իսկ դիմումատուն հակառակի մասին տվյալներ չի ներկայացնում, կոմիտեն դիմումը ճանաչում է անընդունելի, և այն ըստ էության քննության առարկա չի դառնում: Եթե ընդունելիության չափանիշների պահպանման առումով կառավարության կողմից որևէ առարկություն չի լինում, կոմիտեն չի անդրադառնում դիմումի ընդունելիությանը, այն համարում է ընդունելի և սկսում է դիմումի ըստ էության քննությունը:

Նշված վեց ամսվա ընթացքում կառավարությունը պետք է ներկայացնի նաև իր դիտարկումները դիմումում նշված հարցերի շուրջ, և իր առարկությունները վկայակոչված խախտումների առնչությամբ: Այնուհետև դիմումատուին տրվում է երկու ամիս ժամանակ՝ կառավարության դիտարկումներին պատասխանելու համար: Ապա կոմիտեն կարող է կրկին դիմել կառավարությանը որոշակի հանգամանքների շուրջ լրացուցիչ տվյալներ ստանալու համար: Սահմանված ժամկետի ընթացքում կառավարության կողմից պատասխան չստանալու դեպքում կոմիտեն դիմումը քննում է դրանում ներկայացված տվյալների, փաստարկների և ապացուցողական նշանակություն ունեցող նյութերի ուսումնասիրության արդյունքում:

Դիմումում վկայակոչված փաստերը հիմնավորող ապացույցներ կարող են համարվել տուժողի և/կամ վկաների ցուցմունքները, պետական մարմիններին, ներառյալ՝ իրավապահ մարմիններին ներկայացված բողոքները, դիմումները, դրանց տրված արձագանքը, ներպետական դատական և արտադատական ատյանների որոշումները, տարբեր գիտական հետազոտություններ և վերլուծություններ՝ կապված վերաբերելի իրավիճակի կամ օրենսդրական կարգավորումների հետ, ինչպես նաև դեպքի հանգամանքները ուղղակիորեն ապացուցող տեսանյութեր և լուսանկարներ, փորձաքննությունների եզրակացություններ և այլն: Դիմումում տեղ գտած փաստերի՝ համապատասխան ապացույցներով հիմնավորումը կարևոր նշանակություն ունի կոմիտեի որոշման համար: Հակառակ դեպքում, եթե դիմումում վկայակոչված փաստերը վկայություններով հիմնավորված չեն, կոմիտեն այն կարող է ճանաչել անընդունելի<sup>44</sup>: Որոշ դեպքերում, հաշվի առնելով դիմումատուի համար տվյալների անհասանելիությունը, կոմիտեի կողմից փաստերի

44. UNHRC, Մարդու իրավունքների կոմիտեի ընթացակարգեր, UN Doc. CCPR/C/3/Rev.9, 13 January 2011, Rule 96(b); Bazarov v. Uzbekistan, UNHRC, Views of 8 August 2006, CCPR/C/87/D/959/2000, para. 7.3–7.4; Singh v. Canada, UNHRC, Views of 30 March 2006, C:

ապացուցման բեռը կարող է դրվել կառավարության վրա<sup>45</sup>: Այս փուլը կոմիտեն իրականացնում է գրավոր ընթացակարգով: Երբեմն կարող է որոշում կայացվել լսումները հրապարակային անցկացնելու վերաբերյալ, ինչը հնարավոր է միայն երկու կողմերի ներկայության պարագայում:

Դիմումատուն կարող է կոմիտեից պահանջել նաև ձեռնարկել միջանկյալ միջոցներ, եթե մարդու իրավունքների խախտումը ընթացքի մեջ է, և անհրաժեշտ է այն անհապաղ դադարեցնել:

Դիմումատուի և կառավարության դիրքորոշումների ուսումնասիրությունից հետո կոմիտեն որոշում է կայացնում խախտման առկայության կամ բացակայության մասին: Ճանաչելով մարդու իրավունքների խախտում՝ կոմիտեն որոշում է կայացնում կապված այն միջոցների հետ, որոնք պետք է ձեռնարկվեն պետության կողմից մարդու խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև համակարգային իրավախախտումների պրակտիկան դադարեցնելու կամ կանխելու ուղղությամբ: Կոմիտեի կողմից պետությանն առաջարկվող միջոցները բնույթով կարող են լինել *անհատական միջոցներ և ընդհանուր միջոցներ*: Անհատական միջոցներն ուղղված են դիմումատուի խախտված իրավունքների վերականգնմանը, իսկ ընդհանուր միջոցները կարող են լինել օրենսդրական փոփոխությունների, քաղաքականության փոփոխության կամ որոշակի պրակտիկայի դադարեցման ուղղությամբ: Կոմիտեի որոշումների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է այդ նպատակով նշանակված զեկուցողների կամ աշխատանքային խմբերի կողմից, որոնք 90 կամ 180 օր անց պետությունից պահանջում են տեղեկատվություն կատարման ընթացքի վերաբերյալ: Կոմիտենների կողմից տարբեր մեխանիզմներ են կիրառվում վերջիններիս որոշումների կատարումն ապահովելու նպատակով, այդ թվում՝ հիշեցումները, հանդիպումները և այլն:

Այնուամենայնիվ, կոմիտենների որոշումների համապարտադիր կատարման մեխանիզմներ չկան: Միևնույն ժամանակ, պետական մարմինները, դրսևորելով քաղաքական կամք, կարող են կոմիտենների

45. HRC – Krasnova v. Kyrgyzstan, UNHRC, Views of 29 March 2011, CCPR/C/101/D/1402/2005, para 8.3; Sassene v. Algeria, UNHRC, Views of 29 October 2014, CCPR/C/112/D/2026/2011, para 7.3; Bleier v. Uruguay, UNHRC, Views of 29 March 1982, UN Doc. A/37/40 (Sup. No. 40), para. 13.3. CAT – Ktiti v. Morocco, UNCAT, Decision of 26 May 2011, CAT/C/46/D/419/2010, para. 8.8; UNCAT, Բրազիլիայի վերաբերյալ զեկույց կոնվենցիայի 20-րդ հոդվածի շրջանակներում և Բրազիլիայի կառավարության պատասխանը, UN Doc. CAT/C/39/2, 28 July 2008. 44 A.S. v. Sweden, UNCAT, Decision of 24 November 2000, CAT/C/25/D/149/1999, para. 8.6; Karou v. Sweden, UNCAT, Decision of 8 May 2002, UN Doc. A/57/44, para 10:

որոշումներին համապարտադիր ուժ հաղորդել ներքին իրավական ակտերով: Օրինակ՝ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի՝ «Գոնսալեսն ընդդեմ Իսպանիայի» գործով որոշման արդյունքում Իսպանիայի գերագույն դատարանը որոշում ընդունեց, որ միջազգային պայմանագրերը, որոնց Իսպանիան անդամակցում է, համարվում են Իսպանիայի օրենսդրության մասը, իսկ կոմիտեի որոշումները Իսպանիայում ենթակա են պարտադիր կատարման<sup>46</sup>: Այս որոշումը բեկումնային էր, դրանով Իսպանիայի կառավարությունը ցույց տվեց իր կամքը՝ հնարավոր միջոցներն օգտագործելու բռնությունների և մարդու իրավունքների խախտումների դեմ պայքարելու նպատակով:

46. Մարդու իրավունքների Գերագույն հանձնակատարի գրասենյակ. հասանելի է. <https://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=23849&LangID=E>

ԲԱՍՄԻՆ

2



**ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ.  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ**

Ձեռնարկի այս բաժնում հա-  
կիրճ ներկայացված է Հատուկ  
ընթացակարգերի ձևավորման  
նախապատմությունը, նկա-  
րագրված է ՀԸ գործիքակազմը  
և գործառույթների շրջանակը:

Բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝

2.1. Հատուկ ընթացակարգերի մեխանիզմի ստեղծում և զարգացում.

2.2. Հատուկ ընթացակարգերի գործառույթներ և գործիքակազմ:

**2.1. ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՍՏԵՂԾՈՒՄ  
ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ<sup>47</sup>**

«Հատուկ ընթացակարգ» ընդհանրական եզրույթը կոչված է բնութագրե-  
լու ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմում առկա  
*հատուկ* մանդատ կրողներին, որոնք զեկուցում են մարդու իրավունքնե-  
րի՝ աշխարհում տեղի ունեցող զարգացումների մասին, ուսումնասիրում  
են մարդու իրավունքների պաշտպանության տարատեսակ հարցեր և  
խնդիրներ, դրանց առնչությամբ կառավարություններին և միջազգային  
հանրությանը ներկայացնում են դիտարկումներ և առաջարկություններ:

Հատուկ ընթացակարգերի մանդատ կրողները կան անհատ փորձա-  
գետներ են, կան փորձագետների խումբ: Կախված մանդատի բնույթից՝  
Հատուկ ընթացակարգը կարող է անվանվել Հատուկ զեկուցող (անգլ.՝  
Special Rapporteur), Անկախ փորձագետ (անգլ.՝ Independent Expert),  
Աշխատանքային խումբ (անգլ.՝ Working Group), Գլխավոր քարտուղա-  
րի հատուկ ներկայացուցիչ (անգլ.՝ Special Representative of the Secretary  
General):

Տվյալ մեխանիզմում ընդգրկված փորձագետների աշխատանքի հիմնա-  
կան առանձնահատկությունն է աշխարհի ցանկացած վայրում տեղի ու-  
նեցող մարդու իրավունքների խախտումների ահազանգերին հնարավո-  
րինս արագ արձագանքելու իրավասությունը:

47. Հատուկ ընթացակարգերի ստեղծման և կայացման փուլերը համառոտ ներկայացված  
են «ՄԱԿ-ի Հատուկ ընթացակարգերի մեխանիզմի պատմությունը. ծագում, զարգացում,  
ռեֆորմներ» Մ. Լիմոնի և Հ. Փավերի աշխատության շրջանակներում. հասանելի է. [https://www.universal-rights.org/wp-content/uploads/2015/02/URG\\_HUNSP\\_28.01.2015\\_spread.pdf](https://www.universal-rights.org/wp-content/uploads/2015/02/URG_HUNSP_28.01.2015_spread.pdf) և Նոլանի և  
Ֆրիմանի՝ «ՄԱԿ-ի Հատուկ ընթացակարգերի պատմությունը» գրքում: Այս ենթաբաժնում տեղ  
գաձ քննարկման հիմնական աղբյուրներ են հանդիսանում նշված աշխատությունները:



Ներկայումս գործող բոլոր Հատուկ ընթացակարգերին՝ ներառյալ մանդատի շրջանակը, մանդատակրի տվյալները, նշանակման ժամանակահատվածը, հնարավոր է ծանոթանալ հետևյալ հղումով՝ <https://www.ohchr.org/EN/HRBodies/SP/Pages/Currentmandateholders.aspx>:

ՀԸ-ի արդյունավետությունը մեծապես կախված է նրանից, թե որքանով են պետությունները հակված համագործակցության, և, հատկապես, որքանով են տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, իրավաբանները, իրավապաշտպանները, ակտիվիստները համագործակցում ՀԸ-ի հետ:

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Քոֆի Անանը ժամանակին Հատուկ ընթացակարգերը բնութագրել է որպես մարդու իրավունքների միջազգային համակարգի «թագազարդ»: Հատուկ ընթացակարգերը առանցքային դեր ունեն միջազգային հանրության ուշադրությունը մարդու իրավունքների՝ այս կամ այն երկրում տիրող իրավիճակի վրա սևեռելու գործում՝ հավելյալ քաղաքական ճնշում ստեղծելով բարձրաձայնվող խնդիրների հանգուցալուծման և իրավունքների պաշտպանության համար:

ՀԸ-ի մյուս կարևոր գործառույթը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին և Գլխավոր ասամբլեային մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ զեկույցների ներկայացումն է՝ ապահովելով ՄԱԿ-ի կողմից աշխարհի տարբեր անկյուններում մարդու իրավունքների խնդիրների ընթացիկ մշտադիտարկումը<sup>48</sup>:

Հատուկ ընթացակարգերը ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգում գործող բավականին յուրօրինակ մոդել է: Այն չի ձևավորվել որևէ միջազգային պայմանագրի կամ կոնվենցիայի հիմքով (ինչպես Պայմանագրային մարմինների դեպքում), այլ մարդու իրավունքները գործնականում պաշտպանելու՝ մի շարք պետությունների ջատագովության և քաղաքական պահանջի արդյունք է<sup>49</sup>:

ՀԸ-ի մեխանիզմում ներգրավված փորձագետները կամ մանդատների կրողները/ մանդատակիրները (անգլ.՝ Mandate holders) *թեմատիկ մանդատներ կրողներ են* (այսուհետ՝ ԹՄ) (անգլ.՝ Thematic mandate holders) և *պետության վերաբերյալ մանդատներ կրողներ* (այսուհետ՝ ՊՎՄ) (անգլ.՝ Country mandate holders): Կան նաև, այսպես կոչված, *համադրված մանդատներ* (անգլ.՝ Mixed mandates):

48. Ս. Սուբեդի, Մարդու իրավունքների պաշտպանությունը՝ Հատուկ ընթացակարգերի մեխանիզմի միջոցով, <https://muse.jhu.edu/article/415616/pdf>

49. Հատուկ ընթացակարգերի ստեղծման հիմքում ընկած առանցքային ՄԱԿ-ի բանաձևերը հասանելի են այստեղ. <http://libraryresources.unog.ch/specialhumanrights/home>

Թեմատիկ մանդատակիրները կոչված են ուսումնասիրելու մարդու իրավունքների այս կամ այն ոտնահարման դրսևորումները՝ առանց աշխարհագրական սահմանափակումների: Նրանց գործունեության շրջանակը *թեմատիկ է*: օրինակ՝ Խոշտանգման հարցերով զբաղվող հատուկ զեկուցող, Բռնի կամ հարկադրաբար անհետացած անձանց հարցերով աշխատանքային խումբ, Գլխավոր քարտուղարի՝ Միգրացիայի և փախստականների հարցերով հատուկ ներկայացուցիչ, Կրթության իրավունքի հարցերով հատուկ զեկուցող և այլն: *Պետության վերաբերյալ մանդատների* գործունեության շրջանակը պայմանավորված է կոնկրետ պետության տարածքով, կոչված է արձանագրելու տեղական գործընթացները և արձագանքելու դրանց: Սովորաբար նման մանդատներն ստեղծվում են պատերազմական երկրներում իրավիճակների մշտադիտարկման կամ պետության ներսում մարդու իրավունքների ոտնահարման լրջագույն և տևական գործընթացների առկայության պարագայում (օրինակ՝ Բելառուսում մարդու իրավունքների հարցերով հատուկ զեկուցող, Եմենում մարդու իրավունքների հարցերով հատուկ զեկուցող և այլն):

2020 թ. նոյեմբերի 1-ի դրությամբ ՄԱԿ-ի համակարգում գործում է 44 թեմատիկ<sup>50</sup> և պետության վերաբերյալ 11 մանդատ<sup>51</sup>: Ինչպես հստակ երևում է, թեմատիկ մանդատները գերակայում են:

Հատուկ ընթացակարգերի զարգացման փորձն ապացուցեց թեմատիկ մանդատների առավել նպատակահարմարությունն ու արդյունավետությունը՝ ի համեմատ պետությունների վերաբերյալ մանդատների, ուստի և 1990-ականներից ի վեր վերջիններիս թիվը գնալով կրճատվեց:

Հատուկ զեկուցողի և Անկախ փորձագետի մանդատը կրում է մեկ անձ, իսկ Աշխատանքային խմբի մանդատը տրվում է հինգ հոգուց բաղկացած միջազգային փորձագիտական խմբին, որոնք միասին աշխատում են մանդատի առարկայի շուրջ: Ներկայումս գործում է այսպիսի 6 Աշխատանքային խումբ:

ՀԸ-ի ձևավորումն ի սկզբանե բախվել է անդամ պետությունների, հատկապես ԱՄՆ-ի և Եվրոպական պետությունների բավականին մեծ քաղաքական դիմադրության: ՄԱԿ-ի կայացման սկզբնական փուլում՝ 1940-1960-ական թվականներին, գերակա էր արևմտյան պետությունների այն դիրքորոշումը, որ ՄԱԿ-ը պետք է զբաղվի առավելապես մարդու իրավունքների խթանման, այն է՝ իրավաստեղծ, իրազեկման և քարոզչական

50. UN OHCHR Thematic mandates. հասանելի են այստեղ. <https://spinternet.ohchr.org/ViewAllCountryMandates.aspx?Type=TM&lang=en>

51. UN OHCHR Country mandates <https://spinternet.ohchr.org/ViewAllCountryMandates.aspx?lang=en>

բնույթի աշխատանքներով, և ոչ թե անմիջականորեն մարդու իրավունքների պաշտպանությամբ ու արձագանքմամբ և այս ուղղությամբ միջազգային մեխանիզմների ու գործիքակազմի զարգացմամբ: Թեպետ ՄԱԿ-ի Կանոնադրության 68-րդ հոդվածով ձևավորված Մարդու իրավունքների հանձնաժողովի (2006-ից՝ Մարդու իրավունքների խորհուրդ) գործառույթները ներառում են թե՛ առաջինը և թե՛ երկրորդը, գործնականում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների ստեղծումը սկզբնական փուլում հապաղեց, քանզի նման մեխանիզմների գործառույթը պետք է հանգեցներ ՄԱԿ-ին՝ պետությունների ներքին գործընթացներին միջամտելու հնարավորության տրամադրմանը: 1947 թ. ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի բանաձևը ամրագրում էր, որ Մարդու իրավունքների հանձնաժողովը «չունի մարդու իրավունքների բողոքներին որպես արձագանք որևէ կերպ գործելու լիազորություն»: Այսպիսով, մինչև 1960-ականները միջազգային հարթակում գերակայող՝ ՄԱԿ-ի «գործելու լիազորությունից զուրկ լինելու» դոկտրինը (անգլ.՝ No power to act doctrine) կոչված էր պաշտպանելու պետությունների սուվերենության սկզբունքը: Պատահական չէ, որ հենց այս ժամանակակատվածում ՄԱԿ-ի աշխատանքներն առավել կենտրոնանում են մարդու իրավունքների տարատեսակ փաստաթղթերի, հռչակագրերի և կոնվենցիաների ձևակերպման և ընդունման շուրջ. կառույցի գործունեությունն ուղղված էր սոսկ մարդու իրավունքների խթանմանը՝ իրավական նորմերի և նորմատիվային դաշտի ձևավորմանը:

Իրավիճակը, սակայն, արմատապես փոխվեց 1965-1966 թթ., երբ աշխարհում մարդու իրավունքների՝ ռասիզմով պայմանավորված լրջագույն ոտնահարումներին ի պատասխան, նորանկախ աֆրիկյան, միջինասիական և ասիական պետությունները սկսեցին զգալի ճնշում գործադրել ՄԱԿ-ի վրա՝ կոչ անելով արձագանքել գաղութացման, ռասիզմի և ապարտեիդի պայմաններում տարբեր երկրներում մարդու իրավունքների սահմանափակումներին և տեղի ունեցող ոտնահարումներին: Քաղաքական այս պահանջը հաջողեց:

1966 թ. Տնտեսական և սոցիալական խորհուրդը դիմեց ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովին՝ հայցով, որ վերջինս հրատապ կարգով «ուսումնասիրի [ստեղծված իրավիճակում] մարդու իրավունքների և ազատությունների ոտնահարումները... բոլոր երկրներում»: Ընդունվեցին Տնտեսական և սոցիալական հանձնաժողովի թիվ 1164 (XLI)21 բանաձևը և Գլխավոր ասամբլեայի թիվ 2144 A (XXI) բանաձևը, որոնց արդյունքում Մարդու իրավունքների հանձնաժողովին տրվեց իրավիճակի ուսումնասիրման և արձագանքելու մեխանիզմների մշակման լիազորություն: Համաձայն այս բանաձևերի՝ Մարդու իրավունքների հանձնա-

ժողովը «իրավիրվեց» քննելու «ՄԱԿ-ի կարողություններն ու միջոցները՝ վերջ դնելու մարդու իրավունքների ոտնահարումներին՝ աշխարհի որ անկյունում էլ որ դրանք տեղի ունենան»: Մեկ տարի անց՝ 1967 թ., ի կատարումն իր հանձնառության, Մարդու իրավունքների հանձնաժողովը ոչ միայն «քննեց ՄԱԿ-ի կարողություններն ու միջոցները», այլև հանդես եկավ իրավիճակին արձագանքելու գործնական մեխանիզմի առաջարկով՝ ձևավորել Հարավային Աֆրիկայի հարցերով ժամանակավոր փորձագիտական խումբ և նշանակել Ապարտեիդի հարցերով հատուկ հանձնակատար: Այսպես հիմնվեց ՄԱԿ-ի Հատուկ ընթացակարգերի ինստիտուտը:

Ուշագրավ է, որ ՀԸ-ի ստեղծման հիմքում ընկած երկու հիմնարար բանաձևերին Արևմտյան տիրությունների մեծ մասը դեմ կամ ձեռնպահ քվեարկեց: Մարդու իրավունքների միջազգային ժամանակակից համակարգը Հատուկ ընթացակարգերի ստեղծման և զարգացման համար պարտավոր է աֆրիկյան, ասիական և կարիբյան պետությունների փոքր խմբին, որոնք 1966-1967 թթ. վճռականորեն պայքարեցին գաղութացման, ռասիզմի ու ապարտեիդի պայմաններում մարդու իրավունքների ընթացող ոտնահարումների միջազգային ճանաչման և կասեցման համար: Այս քայլով նրանք ուղերձ հղեցին աշխարհի բոլոր պետություններին, որ երբ խոսքը մարդու իրավունքների չարաշահումների և կոպիտ ոտնահարումների մասին է, ՄԱԿ-ն ունի «գործելու ուժ»: Այս պետությունները նաև, գուցե անգիտակցաբար, բայց առաջին էական հարվածը հասցրին ՄԱԿ-ի ստեղծման հիմնարար սկզբունքներից մեկին՝ ներպետական գործընթացներին չմիջամտելու դրույթին (ՄԱԿ-ի Կանոնադրություն, հոդված 2.7)<sup>52</sup>:

Առաջին թեմատիկ մանդատը 1980 թ. ստեղծված՝ *Բռնի անհետացումների հարցերով աշխատանքային խումբն էր*, որը պետք է զբաղվեր բռնի անհետացումների խնդրով ամբողջ աշխարհում: Դրան նախորդել էր 1979 թ. Մարդու իրավունքների խորհրդի կողմից Հատուկ հանձնակատարի նշանակումը, որը պետք է զեկուցեր Չիլիում Պինոչետի կառավարման պայմաններում մարդու իրավունքների ոտնահարումների և, մասնավորապես, երկրում մարդկանց բռնի անհետացումների մասին: Հենց նշված մանդատն էլ *պետության վերաբերյալ* ստեղծված առաջին մանդատն է:

Հաջորդ տասնամյակի ընթացքում ստեղծվեցին ևս 6 թեմատիկ ման-

52. Լիմոն և Հ. Փավեր, ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերի մեխանիզմի պատմությունը. ծագում, զարգացում, ռեֆորմներ, հասանելի է այստեղ. [https://www.universal-rights.org/wp-content/uploads/2015/02/URG\\_HUNSP\\_28.01.2015\\_spread.pdf](https://www.universal-rights.org/wp-content/uploads/2015/02/URG_HUNSP_28.01.2015_spread.pdf)

դասներ, որոնք կոչված էին այնպիսի խնդիրների վերհանման և ուսումնասիրման համար, ինչպիսիք էին կրոնական անհանդուրժողականությունը, երեխաների վաճառքը և այլն: Բոլոր նորաստեղծ մանդատներն այս փուլում վերաբերում էին քաղաքական և քաղաքացիական իրավունքների ոտնահարման խնդիրներին: Միայն 1993 թ. Վիեննայի հռչակագրի ընդունումից հետո, երբ վերահաստատվեց սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների կարևորությունը, ձևավորվեց առաջին՝ *Մշակութային իրավունքների հարցերով հատուկ զեկուցողի մանդատը*:

Մինչև 2000-ական թթ. Հատուկ ընթացակարգերն ակտիվորեն ընդլայնվում էին: 2000 թ. արդեն գոյություն ուներ 34 մանդատ: ՀԸ-ների մեխանիզմը 2000-ականներից առ այսօր երեք անգամ է ձևափոխվել: 2004, 2006 և 2011 թթ. ՀԸ մեխանիզմի շրջանակներում իրականացվեցին օպերացիոն փոփոխություններ, հստակեցումներ և բարելավումներ: Հարկ է նշել, սակայն, որ իրականացվող փոփոխությունները միշտ չէ, որ ուղղված են եղել Հատուկ ընթացակարգերի ինստիտուտի ուժեղացմանն ու գործառույթների ընդլայնմանը: Միջազգային հանրությունը ժամանակի ընթացքում ավելի հստակ պատկերացրեց տվյալ մեխանիզմի ամբողջ ներուժը: Արդյունքում Հատուկ ընթացակարգերը սկսեցին ավելի հաճախ բախվել քաղաքական դիմադրության, քաղականացվածության խնդրին, որը վերաձվեց ընթացակարգերի զարգացման առանցքային պատնեշի<sup>53</sup>:

2006 թ., երբ Մարդու իրավունքների հանձնաժողովը Գլխավոր քարտուղարի 60/251 բանաձևով փոխարինվեց Մարդու իրավունքների խորհրդով, վերջինս լիազորվեց *«նացիոնալիզացնել»* Հանձնաժողովի լիազորություններն ու գործառույթները՝ *«պահպանելով հատուկ ընթացակարգերի, փորձագիտական խորհրդատվության և բողոքարկման մեխանիզմները»*: Քննարկման հիմնական առարկա դարձավ ՀԸ Վարքագծի կանոնների (անգլ.՝ Code of conduct) կողավորումն ու ընդունումը, որի շուրջ ծավալվեց քաղաքական հերթական բանավեճը. Արևմուտքն ու ՀԸ մանդատ կրողները դեմ էին կողավորմանը, մինչդեռ աֆրիկյան, ասիական և արաբական պետությունները՝ կողմ: Երկրորդ խմբին ի վերջո հաջողեց հասնել Միջկառավարական աշխատանքային խմբի ստեղծմանը, որը պետք է պատրաստեր հատուկ ընթացակարգերի աշխատանքը կանոնակարգող Վարքագծի կանոնները: Աշխատանքային խմբի հիմքում ընկած թիվ 5/1 բանաձևում անդրադարձ կատարվեց նաև կառավարությունների և ՀԸ մանդատակիրների միջև համագործակցության հարցին, որի շրջանակներում արդեն իսկ բացահայտվել էին տարաբնույթ խնդիրներ և սահմանափակող հանգամանքներ: Հարցի քաղաքականացվա-

53. Պ. Ս. Պիներո, Չարաշահելով Մարդու իրավունքների հատուկ ընթացակարգերը, հասանելի է այստեղ. <https://nev.prp.usp.br/wp-content/uploads/2019/08/27800460.pdf>

ծությամբ պայմանավորված՝ բանաձևում, սակայն, տեղ գտան բավականին ընդհանրական ձևակերպումներ առ այն, որ համագործակցությունը պետք է ընթանա «անաչառության, ոչընտրողականության սկզբունքների պահպանմամբ, երկակի ստանդարտների և քաղաքականացվածության բացառմամբ»: Որևէ անդրադարձ չկատարվեց առավել կենտրոնական՝ պետությունների կողմից մանդատը կրողների դիտարկումների (անգլ.՝ Recommendations) կիրարկման խնդրին<sup>54</sup>: Մեխանիզմի քաղաքականացվածությունը և մանդատակիրների դիտարկումների կիրարկումն ապահովող մեխանիզմների բացակայությունը շարունակում են օրակարգային մնալ մանդատակիրների գործունեության արդյունավետության բարձրացման և համակարգի ընդհանուր բարելավման տեսանկյունից:

## 2.2. ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ<sup>55</sup>

Թեմատիկ մանդատները մանդատը կրողին հնարավորություն են տալիս անդրադառնալ թիրախային իրավական խնդիրն/խնդիրների շրջանակին (խոշտանգում, ծայրահեղ աղքատություն, կրթություն և այլն) աշխարհի բոլոր երկրներում՝ այսպիսով ապահովելով աշխատանքների առավել համապարփակ բնույթը: Խնդիրների ուսումնասիրության աշխարհագրական ընդգրկունության շնորհիվ թեմատիկ մանդատների ձևավորումն ավելի հեշտ է զերծ պահել քաղաքականացվածությունից, ինչը մշտական մարտահրավեր է պետությունների վերաբերյալ մանդատների ձևավորման պարագայում:

Թեմատիկ մանդատներն ավելի «կենսունակ են». մանդատ կրողները նշանակվում են երեք տարի ժամկետով, և նրանց գործառույթները սովորաբար երկարաձգվում են ևս մեկ շրջանով՝ այսպիսով ապահովելով աշխատանքների շարունակականությունը: Նույն մանդատի շրջանակներում թեմատիկ մանդատակիրը կարող է աշխատել առավելագույնը 6

54. Լիմոն և Հ. Փավեր, ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերի մեխանիզմի պատմությունը. ծագում, զարգացում, ռեֆորմներ, հասանելի է այստեղ. [https://www.universal-rights.org/wp-content/uploads/2015/02/URG\\_HUNSP\\_28.01.2015\\_spread.pdf](https://www.universal-rights.org/wp-content/uploads/2015/02/URG_HUNSP_28.01.2015_spread.pdf)

55. Հատուկ ընթացակարգերի գործառույթներն ու գործիքակազմը համառոտ ներկայացված են ՀԸ վերաբերյալ Կոլումբիայի համալսարանի իրավունքի դպրոցի պատրաստած ձեռնարկում (հասանելի է այստեղ. [https://web.law.columbia.edu/sites/default/files/microsites/human-rights-institute/files/special\\_rapporteurs\\_report\\_final.pdf](https://web.law.columbia.edu/sites/default/files/microsites/human-rights-institute/files/special_rapporteurs_report_final.pdf)) և ՀԸ վերաբերյալ Գլխավոր հանձնակատարի գրասենյակի ձեռնարկում (հասանելի է այստեղ. [www.ohchr.org/Documents/Publications/NgoHandbook/ngohandbook6.pdf](http://www.ohchr.org/Documents/Publications/NgoHandbook/ngohandbook6.pdf)), ՀԸ վերաբերյալ Տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների ցանցի պատրաստած ձեռնարկում (հասանելի է այստեղ. [https://www.escr-net.org/resources/manual-special-procedures-human-rights-council#\\_Toc136667421](https://www.escr-net.org/resources/manual-special-procedures-human-rights-council#_Toc136667421)): Այս ենթաբաժնում տեղ գտած քննարկման հիմնական աղբյուրներ են նշված աշխատությունները:

տարի: Պետության վերաբերյալ մանդատները ձևավորվում են մեկ տարի ժամկետով, և դրանց երկարաձգումը հաճախ բախվում է քաղաքականացվածության և պետությունների դիմադրության խնդրին, երբ պետությունը, որին վերաբերում է մանդատը, հիմնականում առավել ջանք և ռեսուրս է գործադրում մանդատի կասեցման ուղղությամբ:

Անկախ մանդատի տեսակից՝ դրա ստեղծման հիմքում համապատասխան բանաձևն է՝ ընդունված Մարդու իրավունքների խորհրդի կողմից: Որոշ դեպքերում ՀԸ-ները ձևավորվել են Գլխավոր քարտուղարի, Տնտեսական և սոցիալական խորհրդի, Գլխավոր ասամբլեայի կամ Անվտանգության խորհրդի ընդունած բանաձևերով: Այսպես, օրինակ, 1994 թ. Անվտանգության խորհուրդը ստեղծեց Ռուանդայի հարցով փորձագետների հանձնաժողովը<sup>56</sup>:

ՀԸ-ի ստեղծման բանաձևով սահմանվում են մանդատի տեսակը, շրջանակը, կառուցվածքը, աշխատանքների բնույթը, մանդատակրի պարտավորություններն ու գործառույթները: Մարդու իրավունքների խորհուրդը ամեն հերթական մանդատի նշանակման շրջանակներում ընդունում է պոտենցիալ թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կառավարություններից, ՄԱԿ-ում հավատարմագրված միջազգային և տարածաշրջանային խմբերից, հասարակական կառույցներից, ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների այլ մարմիններից, Մարդու իրավունքների ազգային մարմիններից, անհատներից: Մանդատակիրների առաջադրումը, ընտրությունն ու նշանակումը կարգավորվում է Մարդու իրավունքների խորհրդի թիվ 5/1 բանաձևով (2007 թ.)<sup>57</sup>:

Մանդատ կրողներն ընտրվում են իրենց մասնագիտական կարողությունների, մանդատի խնդրո առարկա հանդիսացող ոլորտային փորձի, անկախության, անաչառության, բարեվարքության և օբյեկտիվության չափանիշներից ելնելով<sup>58</sup>: Մանդատ կրողը չի կարող հանդիսանալ միաժամանակ պետական որևէ պաշտոն զբաղեցնող անձ: Սա մանդատակրի անկախության և անաչառության առանցքային երաշխիքներից է: Մանդատ կրողի ընտրության ժամանակ կարևորություն է տրվում նաև փորձագետների աշխարհագրական և գենդերային բաշխվածությանն ու բալանսի պահպանմանը: Մանդատ կրողները ՄԱԿ-ի անձնակազմի

56. Ս. Սուբեդի, Մարդու իրավունքների պաշտպանությունը Հատուկ ընթացակարգերի մեխանիզմի միջոցով, հասանելի է այստեղ. <https://muse.jhu.edu/article/415616/pdf>

57. ՄԻԽ բանաձև 5/1-ը հասանելի է այստեղ. [https://ap.ohchr.org/documents/dpage\\_e.aspx?si=A/HRC/RES/5/1](https://ap.ohchr.org/documents/dpage_e.aspx?si=A/HRC/RES/5/1)

58. ՄԻԳՀԳ կայք, ՄԱԿ ՄԻԽ անկախ փորձագետների ընտրության և նշանակման վերաբերյալ հիմնական տեղեկություն, հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/EN/HRBodies/HRC/SP/Pages/BasicInformationSelectionIndependentExperts.aspx>

անդամ չեն. այսպես է նաև ապահովվում նրանց առավել անկախությունը համակարգում: Մանդատ կրողներն իրենց աշխատանքի դիմաց չեն վճարվում: ՄԱԿ-ի ՄԻԳՀԳ (Գերագույն հանձնակատարի գրասենյակի) կողմից ապահովվում են միայն նրանց գործունեության իրականացմանն առնչվող ծախսերը (լոգիստիկ, հետազոտական աջակցություն, այլ փորձագետների ներգրավում և այլն)<sup>59</sup>:

Մանդատակիրների աշխատանքը համակարգվում է երկու հիմնական փաստաթղթերի հիման վրա: Դրանք են՝ Մարդու իրավունքների խորհրդի կողմից 2007 թ. ընդունված «Վարքագծի կանոնները»<sup>60</sup> և 2008 թ. այս նպատակով հատուկ ձևավորված հանձնախմբի պատրաստած «Մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգերի գործառնությունների ձեռնարկը»<sup>61</sup>:

Այսպիսով, ՀԸ ընթացակարգերը ստեղծվում են և հաշվետու են Մարդու իրավունքների խորհրդին, իսկ աշխատանքների կազմակերպման և համակարգման տեսանկյունից աջակցություն են ստանում ՄԻԳՀԳ կողմից: Այս երկու մարմիններն են առաջնային կերպով պատասխանատու ՀԸ մեխանիզմի գործունեության համար:

Մանդատ կրողներն այցելում են պետություններ, ընդունում ազդակներ և զեկույցներ տեղում գործող կառույցներից և կազմակերպություններից, կառավարությունների հետ կոմունիկացնում են բացահայտված խնդիրները՝ համագործակցություն հաստատելով դրանց հանգուցալուծման նպատակով: ՀԸ-ների կողմից իրականացվող ուսումնասիրությունները և իրավական վերլուծությունները նաև միջազգային իրավական նորմերի զարգացման աղբյուր են, այսպես կոչված՝ «փափուկ» իրավունքի նորմեր (անգլ.՝ soft law):

Վերջապես, մանդատակիրները, իրենց դիրքի և մասնագիտական գործունեության շնորհիվ, մեծացնում են այս կամ այն երկրում ընթացող իրավունքի ոտնահարումների միջազգային տեսանելիությունը, ինչը ևս կարող

59. ՀԸ վերաբերյալ Տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների ցանցի կողմից պատրաստված ձեռնարկը, հասանելի է այստեղ. [https://www.escr-net.org/resources/manual-special-procedures-human-rights-council#\\_Toc136667421](https://www.escr-net.org/resources/manual-special-procedures-human-rights-council#_Toc136667421)

60. «Վարքագծի կանոններ», 2007, հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/Documents/HRBodies/SP/CodeOfConduct.pdf>

61. «Մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգերի գործառնությունների ձեռնարկ», 2008, հասանելի է այստեղ. [https://www.ohchr.org/Documents/HRBodies/SP/Manual\\_Operations2008.pdf](https://www.ohchr.org/Documents/HRBodies/SP/Manual_Operations2008.pdf)



է մեծապես նպաստել իրավիճակի փոփոխությանն ու կայունացմանը<sup>62</sup>:

Գործառույթների և գործիքակազմի առումով կան որոշակի տարբերություններ մանդատներ կրողների միջև: Թե՛ Հայրուկ զեկուցողները և թե՛ Անկախ փորձագետները կարող են զարգացնել և պարզաբանել մարդու իրավունքների միջազգային նորմերը, սակայն միայն Հայրուկ զեկուցողներին և Աշխատանքային խմբերին է տրված պետությունների հետ հաղորդակցության մեջ մտնելու և խնդիրների շուրջ համագործակցություն հաստատելու գործառույթը: Անկախ փորձագետի մանդատը սովորաբար ստեղծվում է նոր և դեռևս չուսումնասիրված հարցերի դիտարկման համար, այն փուլում, երբ կա տեղեկատվության հավաքման և խնդրի բացահայտման կարիք: Ուսումնասիրմանը զուգընթաց, երբ արդեն հավաքվել է բավականաչափ գիտելիք և պատկերացում իրավիճակի վերաբերյալ, Անկախ փորձագետի մանդատը կարող է փոխարինվել Հատուկ զեկուցողի կամ Աշխատանքային խմբի մանդատով՝ գործառույթների և լիազորությունների համապատասխան ընդլայնմամբ:

ՀԸ-ների աշխատանքների համակարգման նպատակով 2005 թ. ստեղծվեց Համակարգման կոմիտե (անգլ.՝ Coordination Committee), որը բաղկացած է ՀԸ վեց մանդատակիրներից: Համակարգման կոմիտեի առանցքային գործառույթն է՝ ապահովել կապը մանդատակիրների, ՄԻԳՀԳ-ի, ՄԱԿ-ի այլ մարմինների և քաղաքացիական հասարակության դերակատարների միջև: Համակարգման կոմիտեն կարևոր դեր ունի ՀԸ-ների աշխատանքների արդյունավետության խթանման գործում՝ բարձրացնելով նրանց անհանգստացնող հարցերը, ապահովելով կարծիքների և փորձի փոխանակումը, խթանելով ՀԸ-ների հետ պետությունների և քաղաքացիական հասարակության համագործակցությունը, նախապատրաստելով ՀԸ-ների տարեկան հանդիպումների օրակարգը<sup>63</sup>:

1994-ից ի վեր ժնկում անց է կացվում բոլոր մանդատակիրների տարեկան հանդիպում: Տարեկան հանդիպումը հնարավորություն է մանդատակիրների համար՝ ընդհանուր հետաքրքրության և կարևորության հարցեր քննարկելու ամենատարբեր դերակատարների, այդ թվում՝ ՄԱԿ-ի անդամ պետությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Տարեկան հանդիպումները ՀԸ-ների միջև աշխատանքների ներդաշնակեցման հնարավորություն են՝ ծանոթանալու

62. ՄԻԳՀԳ կայքի Հատուկ ընթացակարգերի բաժինը հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/EN/HRBodies/HRC/Pages/SpecialProcedures.aspx>

63. Համակարգման կոմիտեի գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկությունը հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/EN/HRBodies/SP/CoordinationCommittee/Pages/CCSpecialProceduresIndex.aspx>

միմյանց գործունեությանը, ՀԸ-ների կողմից իրականացված պաշտոնական այցերի և դիտարկումների արդյունքներին (տե՛ս հաջորդիվ): Տեղեկությունն առաջիկա տարեկան հանդիպման մասին տեղադրվում է ՄԻԳՀԳ կայքում, և այստեղ հնարավոր է առցանց առաջարկություններ անել մանդատակիրների հետ քննարկման հարցերի և խնդիրների վերաբերյալ<sup>64</sup>:

Հատուկ ընթացակարգերը/Աշխատանքային խմբերը պետությունների հետ աշխատում են երեք հիմնական գործիքների կիրառմամբ՝

Ա) կոմունիկացիաներ.

Բ) պաշտոնական այցեր.

Գ) զեկույցների ներկայացում ՄԻԽ-ին և ԳԱ-ին:

Յուրաքանչյուր փորձագետ/խումբ ինքն է ընտրում խնդրի շուրջ աշխատանքի մարտավարությունը, որոշում, թե գործիքներից որն է առավել նպատակային կոնկրետ իրավիճակում: Իրենց աշխատանքներում Հատուկ ընթացակարգերը կարող են օգտվել տեղեկատվական ամենատարբեր աղբյուրներից, որոնք իրենք կհամարեն բավարար և արժանահավատ: Տեղեկատվության հավաքման աղբյուրների ընտրությունը թողնված է մանդատը կրողին, և վերջինս պարտավոր չէ տեղեկատվություն տրամադրած կողմին այնուհետ ներկայացնել իր հետագա գործողությունների վերաբերյալ որևէ հաշվետվություն: ՀԸ-ներին իրավունքի ոտնահարման խնդրով տեղեկատվության տրամադրումը չի սահմանափակվում ընթացակարգային որևէ նորմով, ինչպես, օրինակ, ներպետական ատյանների սպառումը (օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանին ներկայացվող բողոքների պարագայում), կամ պետության կողմից այս կամ այն միջազգային պայմանագրի անդամ հանդիսանալը (օրինակ՝ Պայմանագրային մարմինների պարագայում): ՀԸ-ներին տեղեկատվություն ուղարկելու նպատակով ՄԻԳՀԳ կայքում հասանելի է հատուկ առցանց ձևաթուղթ<sup>65</sup>, սակայն հնարավոր է տեղեկատվությունը ուղարկել նաև էլեկտրոնային փոստով՝ [urgent-action@ohchr.org](mailto:urgent-action@ohchr.org) հասցեին, կամ սովորական փոստային ծառայության միջոցով՝ *OHCHR-UNOG, 8-14 Avenue de la Paix, 1211 Geneve 10, Switzerland* հասցեին:

Տեղեկատվություն ուղարկողներ/աղբյուրներ կարող են լինել անձինք/խմբեր, որոնց իրավունքները խախտվել են, տեղական հասարակական

64. Տարեկան հանդիպումների մասին տեղեկությունը հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/en/HRBodies/SP/AMeeting/Pages/AnnualMeeting.aspx#:~:text=The%20Annual%20Meeting%20of%20special,States%20and%20civil%20society%20organizations>

65. Առցանց ձևաթուղթը հասանելի է այստեղ. <https://spsubmission.ohchr.org/en/verify>

կազմակերպությունները, անհատ իրավաբանները, ակտիվիստները՝ յուրաքանչյուր անձ և անձանց խումբ, որը ցանկանում է որոշակի խնդրի վերաբերյալ կապ հաստատել մանդատը կրողի հետ: Բոլոր դեպքերում, մանդատակիրները պետք է գիտակցեն տեղեկատվության աղբյուրների անվտանգության ապահովման, իրենց աշխատանքում չվնասելու սկզբունքի պահպանման կարևորությունը և գործեն համապատասխանաբար<sup>66</sup>:

Ինչպես և նման այլ քվազիդատական և քաղաքական մարմինների պարագայում, ՀԸ-ների դիտարկումները չունեն պարտադիր իրավական ուժ. մանդատակիրները չունեն որևէ լծակ, որով կարող են պարտավորեցնել կառավարություններին՝ արձագանքել այս կամ այն իրավիճակին կամ գործնական որևէ միջոցառում իրականացնել: ՀԸ-ի զեկույցներն ու դիտարկումները պետությունների համար իրավական պարտավորություն չեն ստեղծում: Գործառույթների խորհրդատվական բնույթից ելնելով, ՀԸ-ները պետք է գտնեն կառավարությունների հետ համագործակցության և երկխոսության եզրեր և եղանակներ: Այնուամենայնիվ, եթե անգամ այս կամ այն կառավարությունը չի դրսևորում բարձր համագործակցայնություն (ինչը հաճախ է պատահում), ՀԸ ներգրավումը ստեղծում է միջազգային ճնշում՝ խնդիրներին արձագանքելու, իրավունքի ոտնահարումները դադարեցնելու տեսանկյունից: Տարբեր գործիքների համադրությամբ, ՀԸ գործունեությունը կարող է խթան հանդիսանալ, որպեսզի պետությունները վերանայեն իրենց գործողությունները, ներպետական գործընթացները համապատասխանեցնեն մարդու իրավունքների միջազգային նորմերին ու պահանջներին:

Անդրադառնանք պետության հետ աշխատանքի շրջանակներում մանդատակիրների տրամադրության տակ առկա գործիքներից յուրաքանչյուրին:

## Ա) Կոմունիկացիաներ (անգլ.՝ Communications)<sup>67</sup>

Մարդու իրավունքների ոտնահարումների վերաբերյալ տեղեկատվություն ձեռք բերելուց հետո մանդատ կրողները, եթե հարկ են համարում շարունակել խնդրի ուղղությամբ աշխատանքները, իրավիճակի վերաբերյալ իրենց մտահոգությունները կոմունիկացնում են համապատասխան կառավարության հետ: Կոմունիկացիայի առարկա կարող է հանդիսանալ իրավունքի ոտնահարման անհատական դեպքը, կոլեկտիվ

66. Ս. Սուբեդի, Մարդու իրավունքների պաշտպանությունը՝ Հատուկ ընթացակարգերի մեխանիզմի միջոցով, հասանելի է այստեղ. <https://muse.jhu.edu/article/415616/pdf>

67. ՀԸ վերաբերյալ Տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների ցանցի պատրաստած ձեռնարկը հասանելի է այստեղ. [https://www.escr-net.org/resources/manual-special-procedures-human-rights-council#\\_Toc136667421](https://www.escr-net.org/resources/manual-special-procedures-human-rights-council#_Toc136667421)

դեպքը, այս կամ այն խմբի շահերին վերաբերող իրավիճակը, իրավունքների ոտնահարման համակարգային դրսևորումները, իրավական կամ քաղաքականության փոփոխության խնդիրները:

Կոմունիկացիաները ոչ թե կառավարություններին ուղղված «մեղադրականներ» են, այլ մասնագիտական/փորձագիտական դիտարկումներ կամ մտահոգություններ: Միևնույն ժամանակ, կոմունիկացիան ստանալուց հետո կառավարությունները որևէ կերպ գործելու կամ արձագանքելու պարտավորություն չեն կրում, սակայն արձագանքելով և քայլեր ձեռնարկելով արժարժված խնդիրների շտկման ուղղությամբ՝ մարդու իրավունքների պաշտպանության քաղաքական կամք են դրսևորում:

Հատուկ զեկուցողների կոմունիկացիաները նաև որևէ կերպ չեն փոխարինում ներպետական դատավարություններին. դրանց առանցքային և միակ նպատակն է ստանալ հստակեցումներ և արձագանք կառավարություններից՝ մարդու իրավունքների ենթադրյալ ոտնահարումների վերաբերյալ և այն մասին, թե ինչպիսի քայլեր ու միջոցառումներ է պատրաստվում ձեռնարկել պետությունը ոտնահարված իրավունքները վերականգնելու, խնդիրը լուծելու ուղղությամբ: Հատուկ զեկուցողները կարող են կոմունիկացիաներ ուղարկել կառավարություններին, անգամ երբ տվյալ խնդիր քննության ներպետական մեխանիզմները դեռ սպառված չեն:

Կոմունիկացիաների փոխացման համակարգում իրականացնում է Մարդու իրավունքների Գերագույն հանձնակատարի գրասենյակի Արագ արձագանքման սեկցիան (անգլ.՝ The Quick Response Desk (QRD) of OHCHR): Խրախուսվում է միասնական կոմունիկացիաների (անգլ.՝ Joint communications) պատրաստումը մանդատ կրողների կողմից (երբ դա հնարավոր է), քանզի միասնական կոմունիկացիաներն ավելի ազդեցիկ են կառավարությունների և միջազգային հանրության համար:

Յուրաքանչյուր կոմունիկացիան նամակ է, որը մանդատակրի կողմից Գլխավոր հանձնակատարի գրասենյակի միջոցով փոխանցվում է համապատասխան պետության ներկայացուցչին՝ ժնևում: Կառավարություններին ուղարկված կոմունիկացիաներում տեղեկատվության աղբյուրները չեն նշվում՝ ի պահպանումն չվսասելու սկզբունքի և ի բացառումն հնարավոր հետապնդումների: Աղբյուրները կարող են նշվել միայն վերջիններիս ցանկությամբ: Կախված նրանից, թե կառավարության կողմից ինչպիսի արձագանք է տրվում կոմունիկացիային, մանդատ կրողն արդեն որոշում է, թե հաջորդիվ ինչ գործողությունների պետք է դիմի: Բոլոր կոմունիկացիաներն ու դրանց տրվող պատասխանները ևս կոնֆիդենցիալ են այնքան ժամանակ, մինչև դրանք չհրապարակվեն մադ-

նատը կրողի համապատասխան զեկույցում կամ եթե մանդատ կրողը անհրաժեշտ է համարում դրանց հրապարակումը մինչև զեկույցի պատ-  
րաստումը:

Պետություններին կոմունիկացիաներ ուղարկելիս մանդատակիրը կա-  
րող է հանդես գալ՝

**ա) վկայության նամակով** (անգլ.՝ Letter of allegation) այն պարագայում, երբ իրավունքի ենթադրյալ ոտնահարումն արդեն տեղի է ունեցել, և կարիք կա իրավիճակի հետագա զարգացումը ճիշտ ուղու վրա դնելու, ինչպես նաև, երբ կարիք կա համակարգային փոփոխությունների և շտկումների.

**բ) հրատապ դիմումով** (անգլ.՝ Urgent appeal) այն դեպքում, երբ իրավունքի ոտնահարումը տեղի է ունենում ներկա պահին, և կարիք կա անհապաղ միջամտության և իրավունքի ոտնահարման դադարեցման:

Թե՛ վկայության նամակի և թե՛ հրատապ դիմումի նպատակն է ազդանշել, որ տվյալ կառավարությունը պետք է անհապաղ քայլեր և միջոցառումներ ձեռնարկի իրավիճակը շտկելու և իրավունքի ոտնահարումները դադարեցնելու ուղղությամբ: ՀԸ-ը ներկայացնող փորձագետը կամ փորձագետների խումբը կարող է տրամադրել խորհրդատվություն, պետական կառույցների հետ քննարկել հնարավոր ելքերն ու լուծումները: Կոմունիկացիաները նաև կարևոր գործիք են քաղաքացիական հասարակության ձեռքում՝ կառավարությունների վրա հավելյալ ճնշում գործադրելու, շահերի պաշտպանության իրենց աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու առումով (տե՛ս համապատասխան քննարկումը Բաժին 3.2-ում):

Բացի վերոնշյալից՝ մանդատը կրողը կարող է նաև անցկացնել մամլո ասուլիսներ, տարածել *մամլո հաղորդագրություն* (անգլ.՝ Press statement)՝ տեղական և միջազգային կառույցների ուշադրությունը խնդրի վրա սևեռելու նպատակով:

### **Բ) Պաշտոնական այցեր (անգլ.՝ Country visits)<sup>68</sup>**

Պաշտոնական այցերի իրականացումը կամ փաստահավաք առաքելությունը Հատուկ զեկույցողների/Աշխատանքային խմբերի գործունեության առավել բնութագրական առանձնահատկությունն է:

Գտնվելով երկրում՝ մանդատակիրն ստանում է իրավիճակը տեղում ու-

68. ՀԸ վերաբերյալ Գլխավոր հանձնակատարի գրասենյակի ձեռնարկը հասանելի է այստեղ. [www.ohchr.org/Documents/Publications/NgoHandbook/ngohandbook6.pdf](http://www.ohchr.org/Documents/Publications/NgoHandbook/ngohandbook6.pdf)

սումնասիրելու հնարավորություն՝ կապ հաստատելով իրավունքի ոտնահարման զրհերի, վկաների, իրավապաշտպանների, գիտական համայնքի, տվյալ երկրում գործող միջազգային կառույցների և այլ շահագրգիռ կողմերի հետ: Սա նաև կարևոր միջոց է կառավարության և պետական մարմինների հետ համագործակցության ձեռքբերման համար, ինչը մեծապես ազդելու է խնդրի շուրջ հետագա զարգացումների վրա:

Մանդատակիրները սովորաբար համապատասխան նամակով դիմում են կառավարությանը՝ հայցելով այցի թույլտվություն: Եթե կառավարությունը համաձայնում է, ապա մանդատակիրը ստանում է այցի հրավեր: Երբեմն պետությունները հրապարակում են «մշտական հրավերներ», ինչը նշանակում է, որ նրանք մշտապես պատրաստ են ընդունելու յուրաքանչյուր մանդատակրի:

Պաշտոնական այցերն իրականացվում են «Վարքագծի կանոններին»<sup>69</sup> և «Հատուկ ընթացակարգերի փաստահավաք առաքելությունների առաջադրանքային պայմաններին» (E/CN.4/1998/45) (անգլ.՝ Terms of reference for fact-finding missions by special procedures) համապատասխան:

Մանդատակիրները երբեմն կարող են այս կամ այն երկրում գտնվել ոչ պաշտոնական այցերի կամ ոչ իրենց մանդատից բխող պաշտոնական այցերի շրջանակներում: Այս պարագայում նրանք թեպետ չեն կարող գործել ըստ հաստատված ընթացակարգի, սակայն նրանց ներկայությունը երկրում առիթ է տեղական կառույցների համար՝ կապեր և շփումներ հաստատելու, հետագա ջատագովության հիմքեր ստեղծելու համար:

#### **Գ) Զեկույցների ներկայացում Մարդու իրավունքների խորհրդին և Գլխավոր ասամբլեային (անգլ.՝ Reporting)<sup>70</sup>:**

Մանդատ կրողները առնվազն տարին մեկ անգամ ՄԻԽ-ին կամ Գլխավոր քարտուղարին պետք է զեկույցեն կատարվող աշխատանքների և ընթացիկ իրավիճակի վերաբերյալ: Զեկույցները պատրաստվում են մանդատակրի կողմից ուղարկված կոմունիկացիաների և կատարած այցերի արդյունքում: Այդպիսի զեկույցները երբեմն իրավունքների ոտնահարումների վերաբերյալ ՄԱԿ հասնող միակ կամ առաջնային տեղեկատվությունն են: Փաստացիորեն, Հատուկ ընթացակարգերի միջոցով ՄԱԿ-ն ապահովում է յուրօրինակ գլոբալ մշտադիտարկման գործընթաց:

69. «Վարքագծի կանոններ», 2007, հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/Documents/HRBodies/SP/CodeOfConduct.pdf>

70. ՀԸ վերաբերյալ Կոլումբիայի համալսարանի իրավունքի դպրոցի կողմից պատրաստած ձեռնարկը հասանելի է այստեղ. [https://web.law.columbia.edu/sites/default/files/microsites/human-rights-institute/files/special\\_rapporteurs\\_report\\_final.pdf](https://web.law.columbia.edu/sites/default/files/microsites/human-rights-institute/files/special_rapporteurs_report_final.pdf)

նաև սրանում է տվյալ մեխանիզմի կարևորությունը:

Տարեկան զեկույցներում ներկայացվում են ընտրված խնդիրների զարգացման ընդհանուր միտումները, համապատասխան իրավական նորմերի վերլուծությունները, քաղաքականության առաջարկները և մանդատակրի կողմից առաջ քաշվող ընդհանուր դիտարկումներն ու առաջարկությունները: Սովորաբար, զեկույցին կցվում են մանդատակրի կողմից կառավարություններին ուղարկված բոլոր կոմունիկացիաների ամփոփագրերն ու կառավարությունների կողմից տրված պատասխանները:

Տարեկան զեկույցի հրապարակումից հետո ևս մանդատակիրը կարող է շարունակել կառուցողական երկխոսությունը կառավարության և պետական մարմինների հետ, հայցել հավելյալ տեղեկություններ, տրամադրել խորհրդատվություն: Հետադարձ կապի պահպանման այս շրջանակը, սակայն, ամբողջովին կախված է կառավարության պատրաստակամությունից, ցանկությունից և դրսևորվող քաղաքական կամքից:

Բացի տարեկան զեկույցներից՝ մանդատակիրները պատրաստում են նաև առանձին՝ թեմատիկ ուսումնասիրություններ, որոնցում շոշափվում են առանձին խնդիրներ, իրավական նորմեր, բացերի կարգավորման եղանակներ: Թեմատիկ զեկույցներ կարող են պատրաստվել ՄԻԽ-ի պահանջով, մանդատակիրների սեփական նախաձեռնությամբ կամ ՄԱԿ-ի այլ մարմինների խնդրանքով:

Հատուկ ընթացակարգերի տարեկան և թեմատիկ զեկույցները մարդու իրավունքների խնդիրների շուրջ իրավիճակի նկարագրման, պետությունների կողմից անհրաժեշտ միջոցառումների իրականացման, միջազգային իրավական նորմերի զարգացման կարևոր աղբյուր են և կարող են ազդեցիկ և օգտակար գործիք լինել շահագրգիռ կողմերի լայն շրջանակի՝ հասարակական կազմակերպությունների, դոնոր-համայնքի, հետազոտական կառույցների, միջազգային գործակալությունների, քաղաքացիական հասարակության ձեռքում:

ԲԱԺԻՆ

3

---



**ԱՇԽԱՏԱՆՔ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ  
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՀԵՏ՝  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՄԲ  
ԶԲԱՂՎՈՂ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ  
ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ  
ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԽԹԱՆՄԱՆ  
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Այս բաժնում կանդրադառնանք Պայմանագրային մարմինների և Հատուկ ընթացակարգերի հետ աշխատանքների իրականացման, համագործակցության հնարավորություններին և մեխանիզմներին, որոնք կարող են օգտագործվել քաղաքացիական հասարակության դերակատարների կողմից՝ ներպետական մակարդակում մարդու իրավունքների պաշտպանությունը խթանելու նպատակով:

Բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝

- 3.1. Պայմանագրային մարմինների հետ ոչ պետական դերակատարների աշխատանքի ձևաչափ և հիմնական տարբերակներ.
- 3.2. Հատուկ ընթացակարգերի հետ ոչ պետական դերակատարների աշխատանքի ձևաչափ և հիմնական տարբերակներ.
- 3.3. Աշխատանք Պայմանագրային մարմինների և Հատուկ ընթացակարգերի հետ՝ հայաստանյան փորձի դիտարկում:

**3.1. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ  
ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԱԶԱՓ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ**

Մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված օրենսդրական կարգավորումների և/կամ քաղաքականության փոփոխության ջատագովության ընթացքում քաղաքացիական հասարակության կողմից ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների մեխանիզմների կիրառումը հնարավոր է իրականացնել պայմանականորեն տարանջատված հետևյալ միջոցներով՝

- Պայմանագրային մարմիններին և հատուկ ընթացակարգերին զեկույցների ներկայացում և դրանցում բարձրաձայնաձ խնդիրների ուղղությամբ Պետությանն ուղղված առաջարկների լրբբինգ.
- Պայմանագրային մարմիններին անհատական դիմումների ներկայացում՝ մարդու իրավունքների մեկնաբանության և Պետությանն

ուղղված ինչպես նեղ, այնպես էլ լայն առաջարկների ստացման նպատակով.

- Պետությանը ներկայացված առաջարկների և տրված մեկնաբանությունների հիման վրա օրենսդրական կարգավորումների և/կամ քաղաքականության փոփոխության ջատագովություն:

ՄԱԿ-ի պայմանագրային մեխանիզմներից որևէ մեկի ընտրության դեպքում պետք է հաշվի առնել որոշակի հանգամանքներ, որոնք իրատեսական են դարձնում հետապնդած նպատակի իրականացումը: Մասնավորապես, դրանց կիրառման նպատակահարմարությունը հնարավոր է գնահատել՝ ելնելով նրանից, թե ինչ բնույթի առաջարկներ են ներկայացվում տվյալ մարմնի կողմից՝ ներառյալ առաջարկների լրացնող կամ ավելի որոշակիացնող լինելը, որքանով է պետությունը պատրաստակամ կամ արդեն իսկ ներգրավված տվյալ մարմնի առաջարկների կատարմանը, առաջարկների կատարման նկատմամբ վերահսկողության ինչ մեխանիզմներ ունի տվյալ մարմինը:

Պայմանագրային մարմինների կողմից ներկայացված առաջարկները կարող են լինել<sup>71</sup>

- Հրատապ միջոցներ ենթադրող (օրինակ՝ ՄԻԿ, ՌԻՎԿ).
- Դաշնագրի դրույթների տեղայնացմանը և կատարմանն ուղղված ընդհանուր դիտարկում (օրինակ՝ ԿԻՎԿ).
- Որոշակի ժամկետում հարաբերականորեն հեշտ կատարման ենթակա (օրինակ՝ ԿԻՎԿ, ԽԴԿ):

Անհատական դիմումների քննության արդյունքում պետությանը ներկայացված առաջարկները կարող են լինել ինչպես ընդհանուր բնույթի՝ որոշակի օրենսդրական փոփոխություն կամ ընդհանուր քաղաքականության որդեգրում նախատեսող, այնպես էլ նեղ՝ տվյալ դիմումատուի իրավունքների վերականգնմանն ուղղված գործողություններ ենթադրող:

Առաջարկների կատարման ջատագովությունը ենթադրում է ինչպես իրազեկման աշխատանքներ տարբեր պետական և ոչ պետական մարմինների շրջանում, այնպես էլ առաջարկների կատարման մշտադիտարկման հիման վրա անհրաժեշտ մասնագիտական ռեսուրսով աջակցության տրամադրում պետությանը: Մասնավորապես, պետական մարմինների հետ գտնելով համագործակցության եզրեր՝ հնարավոր է ներգրավվել

71. ISHR, ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների վերաբերյալ ուղեցույց, էջ. 21. Հասանելի է այստեղ. [http://www.ishr.ch/sites/default/files/documents/ishr\\_simpleguide\\_eng\\_final\\_final\\_dec15.pdf](http://www.ishr.ch/sites/default/files/documents/ishr_simpleguide_eng_final_final_dec15.pdf)

նաև առաջարկների կատարման գործընթացին, օրինակ՝ դասընթացների վարման կամ հանրային իրազեկման աշխատանքների իրականացման միջոցով:

### **Ա) Հասարակական կազմակերպությունների կողմից զեկույցների ներկայացումը ՄԱԿ-ի պայմանագրային մարմիններին՝ որպես ադվոկացիոն գործիք**

ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների աշխատանքում ներգրավվելու՝ պետության ներկայացրած զեկույցների, ստանձնած պարտավորությունների հիման վրա մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված օրենսդրական փոփոխությունների կամ քաղաքականության ջատագովության արդյունավետ իրականացման համար կարևոր է հինգ նախնական քայլ՝

- Պարզել, թե որ դաշնագրերին է միացել տվյալ պետությունը և դրանցից որոնք է վավերացրել, որ կամընտիր արձանագրություններն է վավերացրել, և թե ինչ հնարավորություններ են նախատեսված դրանցով:
- Կապ հաստատել պետական լիազոր մարմնի հետ, որը պատասխանատու է պայմանագրային մարմիններին զեկույցներ ներկայացնելու և դրանց առաջարկների կատարումը վերահսկելու համար:
- Պարզել, թե որն է միջազգային դաշնագրերի ստորագրման և վավերացման համար պատասխանատու պետական մարմինը:
- Ուսումնասիրել պետության կողմից ներկայացված զեկույցները և կոմիտեների կողմից դրանց առնչությամբ տրված դրական և բացասական եզրակացությունները, առաջարկները:
- Պարզել զեկույցների ներկայացման ժամկետները:

Պայմանագրային մարմինները որպես մեխանիզմ կիրառելու համար հարկավոր է ոչ միայն հետևել պետության ներկայացրած զեկույցներին և դրանց քննարկմանը, այլ նաև ջատագովել այն դաշնագրերի վավերացումը, որոնք էական նշանակություն ունեն տվյալ պետության ներսում մարդու իրավունքների պաշտպանության համար: Հետազոտելով մարդու իրավունքների համակարգային խնդիրները և վեր հանելով դրանց պատճառները՝ հնարավոր կլինի հիմնավորել համապատասխան դաշնագրի վավերացման անհրաժեշտությունը:

Հասարակական կազմակերպությունները կոմիտեների աշխատանքները

րին կարող են մասնակցել<sup>72</sup>

- զեկուցման.
- զեկույցների քննության, առաջարկների ներկայացման.
- դրանց կատարման նկատմամբ վերահսկողության փուլերում:

### Պետության զեկույցի պատրաստման փուլ

Նախքան պետության կողմից զեկույցի ներկայացումը պետական լիազոր մարմինը ձևավորում է զեկույցի պատրաստման աշխատանքային խումբ, որը մշակում է այն: Այս փուլում կարևոր է պետական լիազոր մարմնի հետ աշխատանքը՝ պետության զեկույցում օբյեկտիվ, համապարփակ և բազմակողմանի տեղեկատվություն ներառելու համար:

Որոշ պետություններ ունեն հասարակական կազմակերպություններին զեկույցի պատրաստման աշխատանքային խմբի աշխատանքներին ներգրավելու ֆորմալ և ոչ ֆորմալ ընթացակարգեր: Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի պայմանագրային մարմիններին ներկայացվող զեկույցները մշակվում են Արտաքին գործերի նախարարության կողմից, որը զեկույցի ներկայացումից առաջ հասարակական կազմակերպություններին հրավիրում է հանրային քննարկման և ընդունում է գրավոր ու բանավոր առաջարկներ արդեն իսկ մշակված զեկույցի նախնական տարբերակի շուրջ: Հասարակական կազմակերպությունները հնարավորություն են ստանում ոչ միայն ներկայացնել իրենց տեսակետը, այլ նաև հանդես գալ գրավոր ձևակերպված և հիմնավորված առաջարկներով: Ներկայացված առաջարկները քննարկվում են աշխատանքային խմբի կողմից և ընդգրկվում կամ չեն ընդգրկվում զեկույցում:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար այս փուլում շատ կարևոր է փաստերի վրա հիմնված տեղեկատվության հավաքումն ու դրանով պայմանավորված առաջարկների ներկայացումը: Որքան հիմնավորված են առաջարկները, աշխատանքային խմբի համար այնքան դժվար կլինի մերժել այն: Միևնույն ժամանակ, կարևոր է պետական լիազոր մարմնի աշխատանքային խմբի հետ գործընկերային հարաբերությունների հաստատումը, որի պարագայում առաջարկների ընդունման շուրջ բանակցությունները կարող են լինել գործընկերային, ոչ թե մրցակցային մթնոլորտում, ինչը դրանց բավարարման լրացուցիչ երաշխիք է: Օրինակ՝ նախքան զեկույցի մշակումը պետական լիազոր մարմնի ներկայացուցիչների հետ հանդիպումը և կազմակերպության

72. Հասարակական կազմակերպությունների մասնակցության ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/en/hrbodies/cat/pages/ngosnhris.aspx>

փորձի, մասնագիտական և տեղեկատվական ռեսուրսի ներկայացումը, ինչպես նաև աջակցության պատրաստականության հայտնումը կարող է հիմք լինել այդպիսի գործընկերային հարաբերության ձևավորման համար: Հնարավորության պարագայում ընդունելի է նաև պետական լիազոր մարմնի ներկայացուցիչների հետ առաջարկների ընդունման հնարավորության հարցի քննարկումը ոչ ֆորմալ գրույցի ձևաչափով, որի ընթացքում կարող է պարզ դառնալ տվյալ մարմնի քաղաքականությունը և համագործակցելու պատրաստականությունը:

Այս հարցում կարևոր է նաև ներկայացվող հարցի բնույթը. որքան խոցելի է պետության քաղաքականությունը խնդրո առարկա հարցի առնչությամբ, այնքան դժվար է դրա՝ զեկույցում ներառելու լրբինգը: Օրինակ՝ եթե պետությունը խուսափում է օրենսդրական կարգավորումներ նախատեսել այնպիսի զգայուն հարցերի շուրջ, ինչպիսիք են սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության, առողջության հիմքով խտրականությունը, ապա պետք չէ ակնկալել այս հարցերի շուրջ տեղեկատվության ներառումը պետության զեկույցում: Այնուամենայնիվ, առաջարկը պետք է հիմնավորել ոչ միայն երկրում արձանագրված իրավիճակով, այլ նաև նույն կոմիտեների կամ մարդու իրավունքների պաշտպանության այլ մարմինների կողմից նախկինում կատարված առաջարկներով, որի դեպքում պետության կողմից դրա չընդգրկումը զեկույցում կլինի անհիմն, և հետագայում հնարավոր կլինի կոմիտեի միջոցով պետությունից պահանջել անդրադառնալ այդ խնդրին:

Հասարակական կազմակերպությունները կարող են տեղեկատվություն ներկայացնել ինչպես պետության ներկայացրած զեկույցի, այնպես էլ կոմիտեների կողմից տրամադրված հարցադրումների ցանկի շուրջ: Եթե կոմիտեի կողմից պետությանն են ներկայացվել հարցադրումներ նախքան զեկույցի քննարկման փուլը, ապա հասարակական կազմակերպությունների կողմից այդ հարցադրումների շուրջ տեղեկատվության տրամադրումը նպատակահարմար է, եթե այդ տեղեկատվությունը չի ընդգրկվել կազմակերպության զեկույցում:

### **Զեկույցների քննության փուլ**

Անկախ պետական լիազոր մարմնի կողմից զեկույցի վերաբերյալ կազմակերպությունների առաջարկների ընդունման կամ մերժման հանգամանքից՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից անմիջական զեկույցի ներկայացումը հնարավորություն է ևս մեկ անգամ խնդիրը համապարփակ ներկայացնելու և պետությանն ուղղված հստակ առաջարկներ ձևակերպելու համար: Հասարակական կազ-

մակերպությունների կողմից զեկույցների ներկայացումը, նախ և առաջ, կարևոր է կոմիտեների համար՝ պետության ձեռնարկած քայլերի վերաբերյալ այլընտրանքային տեղեկատվություն ստանալու առումով: Բացի դրանից՝ այս մեխանիզմը կարևոր է հենց հասարակական կազմակերպությունների համար՝ երկրում առկա խնդիրները բարձրաձայնելու, կոմիտեների ուշադրությունը պետության ձախողումների կամ թերացումների վրա հրավիրելու նպատակով:

Հասարակական կազմակերպությունները կարող են զեկույցում ներկայացնել իրենց դիտարկումները պետության թերացումների և ձախողումների, ինչպես նաև ձեռքբերումների և փոփոխությունների վերաբերյալ (այլընտրանքային զեկույց): Այս դեպքում զեկույցում կարող է անդրադարձ չկատարվել պետության ներկայացրած տեղեկատվությանը: Հասարակական կազմակերպությունները կարող են նաև ներկայացնել իրենց դիտարկումները պետության զեկույցում տեղ գտած տեղեկատվության վերաբերյալ՝ վիճարկելով դրանց իսկությունը կամ հակադարձելով դրանց (ստվերային զեկույց):

Հասարակական կազմակերպությունները կարող են ներկա լինել կոմիտեների շրջափուլի հանդիպումներին: Այս կերպ նրանք հնարավորություն են ունենում դիտարկելու պետության ներկայացուցչի պարզաբանումները և այդ առնչությամբ տարբեր մեխանիզմներով ներկայացնելու իրենց առարկությունները: Այս փուլում հասարակական կազմակերպությունները հնարավորություն ունեն մասնակցելու *հատուկ կազմակերպվող բրիֆինգներին* և ներկայացնելու իրենց դիտարկումները:

Որոշ կոմիտեներ հասարակական կազմակերպություններին ներառում են աշխատանքային խմբի աշխատանքներին՝ մինչև լսումները: Օրինակ՝ սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների կոմիտեի աշխատանքային խմբի հանդիպումները բաց են հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար: Որոշ դեպքերում, այն հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնք կոմիտեներին զեկույց են ներկայացրել, կարող են հրավիրվել մասնակցելու աշխատանքային խմբի հանդիպմանը: Հասարակական կազմակերպությունները կարող են հակիրճ ներկայացնել նաև իրենց զեկույցները նախալսումների ընթացքում: Այս տարբերակը կիրառելի է Կանանց նկատմամբ խտրականության վերացման և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեների աշխատանքում: Այնուամենայնիվ, բացի բրիֆինգներին մասնակցությունից՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, ներկա լինելով կոմիտեների լսումների շրջափուլին, կարող են զրույցներ ունենալ փորձագետների հետ

ընդմիջումների ընթացքում՝ ներկայացնելով իրենց զեկույցի հիմնական առարկան՝ դրանով ուշադրություն հրավիրելով առանցքային կարևորության հարցերի վրա:

Պետության կողմից ներկայացված զեկույցները, դրանց լսումները, կոմիտեի բարձրացրած հարցերն ու եզրակացությունները հասանելի են առցանց հարթակում և ցանկացած պահի ցանկացած անձ կարող է ծանոթանալ դրանց բովանդակությանը: Ցանկացած միջոցով կոմիտեներին տեղեկատվություն ներկայացնելիս կարևոր է դրա՝ փաստերով և վկայություններով հիմնավորված լինելը: Հակառակ դեպքում ներկայացված տեղեկատվությունը կարող է հիմք չլինել կոմիտեների կողմից պետությանը համապատասխան առաջարկ ներկայացնելու համար:

Պետության իրավիճակի և խնդիրների շուրջ տեղեկատվության ուսումնասիրությունից հետո կոմիտեները ներկայացնում են եզրակացություն և առաջարկներ այն միջոցառումների վերաբերյալ, որոնք պետք է ձեռնարկվեն դաշնագրերով ստանձնած պարտավորությունները կատարելու համար: Այս առաջարկները կարող են օգտագործվել հասարակական կազմակերպությունների կողմից պետական մարմինների հետ աշխատանքում՝ այդ խնդիրների լուծման ջատագովության նպատակով:

Հասարակական կազմակերպությունների ներգրավվածությունն այս փուլում կարևոր է տեղում իրենց դիրքորոշումը պաշտպանելու և կոմիտեի անդամների ուշադրությունը կարևոր խնդիրների վրա սևեռելու առումով: Ի լրումն՝ այդ ներգրավվածությունը հնարավորություն է տալիս նաև հետագայում *մշտադիտարկել պետության ձեռնարկած միջոցառումները և կատարած քայլերը, ինչպես նաև թերացումների և բացթողումների վերաբերյալ կոմիտեներին ներկայացնել ընթացիկ զեկույցներ*, կամ դիմել նրանց համակարգային խնդիրների վերհանման դեպքում:

### **Կոմիտեների առաջարկների կատարման և դրա նկատմամբ վերահսկողության փուլ**

Անկախ նրանից, որ պետություններին տրված առաջարկները չկատարելու համար իրավական պատասխանատվության միջազգային մեխանիզմներ նախատեսված չեն, վավերացնելով միջազգային դաշնագրերը՝ պետությունը ստանձնում է պարտավորություն՝ ենթարկվել մշտադիտարկման և տեղայնացնել համապատասխան դաշնագրերի դրույթները: Կոմիտեների կողմից կատարված առաջարկների անտեսումը կարող է հանգեցնել նաև պետության վարկանիշի անկմանը՝ արտացոլելով մարդու իրավունքների պաշտպանվածության ու ժողովրդավարական ինստիտուտների կայացվածության աստիճանը:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավումը պայմանագրային մարմինների զեկուցման գործընթացին բխում է ոչ միայն տվյալ կազմակերպության, դրա շահառուների շահերից, այլ նաև հենց պետության շահերից: Հետևաբար, արդյունավետ ջատագովություն իրականացնելու համար ևս կարևոր է թիրախ հանդիսացող պետական մարմնի կողմից ընկալվել որպես գործընկեր և վերջինին ցույց տալ համագործակցության հնարավորությունները:

Հասարակական կազմակերպությունները, դիտարկելով պետության օրինաստեղծ գործունեությունը, ինչպես նաև մասնակցելով օրենսդրական նախագծերի, քաղաքականությունների մշակման շուրջ քննարկումներին և տեսնելով դրանցում հակասություններ պետության ստանձնած միջազգային պարտավորությունների հետ, կարող են պետական մարմինների ուշադրությունը հրավիրել այդ դիտարկումների վրա, որոնք կատարվել են կոմիտեների անդամների կողմից, և այն քայլերի վրա, որոնք պետությունը հանձն է առել իրականացնել: Պետական մարմինների կողմից իրենց ստանձնած պարտավորություններում թերացումներ կամ ձախողումներ արձանագրելու դեպքում հասարակական կազմակերպությունները կարող են ցանկացած պահի դիմել համապատասխան պետական մարմնին՝ առաջարկելով վերանայել գործող քաղաքականությունը:

Հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ջատագովության շրջանակներում միջազգային մարմինների հնչեցրած առաջարկների կիրառումը հնարավորություն է տալիս փաստել, որ տվյալ առաջարկը բխում է մարդու իրավունքների պաշտպանության էությունից և դրանց սկզբունքներից բխող անհրաժեշտությունից: Հետևաբար, կարևոր է մարդու իրավունքների վերաբերյալ մեկնաբանություններ տվող կոմիտեների հետ աշխատանքը՝ երկրում տիրող իրավիճակը ճիշտ ներկայացնելու և դիպուկ առաջարկներ ստանալու տեսանկյունից:

Հետևաբար, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները այս փուլում պետք է հանձն առնեն հետևյալ քայլերի արդյունավետ իրականացումը՝

- Տվյալ ոլորտում իրավիճակի մշտադիտարկում, փաստերի հավաքում և վերլուծություն

*Փաստերի հավաքումն ու իրավիճակի վերլուծությունը հնարավոր է տվյալ ոլորտում մշտական աշխատանք տանելու կամ այդպիսի գործունեություն ծավալող կազմակերպության հետ համագործակցության արդյունքում: Սա կարևոր է շահառուների իրավիճակը և կարիքները*



ճիշտ ընկալելու և գնահատելու տեսանկյունից:

- Մարդու իրավունքների միջազգային մարմինների կողմից տրված վերաբերելի առաջարկների ամփոփում

Կարևոր է տվյալ ոլորտի կարգավորումների շուրջ մարդու իրավունքների պաշտպանության այլ միջազգային մարմինների կողմից տրված մեկնաբանությունների և առաջարկների ուսումնասիրությունն ու ամփոփումը, քանի որ այդ առաջարկները փոխկապակցված են և բխում են մեկը մյուսից: Միևնույն ժամանակ, կախված տվյալ մարմնի դերից և նրա առաջարկների կիրառումն ապահովող մեխանիզմների արդյունավետությունից, հնարավոր է ավելի արդյունավետ լոբբինգ իրականացնել: Մյուս կողմից, հնարավոր է, որ նույն ոլորտի կարգավորմանն ուղղված առաջարկներից մեկը լինի ավելի ընդհանրական, իսկ մյուսը՝ ավելի որոշակի: Դրանց համադրումը հնարավորություն կտա առաջարկներն ամփոփել ըստ էության և հստակորեն:

- Տվյալ ոլորտում իրավասու պետական մարմնի տարանջատում

Իրավասու պետական մարմնի տարանջատումը կարևոր է առաջարկները և գործողությունները արդյունավետ թիրախավորելու համար: Օրինակ՝ եթե նպատակը օրենսդրական կարգավորման հասնելն է, ապա չի կարելի անտեսել օրենսդիր մարմնի դերը՝ միևնույն ժամանակ թիրախավորելով գործադիր մարմնի այն ստորաբաժանմանը, որը տվյալ պահին պատասխանատու է օրենսդրական ակտի մշակման համար: Այս պարագայում անհրաժեշտ է տարանջատել այդ մարմիններին ուղղված գործողությունները և դրանք իրականացնել հաջորդականությամբ՝ ըստ ժամկետային անհրաժեշտության:

- Իրավասու պետական մարմնի հետ հաղորդակցային կապի հաստատում և գործընկերային մթնոլորտի ձևավորում

Ունենալով ամփոփված և վերլուծված տվյալներ իրավիճակի և անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ՝ անցում է կատարվում դրանց իրականացմանը, որի սկզբնական փուլում պետք է փորձել կապ հաստատել համապատասխան պետական մարմինների ներկայացուցիչների հետ: Արդյունավետ հաղորդակցություն ստեղծելու համար հարկավոր է ընտրել այդ ուղղությամբ քայլեր ձեռնարկելու ճիշտ ժամանակը և միջոցը: Նախ և առաջ, պետք է հաշվի առնել պետական մարմինների օրակարգային հարցերը և գնահատել տվյալ հարցի բարձրացման նպատակահարմարությունը: Պետական մարմինների հետ պայմանավորվածություն ձեռք բերելու համար կարող է նպատակահարմար լի-

նել ինչպես պաշտոնական նամակագրության, այնպես էլ ոչ ֆորմալ հաղորդակցման միջոցը՝ հաշվի առնելով տվյալ մարմնի ներկայացուցչի անհատականությունը և դերը: Ոչ ֆորմալ պայմանավորվածություն ձեռք բերելու դեպքում կարևոր է դրա նկատմամբ հետևողականությունը:

- Առաջարկված գործողությունների իրականացման համար ռեսուրսների տրամադրում

Այս հանդիպումների ընթացքում պետք է ներկայացվեն ոչ միայն իրականացված մշտադիտարկման և վերլուծության տվյալները, այլ նաև կազմակերպության ռեսուրսները, որոնցով վերջինս պատրաստ է աջակցել պետության կողմից անհրաժեշտ գործողությունների կատարմանը: Մասնավորապես, հասարակական կազմակերպությունները կարող են պետությանն աջակցել մարդու իրավունքների միջազգային մեկնաբանություններին համապատասխան օրենսդրական կարգավորումներ և քաղաքականություն մշակելու, պայմանագրային մարմիններին զեկույցներ ներկայացնելու, պետության ներսում մարդու իրավունքների համընդհանրության մշակույթը տարածելու, ինչպես նաև դասընթացներ և իրազեկության բարձրացման արշավներ վարելու հարցերում:

- Ձեռնարկված միջոցների արդյունավետության գնահատում

Յուրաքանչյուր գործողության, հանդիպման և պայմանավորվածության ամփոփումը պետք է իրականացվի անմիջապես՝ գնահատելով դրա արդյունավետությունը կամ կատարման իրատեսականությունը: Արդյունավետության գնահատումն իրականացնելիս որպես ցուցիչ պետք է հաշվի առնել քննարկմանը մասնակից իրավասու պետական մարմնի ներկայացուցչի դերը տվյալ մարմնում, ինչպես նաև պայմանավորվածությունների ժամկետների և քայլերի հստակության աստիճանը:

- Կոմիտեների առաջարկների կատարման վերաբերյալ միջանկյալ զեկույցների տրամադրում

Մշտադիտարկելով պետության կողմից ձեռնարկված միջոցները, իրականացված քայլերը և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին այդ գործողությունների կատարմանը ներգրավելու պատրաստակամությունը՝ կազմակերպությունները կարող են կոմիտեների ներկայացնել միջանկյալ զեկույցներ մինչև պարբերական զեկույցման հաջորդ շրջափուլը:

Պետության կողմից քաղաքացիական հասարակության ներգրավումը միջազգային պարտավորություններից բխող գործողությունների իրականացմանը խոսում է մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված արդյունավետ քայլեր ձեռնարկելու վերջինիս պատրաստակամության և քաղաքական կամքի մասին: Ներգրավման միջոցների վերաբերյալ պետությունների փորձը միատեսակ չէ:

*Օրինակ՝ Մոլդովան 2012 թ. իրականացրեց մի շարք փոփոխություններ՝ մշակելով գործողությունների պլան՝ Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի դրույթների տեղայնացման նպատակով: Այս գործողությունները մշակվեցին 2011 թ. պետության իրավիճակի դիտարկման արդյունքների հիման վրա, երբ ոչ միայն Մոլդովայի կառավարության ներկայացուցիչները, այլ նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և մարդու իրավունքների ազգային մարմինը հնարավորություն ունեցան մասնակցելու կոմիտեի կազմակերպած քննարկմանը և համատեղ վեր հանելու Մոլդովայում առկա խնդիրները:*

*Չնայած մտահոգություններն առ այն, որ պետությունները խուսափում են զեկույցները պատշաճ ժամանակին ներկայացնելուց և չեն անդրադառնում որոշ համակարգային խնդիրների, քիչ չեն նաև դրական արդյունքները:*

*Ուշագրավ է նաև Կամբոջայի օրինակը, որտեղ տեղական կազմակերպությունների (UN Theme Group on Gender (UNTGG), UN Country Team (UNCT)) կողմից Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեին ներկայացված զեկույցից հետո կառավարությանը ներկայացվեցին լրացուցիչ պարզաբանման ենթակա հարցեր՝ կապված գենդերային խտրականության, կանանց նկատմամբ բռնության, կանանց աշխատանքի վերաբերյալ: Արդյունքում մեկնարկեց կառավարության և կազմակերպությունների համագործակցություն, որի շրջանակներում կառավարությունը ստացավ խորհրդարանական աջակցություն կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեի հետ կառուցակողական երկխոսության հարցում, ինչպես նաև համատեղ կազմակերպվեցին դասընթացներ նախարարությունների աշխատակիցների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների համար՝ գենդերային հիմնահարցերի վերաբերյալ:*

*Հարավային Աֆրիկայի պառլամենտական միության ծրագրի շրջանակներում բոլոր պետությունների ազգային զեկույցները քննության են առնվում օրենսդիր մարմնում: Օրենսդիր մարմինը սահմանադրությամբ լիա-*

գորված է քննել կառավարության գործողությունները՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությանը, և այս առնչությամբ հրավիրել հանրային լսումներ, տարբեր հասարակական խմբերից ընդունել դիտարկումներ կառավարության քաղաքականության և քայլերի վերաբերյալ: Միևնույն ժամանակ, օրենսդիր մարմնի ներկայացուցիչներն ընդգրկված են պայմանագրային մարմիններում զեկույցը ներկայացնող պատվիրակություններում:

Պայմանագրային մարմինների որոշումների պարտադիր կատարումն ապահովող մեխանիզմների բացակայության համատեքստում դրանց կիրառման տոկոսային արտացոլումը տատանվում է: 1999 թ. Գլխավոր ասամբլեային ներկայացված զեկույցում Մարդու իրավունքների կոմիտեի որոշումների կատարումը գնահատվել է 30 տոկոս<sup>73</sup>:

Որոշ պետություններ ստեղծել են հատուկ մեխանիզմներ պայմանագրային մարմինների առաջարկների կատարման ընթացքի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով:

Գործի ուսումնասիրություն. Միացյալ Թագավորության Մարդու իրավունքների խորհրդարանական համատեղ հանձնաժողովին հանձնարարված է դիտարկել Միացյալ Թագավորությունում մարդու իրավունքներին վերաբերող հարցերը: Այս հանձնաժողովը լիազորված է ուսումնասիրելու ակտերի համապատասխանությունը մարդու իրավունքների պաշտպանության միջազգային պայմանագրերին: Այս գործառույթը ներառում է նաև Պայմանագրային մարմինների եզրակացությունների կատարման մշտադիտարկումը: Հանձնաժողովը վերլուծում է կառավարության քաղաքականության համապատասխանությունը մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերին՝ վերջինիս ուշադրությունը հրավիրելով համապատասխան դրույթների վրա, որոնց շուրջ պետությունը պետք է ներկայացնի զեկույց համապատասխան շրջափուլերի ընթացքում:

Միասնական հանձնաժողովի գործառույթները ներառում են ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների պայմանագրերին համապատասխանության հիմնական ստուգումը, որն ընդգրկում է ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների Եզրափակիչ դիտարկումների կատարման մոնիթորինգը: Ըստ Կոմիտեի՝ դա նաև ավելի լայն նպատակ է հետապնդում, որը միտված է կառավարության քաղաքականության՝ միջազգային պարտավորությունների հիմք հանդիսացող միջազգային պայմանագրերին համապատասխանության հարցի վրա ներքին խորհրդարանական և հասարակության ուշադրություն հրավիրելուն, ինչպես նաև այդ պայմանագրերի և դրան-

73. Report of the HRC, UN Doc. A/54/40 (Vol. 1) (1999), paras. 458–59

ցում մարմնավորված մարդու իրավունքների սկզբունքների վերաբերյալ բանավեճը խթանելուն: Յուրաքանչյուր հաշվետու փուլում այս պայմանագրերից յուրաքանչյուրի հետևանքների վրա կենտրոնանալը ակտիվորեն կազդի կառավարության քաղաքական դիրքորոշման ձևավորման վրա, երբ այն պատրաստվում է իր հերթական պարբերական զեկույցը ներկայացնել դիտորդ մարմնին:

Հարավային Աֆրիկայի խորհրդարանական կապի ծրագիր. Հարավային Աֆրիկայում մարդու իրավունքների պայմանագրերով ներկայացված բոլոր ազգային զեկույցները քննարկվում են խորհրդարանում: 1996 թ. Սահմանադրության համաձայն (42 (3) և 55 (2) հոդվածներ) խորհրդարանը լիազորված է վերահսկելու կառավարության գործողությունները, և այն այդ մանդատն օգտագործում է կառավարության՝ մարդու իրավունքների վերաբերյալ փաստաթղթերը ուսումնասիրելու համար: Քննարկումների ընթացքում խորհրդարանն անցկացնում է հասարակական լսումներ, նախարարների կանչեր և փաստաթղթեր ու զեկույցներ է պահանջում գերատեսչություններից և քաղաքացիների խմբերի լայն շրջանակից: Խորհրդարանի անդամներն ընդգրկվում են պայմանագրային մարմինների ազգային պատվիրակություններում՝ ապահովելով, որ նրանք ավելի լավ հասկանան պայմանագրային մարմինների առաջարկությունները:

**Բ) Անհատական դիմումների արդյունքում պայմանագրային մարմինների որոշումների կատարումը և այդ ուղղությամբ հասարակական կազմակերպությունների աշխատանքը**

Ինչպես նկարագրված է նախորդ գլխում, մարդու իրավունքների կոմիտեները քննում են նաև անհատական դիմումներ համապատասխան դաշնագրով ճանաչված իրավունքների ոտնահարումների վերաբերյալ: Անհատական դիմումների քննության արդյունքում կոմիտեի կողմից կայացված որոշմամբ տրվում են դաշնագրերում ամրագրված իրավունքների մեկնաբանություններ, որոնք կարող են լինել ինչպես նախկինում տրված մեկնաբանությունների վերահաստատում տվյալ իրավիճակին համապատասխան, այնպես էլ նոր մեկնաբանություններ: Մարդու իրավունքների դաշնագրերի դրույթների նոր մեկնաբանությունները հիմք են հանդիսանում իրավունքի զարգացման համար և դրան տալիս են նոր կիրառություն՝ ժամանակի իրադրությանը համահունչ:

Անհատական դիմումների քննության արդյունքում կոմիտեների մեկնաբանությունները կարող են կիրառվել ոչ միայն հենց խնդրո առարկա գործով պետությունից մարդու իրավունքների խախտումը վերացնե-

լու և արդարության վերականգնման պահանջ ներկայացնելու համար, այլ նաև նման այլ իրավիճակներում՝ հիմնավորելու համար պետական մարմինների որևէ միջամտության, գործողության կամ անգործության ոչ իրավաչափությունը:

Քննելով մարդու իրավունքների ոտնահարումների դեպքերը՝ կոմիտեները կայացնում են որոշում ոչ միայն տվյալ գործով իրավախախտումը վերացնելու նպատակով պետության կողմից կատարման ենթակա քայլերի վերաբերյալ, այլ նաև օրենսդրական բացերի և թերի կարգավորումների վերաբերյալ: Հիմք ընդունելով կոմիտեի եզրակացությունները՝ պետությունները պետք է վերանայեն ներպետական օրենսդրական կարգավորումները, որդեգրեն որոշակի քաղաքականություն: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից օրենսդրական փոփոխությունների ջատագովման ընթացքում կոմիտենների կայացրած որոշումների վկայակոչումը հնարավորություն է տալիս ներկայացնել ավելի հիմնավորված և պատճառաբանված առաջարկներ և պետական մարմիններին հիշեցնել կոմիտենների կայացրած որոշումներում նշված թերի կարգավորումների և բացերի շտկման անհրաժեշտության մասին:

Մինևույն ժամանակ, կոմիտենների որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության շրջանակներում պետության պատասխանատվության մեխանիզմների բացակայությունը հաճախ պատճառ է հանդիսանում դրանց անտեսման համար: Մարդու իրավունքների մեկնաբանման միջազգային փորձը, միաժամանակ, կիրառվում է ներպետական օրենսդրական կարգավորումներին զուգահեռ՝ տարբեր պետություններում տարբեր հիմունքներով: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ մարդու իրավունքների վերաբերյալ սահմանադրական դրույթները մեկնաբանելիս պետք է հաշվի առնվի ՀՀ կողմից վավերացված՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Անդրադառնալով պայմանագրային մարմինների որոշումների՝ պետության կողմից պարտադիր կատարման ենթակա լինելուն՝ որպես լավագույն փորձ կարելի է դիտարկել Իսպանիայի օրինակը:

«*Գոնսալեսն ընդդեմ Իսպանիայի*»<sup>74</sup> գործում դիմումատուն ընտանեկան բռնության զոհ էր, որը դատարան էր դիմել ամուսնու կողմից երեխային այցելությունները սահմանափակելու և դրանք սոցիալական ծառայության աշխատակիցների ներկայությամբ անցկացնելու խնդրանքով, սակայն դատարանը որոշել էր երկարաձգել այցերը՝ հոր և երեխայի շփումը

74. Communication No. 47/2012\* Gonsalez v. Spain:

սերտացնելու նպատակով: Չնայած նրան, որ հոր հոգեկան առողջության խնդիրները հաստատվել էին փորձագետի կողմից, և որ երեխան վախենում էր նրա հետ շատ ժամանակ անցկացնել, դատարանը որոշում էր կայացրել այցերն առանց սոցիալական ծառայողների անցկացնելու վերաբերյալ:

Այցելություններից մեկից հետո ոստիկանները գտել էին երեխայի և հոր դիրքը: Վերջինս սպանել էր երեխային, այնուհետև ինքնասպանություն գործել:

Կինը դիմել էր դատարան՝ պահանջելով ճանաչել արդարադատության ոչ պատշաճ իրականացում՝ զուգորդված խտրականությամբ, և իրեն դրամական փոխհատուցում տրամադրել: Դատարանը մերժել էր հայցը:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն համարել է, որ Իսպանիայի դատարանը հոր շահերը վեր է դասել ընտանեկան բռնության զոհի շահերից, ինչը կարծրատիպային մոտեցումների արդյունք է և իրավական արդարացում չունի: Իսպանիան ծախողել է իր պարտավորությունը՝ ապահովելու իրավունքների և ազատությունների իրացումը առանց խտրականության: Միևնույն ժամանակ, կոմիտեն համարել է՝ Իսպանիան չի իրականացրել արդար դատաքննություն, ինչը նույնպես պայմանավորված է խտրականությամբ:

Այս առնչությամբ պետության կողմից պետք է որդեգրվի ընդհանուր քաղաքականություն՝ ուղղված հատուկ միջոցների ձեռնարկմանը՝ գենդերային հավասարության մշակույթի տարածման, կանանց նկատմամբ խտրականության բացառման համար: Միևնույն ժամանակ, պետք է հաշվի առնվեն ընտանեկան բռնության զոհերի խոցելի դրությունը և հասարակության կարծրատիպային վերաբերմունքը կանանց նկատմամբ:

Արդյունքում Իսպանիայի դատարանը բեկումնային որոշում կայացրեց, համաձայն որի՝ կանանց նկատմամբ բռնությունների դեմ վերացման կոմիտեի որոշումները Իսպանիայում ենթակա են պարտադիր կատարման:

Իսպանիայի օրինակը այս պահին առկա լավագույն մեխանիզմն է, որի միջոցով հնարավոր է իրավական ճանապարհով պահանջել կոմիտեի որոշումների կատարումը պետության կողմից:

Միջազգային մարմինների մեկնաբանությունները կիրառելի են ներպետական ատյաններում մարդու իրավունքների վերաբերյալ դրույթները մեկնաբանելիս:

Պայմանագրային մարմինների որոշումներում տեղ գտած դիտարկում-

ների կատարումը, ինչպես ներպետական օրենսդրական ակտերի, այնպես էլ պետական քաղաքականությունների այդ դիտարկումներին և առաջարկներին համապատասխանեցումը որոշ մասով կախված է նաև քաղաքացիական հասարակության գործիչների, ինչպես նաև իրավաբանական հանրույթի տեղեկացվածությունից: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ շահերի պաշտպանությամբ գործնականում զբաղվող անձինք հանդիսանում են մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների շարժիչ ուժ:

#### **Գ) Ռազմավարական դատավարությունների իրականացում**

Ռազմավարական դատավարությունը<sup>75</sup> կարող է սահմանվել որպես «դատավարության օգտագործում մարդու իրավունքների վերաբերյալ իրավական, սոցիալական և այլ փոփոխությունների նպատակով, որոնք դուրս են գալիս դիմումատուի անմիջական նպատակների շրջանակից»<sup>76</sup>: Այն բնորոշվում է նաև որպես գործիք, որն ուղղված է իրավունքի օգտագործման միջոցով սոցիալական փոփոխությունների ջատագովությանը այն անձանց անունից, որոնց ձայնը լսելի չէ:

Ռազմավարական դատավարությունը մարդու իրավունքների խթանման ռազմավարության շրջանակներում գործերի նույնականացումն ու քննարկումն է: Այն կենտրոնանում է մեկ անհատական գործի վրա, ինչը նպատակ ունի ստանալ ավելի լայն սոցիալական փոփոխություններ: Այս գործերը կարևոր նախադեպեր են, որոնք հանրայնացնում են անարդարությունները, բարձրացնում են իրազեկվածությունը և հանգեցնում են օրենսդրության, քաղաքականության և պրակտիկայի փոփոխության: Ռազմավարական դատավարությունը կարող է շարունակական ազդեցություն ունենալ մեծ թվով մարդկանց վրա ազգային, ռեգիոնալ և միջազգային մակարդակում:

Ռազմավարական դատավարությունը իրավապաշտպանների և փաստաբանների կողմից կիրառվել է տասնամյակներ շարունակ: Այն պատմականորեն սկիզբ է առել ԱՄՆ-ում Ամերիկյան քաղաքացիական ազատությունների միության (American Civil Liberties Union - ACLU) և Գունավոր մարդկանց առաջընթացի ազգային ասոցիացիայի (National Association for the Advancement of Colored People - NAACP) կողմից քաղաքացիական իրավունքների պաշտպանության հայցերի ներկայացմամբ: Ռազմավարական դատավարությունը հատկապես օգտակար գործիք է եղել

75. Անգլ. Strategic litigation (օգտագործվում են նաև impact litigation, public interest law litigation, test-case litigation և cause lawyering եզրույթները):

76. Open Society Justice Initiative: Strategic Litigation Impacts: Torture in Custody (November 2017), էջ 14:



այսպես կոչված «ինքնության վրա հիմնված» շարժումների, ռասայական սեգրեգացիայի վերաբերյալ հեղափոխական դատական որոշումների, արբորտի քրեականացման կամ բնիկների իրավունքների պաշտպանության համար:

Ռազմավարական դատավարությունները ծագել են ընդհանուր իրավունքի համակարգերում: Այնուհետև քաղաքական բարեփոխումները, մարդու իրավունքների զարգացումները և արդարադատության հասանելիությունը մյուս իրավական համակարգերի փաստաբաններին ևս հնարավորություն տվեցին ռազմավարական դատավարությունը օգտագործել իրենց երկրներում փոփոխությունների հասնելու նպատակով:

Ռազմավարական դատավարությունը կարող է օգտագործվել ստորև ներկայացված նպատակներով.

1. *Գործող օրենսդրության «փորձարկում»:* Երբ օրենսդրությունը անորոշ է, դրա իրական հետևանքները չեն կարող հստակ կերպով կանխատեսելի լինել: Այս դեպքում ռազմավարական դատավարությունը կարող է օգտագործվել օրենսդրության «փորձարկման» ու պաշտոնական մեկնաբանություններ ստանալու, օրենքն ավելի հստակ ու կանխատեսելի դարձնելու նպատակով:
2. *Գործող օրենսդրության կիրառում:* Երբ օրենքն ընդունվել է, սակայն դեռևս չի կիրառվել պրակտիկայում, իրավապաշտպանները կարող են «հիշեցնել» իշխանություններին արդեն իսկ գոյություն ունեցող կարգավորումների մասին և խրախուսել դրանց լայն մեկնաբանումը:
3. *Գործող օրենսդրության փոփոխություն:* Դատավարությունը կարող է ուղղակիորեն ազդել օրենսդրության վրա: Պայմանագրային մարմինները երբեմն հատուկ պահանջում են անդամ պետությունից՝ փոփոխել օրենսդրությունն այնպես, որ այն համապատասխանի վերաբերելի միջազգային պայմանագրին:
4. *Անհատի համար պաշտպանության միջոցի ձեռքբերում:* Թեև ռազմավարական դատավարության վերջնական նպատակը ընդհանուր իրավիճակի փոփոխությունն է, այն նաև հայցում է արդարադատություն անձի համար, որի իրավունքները խախտվել են: Երբ Պայմանագրային մարմինները ճանաչում են խախտումը, նրանք նաև պահանջում են պետությունից՝ դիմումատուի/դիմումատուների համար ապահովել պաշտպանության արդյունավետ միջոց, ներառյալ համապատասխան փոխհատուցում և նրանց կողմից կատարված ծախսերի վճարում: Պայմանագրային մարմինները երբեմն մատնանշում են նաև այլ

կոնկրետ միջոցներ, որոնք պետք է ձեռնարկվեն պետության կողմից:

5. *Իրավունքի և սոցիալական արդարության վերականգնում:* Երբ խախտումը ճանաչվում է, այն կատարողները սովորաբար պատասխանատվության են ենթարկվում տարբեր պատիժների կիրառման միջոցով, ինչը նպատակ ունի կանխել հետագա խախտումները, փոխհատուցում տրամադրել դիմումատուի կորստի կամ տառապանքի համար և հասնել սոցիալական արդարության:
6. *Վարքային կարծրատիպերի և սոցիալական վարքագծի փոփոխություն:* Ռազմավարական դատավարությունը կարող է հանգեցնել խախտում կատարողների, պետական դերակատարների, համայնքի անդամների վարքային կարծրատիպերի փոփոխությանը: Այս փոփոխությունները կարող են լինել ճանաչված խախտման համար պատասխանատվության արդյունք կամ դատարանի կողմից կայացված դրական որոշման ազդեցության արդյունք: Զուգորդվելով ԶԼՄ-ների միջոցով արշավների իրականացման հետ՝ ռազմավարական դատավարությունը կարող է հանգեցնել նաև բնակչության կոնկրետ խմբի կամ խնդրի նկատմամբ հասարակության վերաբերմունքի փոփոխության:

Ի լրումն վերոշարադրյալ նպատակների՝ Պայմանագրային մարմիններին ռազմավարական գործերի ներկայացումը միտված է ներպետական ատյանների կողմից բացասական որոշումների բեկանմանը, պոզիտիվ գործողություն ձեռնարկելու ուղղությամբ պետության վրա միջազգային ճնշում գործադրելուն, խնդրի առավել մանրամասն վերլուծություն, ավելի կոնկրետ և հասցեական առաջարկություններ ստանալուն և պետության հետ ավելի սերտ հետադարձ կապի մեխանիզմների հասանելիությանը:

Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել ռազմավարական դատավարության ռիսկերն ու սահմանափակումները, ինչպես նաև դրա հնարավոր բացասական հետևանքները: Մասնավորապես, անհրաժեշտ է հաշվի առնել, որ՝

1. Ռազմավարական դատավարությունը պահանջում է իրավաբանական աշխատանքի ռեսուրսներ:
2. Ռազմավարական նպատակին հասնելու համար ընտրված իրավական պաշտպանության միջոցները կարող են ենթադրել ավելի երկարատև գործընթաց:
3. Ռազմավարական դատավարությունը պետք է շատ լավ պլանավորված լինի ընթացակարգային կանոնների տեսանկյունից:

4. Ռազմավարական դատավարությունը կարող է ավելի արդյունավետ լինել, եթե զուգակցվի մեդիա արշավներով, լրբբինգով և ազգային մարմինների հետ հաղորդակցմամբ: Սակայն դատավարության շուրջ իրականացվող ադվոկացիոն գործողություններում պետք է առաջնահերթ կարևորություն տրվի դիմամատուին կամ խնդիրը կրող անձանց խմբին չվսասելու սկզբունքին և դատավարական էթիկայի մնացյալ կանոններին:

Պայմանագրային մարմիններ ներկայացված ռազմավարական դատավարությունները խոցելի խմբերի իրավունքների (կանանց իրավունքներ, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ և այլն) վերաբերյալ նշանակալի դերակատարում և ազդեցություն ունեն դրանց պաշտպանության և պետությունների վրա միջազգային ճնշում գործադրելու առումով: Դրանց արդյունքում Պայմանագրային մարմինների կայացրած դրական որոշումը կարող է նաև հանգեցնել կոնկրետ հարցի կամ իրավունքի վերաբերյալ սոցիալական և իրավական փոփոխության, ինչպեսև տվյալ երկրում լինել ջատագովության կարևոր գործիք:

Ռազմավարական դատավարության տեսանկյունից բազմաթիվ հաջողված գործեր են քննվել ՄԱԿ-ի Պայմանագրային մարմինների կողմից: Նշված գործերից են, օրինակ, հետևյալները՝

1. Marcia Cecilia Trujillo Calero v. Ecuador, CESCR, Communication 10/2015, UN Doc. E/C.12/63/D/10/2015 (26 March 2018)<sup>77</sup>. Սույն որոշման ռազմավարական նշանակությունն այն է, որ ՄԱԿ-ի Պայմանագրային մարմինը առաջին անգամ որոշում կայացրեց չվճարվող աշխատանքի և սոցիալական ապահովության՝ գենդերով պայմանավորված հասանելիության միջև կապի վերաբերյալ: Հանձնաժողովի որոշումը նաև միջսեկտորային վերլուծության ցուցանելի օրինակ է, որի միջոցով մանրամասն հետազոտության են ենթարկվել խտրականության հնարավոր աղբյուրները:
2. Toussaint v. Canada, CCPR/C/123/D/2348/2014, 2018<sup>78</sup>. Սույն գործով Հանձնաժողովը հաստատել է Պետությունների պոզիտիվ պարտավորությունը՝ ապահովելու կյանքին սպառնացող կանխատեսելի ռիսկերը կանխելու համար անհրաժեշտ հիմնական առողջապահական ծառայությունների հասանելիությունը բոլորի համար՝ անկախ միգրա-

77. Marcia Cecilia Trujillo Calero v. Ecuador, CESCR, Communication 10/2015, UN Doc. E/C.12/63/D/10/2015 (26 March 2018). հասանելի է այստեղ. <https://www.escr-net.org/caselaw/2018/marcia-cecilia-trujillo-calero-v-ecuador-cescr-communication-102015-un-doc>

78. Toussaint v. Canada, CCPR/C/123/D/2348/2014, 2018. հասանելի է այստեղ. <https://www.escr-net.org/caselaw/2018/toussaint-v-canada-ccprc123d23482014-2018>

ցիոն կարգավիճակից: Հանձնաժողովը որոշել է, որ Կանադան պետք է ապահովի համակարգային և անհատական միջոցի կիրառում՝ վերանայելով ազգային օրենսդրությունը՝ անօրինական միգրանտների համար առաջնային առողջապահական ծառայությունները հասանելի դարձնելու նպատակով, և դիմումատուին վճարելով վսասի փոխհատուցում:

3. E.S & S.C. v. United Republic of Tanzania, CEDAW/C/60/D/48/2013 Communication No. 48/2013<sup>79</sup>: Սույն որոշումը կարևոր հաղթանակ է կանանց իրավունքների պաշտպանության առումով: Այն, մասնավորապես, վերաբերում է ժառանգության հավասար իրավունքին:
4. A.S. v. Hungary, Communication No. 4/2004, CEDAW/C/36/D/4/2004<sup>80</sup>: Սա պատմական որոշում է, որով առաջին անգամ միջազգային մարմինը պետությանը համարել է պատասխանատու կնոջն անհրաժեշտ տեղեկատվություն չտրամադրելու և վերարտադրողական առողջության հետ կապված միջամտության համար նրա լիարժեք համաձայնությունը չստանալու համար:
5. F. H. Zwaan-de Vries v. the Netherlands, Communication No. 182/1984 (9 April 1987), U.N. Doc. Supp. No. 40 (A/42/40) at 160 (1987)<sup>81</sup>: սույն գործին լայնորեն հղումներ են կատարվել՝ որպես տնտեսական և սոցիալական իրավունքների նկատմամբ հակախտրականության և հավասարության նորմերը կիրառող որոշում:
6. Ms. L. R. et al v Slovakia. Cited as: Communication No.31/2003, CERD / C / 66 / D / 31 / 2003<sup>82</sup>: Սույն գործը շեշտադրում է տեղական մարմինների հիմնարար դերը խոցելի խմբերի իրավիճակի հետ կապված քայլեր ձեռնարկելու առումով:
7. Länsman et al v Finland, Communication No. 511/1992, UN GAOR, 52nd Session, UN Doc. CCPR / C / 52D / 511 / 1992, opinion approved the 8

79. E.S & S.C. v. United Republic of Tanzania, CEDAW/C/60/D/48/2013 Communication No. 48/2013. հասանելի է այստեղ. <https://www.escr-net.org/caselaw/2015/es-sc-v-united-republic-tanzania-cedawc60d482013-communication-no-482013>

80. A.S. v. Hungary, Communication No. 4/2004, CEDAW/C/36/D/4/2004. հասանելի է այստեղ. <https://www.escr-net.org/caselaw/2009/v-hungary-communication-no-42004-cedawc36d42004>

81. F. H. Zwaan-de Vries v. the Netherlands, Communication No. 182/1984 (9 April 1987), U.N. Doc. Supp. No. 40 (A/42/40) at 160 (1987). հասանելի է այստեղ. <https://www.escr-net.org/caselaw/2006/f-h-zwaan-vries-v-netherlands-communication-no-1821984-9-april-1987-un-doc-supp-no-40>

82. Ms. L. R. et al v Slovakia. Cited as: Communication No.31/2003, CERD / C / 66 / D / 31 / 2003. հասանելի է այստեղ. <https://www.escr-net.org/caselaw/2006/ms-l-r-et-al-v-slovakia-cited-communication-no312003-cerd-c-66-d-31-2003>

November 1994<sup>83</sup>: Սույն գործի կարևորությունն այն է, որ դրա համաձայն՝ փոքրամասնությունների մշակութային իրավունքը պաշտպանում է գոյատևման ավանդական տնտեսական միջոցները: Որոշումը սահմանել է, որ գոյություն ունի խորհրդակցված լինելու իրավունք, որը պետք է իրացվի նախքան զարգացմանն ուղղված գործողություններ կատարելը, և որ այդ գործողություններով չի կարող վնաս հասցվել մշակույթին:

8. Liliane Gröninger v. Germany (Communication No. 2/2010)<sup>84</sup>: Սույն գործն արտացոլել է կոնվենցիայի վավերացումից հետո օրենսդրության վերանայման անհրաժեշտությունը՝ օրենսդրության համապատասխանությունը միջազգային պարտավորություններին ապահովելու համար, ծրագրերի կողմից բոլորի իրական ներառվածությունը երաշխավորելու և ուղղակի ու անուղղակի խտրականությունից խուսափելու համար:
9. Alyne da Silva Pimentel v. Brazil (Communication No. 17/2008)<sup>85</sup>: Սա Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովի առաջին գործն է, որը վերաբերում էր մայրական մահացությանը:

## **Դ) Պայմանագրային մարմինների անհատական դիմումների մեխանիզմի կիրառման ռազմավարական նշանակությունը**

Ռազմավարական տեսանկյունից ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների անհատական դիմումների մեխանիզմի կիրառումը կարող է կարևոր նշանակություն ունենալ նաև իրավունքի զարգացման առումով, ինչի համար երբեմն օգտագործվում է միաժամանակ մի քանի միջազգային ատյան գանգատ ներկայացնելու պրակտիկան: Չնայած նրան, որ միջազգային ատյանները ընդունելի չեն համարում այն գործերով դիմումները, որոնց առնչությամբ արդեն իսկ առկա է գանգատ այլ միջազգային դատական ատյանում, նույն իրադարձության վերաբերյալ դիմումը հնարավոր է ներկայացնել այլ հիմքով կամ այլ տուժող անձի անունից: Այդպիսի գործելակերպի նպատակը տարբեր միջազգային ատյանների դիրքորոշումը ստանալն է: Այս կոնտեքստում կարելի է դիտարկել Բանն

83. Länsmän et al v Finland, Communication No. 511/1992, UN GAOR, 52nd Session, UN Doc. CCPR / C / 52D / 511 / 1992, opinion approved the 8 November 1994. հասանելի է այստեղ. <https://www.eschr-net.org/caselaw/2006/lansman-et-al-v-finland-communication-no-5111992-un-gaor-52nd-session-un-doc-ccpr-c-52d>

84. Liliane Gröninger v. Germany (Communication No. 2/2010). հասանելի է այստեղ. <https://www.eschr-net.org/caselaw/2014/liliane-groninger-v-germany-communication-no-22010>

85. Alyne da Silva Pimentel v. Brazil (Communication No. 17/2008). հասանելի է այստեղ. <https://www.eschr-net.org/caselaw/2011/alyne-da-silva-pimentel-v-brazil-communication-no-172008>

ընդդեմ Ռուսաստանի և Ալեքսեևն ընդդեմ Ռուսաստանի գործերը, որոնցից առաջինը քննվել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից, իսկ երկրորդը՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի կողմից:

Գործի փաստերը հետևյալն են.

*Դիմումատուները՝ Նիկոլայ Բաևը, Ալեքսեյ Կիսելևը և Նիկոլայ Ալեքսեևը Ռուսաստանի քաղաքացի են, նույնասեռական ակտիվիստներ: Ռուսաստանի Դաշնության փարբեր մարզերում, ապա նաև դաշնային մակարդակով ընդունվել է «Համասեռամոլության քարոզչության» արգելքի վերաբերյալ օրենսդրական կարգավորում, որը սահմանափակում է նույնասեռականության վերաբերյալ ցանկացած տեսակի հրապարակում: Դիմումատուները բողոքի ակցիա են իրականացրել փարբեր վայրերում, կանգնել են՝ ձեռքերին ունենալով պաստառներ՝ «Նույնասեռականությունը նորմալ է, ոչ թե այլասերվածություն»:*

*Նրանց ենթարկել են վարչական պատասխանատվության: Բողոքները մերժվել են: Որևէ արդյունք չի տվել նաև Սահմանադրական դատարան ներկայացված դիմումը: Դիմումատուները փաստարկել են, որ վերոնշյալ օրենքը հակասում է կարծիքի արտահայտման ազատությանը և խտրականության արգելքին: Սահմանադրական դատարանը, սակայն, մերժելով դիմումը՝ հայտնել է, որ օրենքը ուղղված է բարոյականության պաշտպանությանը՝ կապված ավանդական և ոչ ավանդական ամուսնական հարաբերությունների սոցիալական համարժեքության վերաբերյալ առավելված տպավորություն ստեղծելու նիսկի և երեխաների շրջանում ոչ ավանդական սեռական կողմնորոշման տարածման հետ:*

*Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, քննելով գործը, գտել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ և 14-րդ հոդվածների, այն է՝ արտահայտման ազատության և խտրականությունից զերծ լինելու իրավունքի խախտում:<sup>86</sup> ՄԻԵԴ-ը արտահայտել իրավական դիրքորոշում օրենքի կարգավորման առարկայի և դրա իրավաչափության հարցի վերաբերյալ: Քննարկելով Ռուսաստանում գործող վերոնշյալ օրենքում առկա հասկացությունների հստակության հարցը՝ ՄԻԵԴ-ը նշել է.*

*«... 61. Դատարանը որպես դեպքի առանցքային հարց դիտարկում է նույնասեռականության կամ ոչ ավանդական սեռական հարաբերությունների խթանումը արգելող օրենսդրության գոյությունը, ինչի համապատասխանությունը Կոնվենցիային վի-*

86. Bayev and others vs. Russian Federation, Applications nos. 67667/09

ճարկվել է դիմումատուների կողմից:

63. ... օրինականության քննարկումը ծագում է դիմումատուի բարձրացրած այն հարցի շուրջ, որ ինքնին օրենքը ոչ պատշաճ կերպով լայն է, իսկ կիրառումը՝ անկանխատեսելի: Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ օրենքի որակի հարցը երկրորդային է՝ որպես ընդհանուր միջոց դրա անհրաժեշտության հարցի համեմատ»:

Մարդու իրավունքների կոմիտեն, քննելով գործը, գտել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի դաշնագրի 21-րդ հոդվածի խախտում, այն է՝ խաղաղ հավաքների ազատությունը:<sup>87</sup>

Կոմիտեն նշում է.

«9.1. ... հավաքների ազատությունը պաշտպանում է ցույցեր խթանող գաղափարներ, որոնք կարող են այլոց համար համարվել նյարդայնացնող կամ վիրավորական, և որ այդպիսի դեպքերում ևս պետությունները պարտավոր են պաշտպանել ցույցի մասնակիցներին իրենց իրավունքների իրականացման ընթացքում հնարավոր բռնություններից: Այն [Կոմիտեն] նաև նշում է, որ ցույցը արգելելու համար բավարար չէ բռնի հակազդեցության անորոշ և ընդհանուր ռիսկը կամ սոսկ հնարավորությունը, որ իշխանությունները չեն կարողանա կանխել կամ չեզոքացնել այդպիսի բռնությունը»:

Այսպիսով, կիրառելով միաժամանակ երկու միջազգային ատյանների մեխանիզմները, հնարավոր է ստանալ իրավախախտման մեկնաբանություն՝ տարբեր ասպեկտներով և դիրքորոշումներն օգտագործել օրենսդրական փոփոխությունների հասնելու համար կամ որևէ քաղաքականության փոփոխման ուղղությամբ տարվող աշխատանքում:

87. Alekseev v. Russia, applications nos. 4916/07, 25924/08 and 14599/09

### 3.2. ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՀԵՏ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԱԶԱՓ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ<sup>88</sup>

Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ոչ պետական դերակատարները՝ հասարակական կազմակերպությունները, իրավապաշտպանները, ակտիվիստները՝ անհատապես կամ կոլեկտիվ ձևաչափերով, կարող են համագործակցել ՀԸ-ների հետ՝ ելնելով մանդատի առանձնահատկությունից և գործառույթային շրջանակից: Նախորդ բաժնում արդեն խոսեցինք մանդատակիրների գործառույթային առանձնահատկությունների, պետությունների հետ նրանց աշխատանքի հիմնական տարբերակների մասին:

Այժմ դիտարկենք, թե համագործակցության ինչ տարբերակներ են հասանելի ոչ պետական դերակատարներին: Տարբերակները հետևյալն են.

- **Տեղեկատվության փոխանակում՝**
  - իրավունքի խախտման անհատական դեպքերի ներկայացում համապատասխան մանդատ կրողին.
  - մարդու իրավունքների առանձնահատուկ խնդրի շուրջ տեղեկատվության և վերլուծության ներկայացում համապատասխան մանդատ կրողին:
- **Հանդիպումներ և շփումներ՝**
  - ուղղակի շփումներ մանդատակիրների հետ պաշտոնական և ոչ պաշտոնական այցերի շրջանակներում.
  - տարվա ընթացքում ադվոկացիոն աշխատանքների իրականացում մանդատակիրների հետ, միջազգային տարբեր միջոցառումների շրջանակներում հանդիպում և շփում.
  - մասնակցություն մանդատ կրողների տարեկան հանդիպմանը:
- **Մասնակցություն տարեկան զեկույցների ներկայացմանը:**

88. Ոչ պետական դերակատարների՝ Հատուկ ընթացակարգերի հետ աշխատանքի և համագործակցության մասին համառոտ տեղեկություն հնարավոր է գտնել ՀԸ վերաբերյալ Տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների ցանցի կողմից պատրաստված ձեռնարկում (հասանելի է այստեղ. [https://www.escr-net.org/resources/manual-special-procedures-human-rights-council#\\_Toc136667421](https://www.escr-net.org/resources/manual-special-procedures-human-rights-council#_Toc136667421)) և, ՀԸ վերաբերյալ Մարդու իրավունքների միջազգային ծառայության պատրաստած ձեռնարկում (հասանելի է այստեղ. [https://www.ishr.ch/sites/default/files/documents/a\\_practical\\_guide\\_to\\_the\\_un\\_special\\_procedures\\_final.pdf](https://www.ishr.ch/sites/default/files/documents/a_practical_guide_to_the_un_special_procedures_final.pdf)): Այս ենթաբաժնում տեղ գտած քննարկման հիմնական աղբյուրներ են նշված աշխատությունները:



▪ **Հանրային իրազեկում և մշտադիտարկում՝**

- մանդատակրի աշխատանքի արդյունքների հանրայնացում, ներկայացում տեղական և միջազգային լսարաններին.
- մանդատակիրների պաշտոնական այցերից հետո հանրային իրազեկում և պետության հետագա գործողությունների և արձագանքների մշտադիտարկում:

▪ **Մասնակցություն ՀԸ մանդատակիրների թեկնածուների առաջադրմանը (նոր մանդատների ընտրման կամ գործող մանդատների վերանշանակման շրջանակներում):**

▪ **Աշխատանք և կապ մանդատակիրների հետ՝ ռազմավարական դատավարությունների իրականացման շրջանակներում:**

Դիտարկենք վերոնշյալ տարբերակներն առավել մանրամասնորեն:

**Ա) Տեղեկատվության փոխանակում**

Կապերի հաստատումը և տեղեկատվության փոխանակումը ՀԱ-ների և ոչ պետական դերակատարների միջև կարևոր է ՀԸ-ների կողմից պետություններին ուղղվող կոմունիկացիաների պատրաստման և ներկայացման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու տեսանկյունից:

ՀԸ-պետություն հարաբերությունների շրջանակներում ներկայացվող կոմունիկացիաներից զատ՝ տեղեկատվության փոխանակում տեղի է ունենում նաև ոչ պետական դերակատարների և ՀԸ-ների միջև: Քաղաքացիական հասարակության դերակատարների կողմից ՀԸ-ներին ուղարկվող տարաբնույթ գրությունները շահերի պաշտպանության կարևոր գործիք են՝ մարդու իրավունքների խախտումների բարձրաձայնման, ՄԱԿ-ի՝ իբրև կառույցի՝ այդ խնդիրների վրա ուշադրություն սևեռելու առումով:

Ոչ պետական դերակատարները, կապ հաստատելով մանդատ կրողի հետ, կարող են մշտապես ներգրավված լինել ադվոկացիոն բնույթի աշխատանքներում: Ոչ պետական դերակատարների կողմից ՀԸ-ներին ուղարկվող գրությունները կարող են ներկայացնել իրավունքի խախտման տարաբնույթ փաստեր, տեղական մակարդակում իրականացվող ուսումնասիրություններ, ահազանգեր մարդու իրավունքների տեղի ունեցող ոտնահարումների վերաբերյալ: Քաղաքացիական հասարակության կամ իրավապաշտպանների կողմից ՀԸ-ներին ուղարկվող տեղեկությունները կարող են օգտագործվել նաև պետական քաղաքականության

կամ օրենսդրական բացերի մատնանշման և դրանց շուրջ բարեփոխման գործընթացների խթանման նպատակով: Ամենատարբեր բնույթի և բովանդակության գրություններն այնուհետև հիմք կհանդիսանան մանդատակրի կողմից պետությանն ուղղվող կոմունիկացիայի համար, եթե մանդատակիրը կայացնի արձագանքելու որոշում<sup>89</sup>:

Անկախ բովանդակությունից՝ ուղարկվող գրությունը պետք է համապատասխանի որոշակի ձևաչափի, որն առավել մանրամասն ներկայացված է յուրաքանչյուր մանդատակրի մասին ՄԻԳՀԳ կայքի համապատասխան բաժնում (տե՛ս, օրինակ, Փոքրամասնությունների հարցերով հատուկ հանձնակատարին ուղարկվող կոմունիկացիայի մասին տեղեկատվական էջը<sup>90</sup>, կամ Միգրանտների հարցերով հատուկ հանձնակատարին ուղարկվող կոմունիկացիայի մասին տեղեկատվական էջը<sup>91</sup> և այլն):

Բնականաբար, յուրաքանչյուր գրություն պետք է հասցեագրված լինի համապատասխան հանձնակատարին, ուղարկվի էլփոստով կամ սովորական փոստային հասցեով: Կոմունիկացիան ուղարկելուց հետո ցանկալի է որոշ ժամանակ անց հետադարձ կապ հաստատել (follow-up) մանդատակրի հետ, ճշտել՝ արդյոք հարկավոր են հավելյալ տեղեկություններ, հնարավորինս ակտիվ պահել տեղեկատվության փոխանակման գործընթացը: Այս փուլում համագործակցությունը ՁԼՄ-ների հետ, լայն հանրությանը իրազեկումը ուղարկված տեղեկատվության, դրա խնդրո առարկայի և մանդատակրի հետ տարվող աշխատանքների մասին առավել խթանիչ դերակատարում կարող է ունենալ, իհարկե, բոլոր պարագաներում մտապահելով տուժածների և զոհերի անձնական տվյալների պաշտպանությունը, չփնասելու սկզբունքը, մասնավոր կյանքը հարգելու անհրաժեշտությունը՝ ըստ ներկայացվող կոմունիկացիայի բովանդակության:

Մեկ անգամ ևս հիշեցնենք, որ ՀԸ-ներին ուղարկվող գրություններում բարձրաձայնվող խնդիրների շրջանակը որևէ կերպ չի սահմանվում այն հանգամանքով, թե արդյոք պետությունը վավերացրել է խնդիրների շրջանակին վերաբերելի կոնվենցիաները կամ այլ իրավական փաստաթղթերը: Կարևոր է, սակայն, որ ուղարկվող գրությունները լինեն հնարավորինս փաստահեն և բավարար տեղեկատվություն փոխանցեն

89. ՀԸ վերաբերյալ Կոլումբիայի համալսարանի իրավունքի դպրոցի կողմից պատրաստված ձեռնարկը հասանելի է այստեղ. [https://web.law.columbia.edu/sites/default/files/microsites/human-rights-institute/files/special\\_rapporteurs\\_report\\_final.pdf](https://web.law.columbia.edu/sites/default/files/microsites/human-rights-institute/files/special_rapporteurs_report_final.pdf)

90. Communications/Submitting information to the Special Rapporteur. հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/EN/Issues/Minorities/SRMinorities/Pages/Complaints.aspx>

91. Communications/Submitting information to the Special Rapporteur. հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/EN/Issues/Migration/SRMigrants/Pages/Communications.aspx>

մանդատակրին, ուղղորդեն հետագա քայլերի վերաբերյալ որոշում կայացնելու առումով: Կարևոր է մտապահել, որ գործընթացի շարունակության, խնդրո առարկայի վերաբերյալ պետության հետ գործընթացի մեկնարկի որոշումը կայացնում է մանդատակիրը, և այս առումով նրա վրա չի կարող և չպետք է գործադրվի որևէ արտաքին ճնշում<sup>92</sup>:

Սեփական ադվոկացիոն մարտավարությունը կառուցելիս ոչ պետական դերակատարները պետք է նաև հիշեն և հաշվի առնեն, որ անգամ եթե մանդատակիրները ստացված գրությունների հիման վրա կոմունիկացիա են հղում պետությանը և մեկնարկում բարձրացված խնդրի շուրջ պետության հետ շփումները, պետություններին ուղարկվող կոմունիկացիաները չեն առաջացնում իրավական պարտավորություն և կարող են առհասարակ որևէ արձագանքի չարժանանալ: Միևնույն ժամանակ, չպետք է թերագնահատել ՀԸ-ների կողմից պետություններին ուղարկվող գրությունների քաղաքական ճնշման և պարսավանքի պոտենցիալը, քանի որ դրանք մարդու իրավունքների ոտնահարման ահազանգները տեղականից գլոբալ մակարդակ հասցնելու և պետություններից լուծումներ պահանջելու կարևոր խողովակ են:

Այսպես, օրինակ, 2015 թ. *Բրազիլիայում երկու պոչամբարի պարվարներ փլուզվեցին, ինչի հետևանքով ահռելի քանակի հանքաթափոններ լցվեցին շրջակա բնության մեջ՝ հանգեցնելով էկոլոգիական աղետի: ՄԱԿ-ի մի շարք ՀԸ-ներ միասնաբար հանդես եկան հայտարարություններով՝ ճնշում գործադրելով Բրազիլիայի կառավարության վրա, որպեսզի վերջինս վերանայի հանքարդյունաբերության ոլորտի ներպետական օրենսդրությունը, համապատասխանեցնի այն շրջակա միջավայրի պահպանման և պաշտպանության միջազգային չափանիշներին և պահանջի տեղի բիզնես կազմակերպություններից՝ իրենց գործողություններում խստորեն հարգել և հաշվի առնել տեղական համայնքների շահերը*<sup>93</sup>:

## Բ) Հանդիպումներ և շփումներ

Ինչպես գիտենք, ցանկացած մանդատակիր կարող է պաշտոնական այց կատարել միայն համապատասխան կառավարության կողմից հրավերի առկայության պարագայում:

92. ՀԸ վերաբերյալ Մարդու իրավունքների միջազգային ծառայության կողմից պատրաստված ձեռնարկը հասանելի է այստեղ. [https://www.ishr.ch/sites/default/files/documents/a\\_practical\\_guide\\_to\\_the\\_un\\_special\\_procedures\\_final.pdf](https://www.ishr.ch/sites/default/files/documents/a_practical_guide_to_the_un_special_procedures_final.pdf)

93. Դեպքի վերաբերյալ անդրադարձը հասանելի է այստեղ. <https://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=16803>, <https://news.un.org/en/story/2016/11/544572-one-year-un-experts-urge-brazil-urgently-boost-efforts-address-impacts-dam>

Երբ նման հրավեր առկա է, և պլանավորվում է մանդատակրի այց, ոչ պետական դերակատարների ներգրավվածության ապահովումը, ադվոկացիոն աշխատանքների իրականացումը այցի հաջողության հիմնական գրավականներից են: Ուստի, ադվոկացիոն աշխատանքների մարտավարության պլանավորումը պետք է իրականացնել թե՛ մինչ այցի կայացման ժամանակահատվածի առումով, թե՛ բուն այցի ընթացքում և թե՛ դրանից հետո:

*Մինչ այցը* կարևոր է տեղեկատվական կապ պահպանել, շարունակել փոխանակվել անհրաժեշտ տեղեկություններով, փաստերով (ենթադրվում է, որ կապն արդեն հաստատված է այցին նախորդող՝ տեղեկատվության փոխանակման գործընթացի շրջանակներում): Կարևոր է նաև առավելապես տեղեկացնել տեղական և միջազգային ԶԼՄ-ներին գալիք այցի վերաբերյալ: Մանդատակիրներն այցի ժամանակ հաճախ հանդիպում են նաև ԶԼՄ-ների հետ կամ կազմակերպում մամլո ասուլիսներ, ուստի ԶԼՄ-ների հետ նախապես աշխատանքներ տանելով՝ իրավապաշտպանների համայնքը կարող է վերջիններիս առավել տեղեկացնել քննարկվող խնդիրների, առաջադրվող պահանջների և ակնկալիքների մասին՝ բարձրացնելով նաև ԶԼՄ-ների աշխատանքների արդյունավետությունը:

Վերջապես, կարևոր է քաջատեղյակ լինել այցի օրակարգից և ժամանակացույցից, ՀԸ-ների կողմից նախատեսվող միջոցառումներին, հանդիպումներին:

*Այցի ընթացքում* մանդատակիրները սովորաբար ունենում են նախատեսված օրակարգային հանդիպումներ ոչ պետական դերակատարների հետ: Նման հանդիպման վայր կարող է լինել տվյալ երկրում ՄԱԿ-ի գրասենյակի տարածքը կամ մանդատակրի և պետության միջև նախապես որոշված որևէ վայր: Կարևոր է, որ ոչ պետական դերակատարները հնարավորինս աջակցող դերակատարում ստանձնեն՝ միևնույն ժամանակ չխաթարելով ՀԸ-ի փաստահավաք գործունեությունը, ՀԸ-ի և պետության միջև շփումների և աշխատանքների ընթացքը<sup>94</sup>:

Եթե նախնական կապեր չեն հաստատվել մանդատակրի հետ, ապա պաշտոնական այցը ոչ պետական դերակատարների համար նաև նման կապ հաստատելու հնարավորություն է՝ հետագա համագործակցության ապահովման նպատակով: Այս կապակցությամբ, *այցից հետո* կապի պահպանումը ևս շատ կարևոր է: Այս փուլում մանդատակիրները շա-

94. ՀԸ վերաբերյալ Կոլումբիայի համալսարանի իրավունքի դպրոցի կողմից պատրաստված ձեռնարկը հասանելի է այստեղ. [https://web.law.columbia.edu/sites/default/files/microsites/human-rights-institute/files/special\\_rapporteurs\\_report\\_final.pdf](https://web.law.columbia.edu/sites/default/files/microsites/human-rights-institute/files/special_rapporteurs_report_final.pdf)

րունակում են իրենց աշխատանքը՝ այցի վերաբերյալ զեկույց պատրաստելու և հավաքած խնդիրները ՄԱԿ-ի համապատասխան մարմիններին հասցեագրելու նպատակով:

Հիշեցնենք, որ մանդատակիրները երբեմն կարող են այս կամ այն երկրում գտնվել ոչ պաշտոնական այցերի կամ իրենց մանդատից չբխող պաշտոնական այցերի շրջանակներում: Այս պարագայում նրանք թեպետ չեն կարող գործել ըստ հաստատված ընթացակարգի, սակայն նրանց ներկայությունը երկրում առիթ է տեղական կառույցների համար՝ կապեր և շփումներ հաստատելու, հետագա ջատագովության հիմքեր ստեղծելու առումով:

#### **Գ) Մասնակցություն տարեկան զեկույցների ներկայացմանը**

Ինչպես ներկայացրինք նախորդ բաժնում, կոմունիկացիաների, պաշտոնական այցերի և այլ փաստահավաք ու հետազոտական գործունեության արդյունքում հավաքված տեղեկատվությունը մանդատակիրներն ամփոփում են իրենց տարեկան զեկույցներում, որոնք ներկայացվում են Մարդու իրավունքների խորհրդին և Գլխավոր ասամբլեային:

Երբ զեկույցը ներկայացվում է Մարդու իրավունքների խորհրդի նիստի ընթացքում, Սոցիալական և տնտեսական խորհրդում հավատարմագրված հասարակական կառույցներին ևս տրվում է հարցապնդումներ անելու ժամանակ: Այսպիսով, նրանք կարող են ներկայացնել հավելյալ՝ զեկույցին առնչվող տեղեկատվությունը, որը կարևոր են համարում, որպեսզի այն դիտարկվի Մարդու իրավունքների խորհրդի կողմից: Մասնակցությունը զեկույցի ներկայացմանը նաև հնարավորություն է ոչ պետական դերակատարների համար ժնևում կայացող նիստերի ընթացքում ադվոկացիոն աշխատանքներ իրականացնել ՄԱԿ-ի տարբեր մարմինների և մանդատակիրների հետ:

Այն կազմակերպությունները, որոնք հավատարմագրված չեն Տնտեսական և սոցիալական խորհրդում կամ չունեն ժնևյան նիստերին ֆիզիկապես ներկա լինելու հնարավորություն, իրենց հարցապնդումները կարող են փոխանցել տեղում գտնվող՝ հավատարմագրված գործընկեր կառույցների միջոցով: Որոշ դեպքերում խորհրդի նիստի օրակարգում ժամանակ և հնարավորություն է հատկացվում նաև տեսաձայնագրությունների միջոցով հարցապնդումներ ներկայացնելու համար, ուստի կարևոր է նախապես տեղյակ լինել խորհրդի նիստի օրակարգին, մասնակցության ընթացակարգերին, որպեսզի առավել արդյունավետ օգտագործվեն առկա հնարավորությունները:

Ինչ վերաբերում է Գլխավոր ասամբլեային զեկույցների ներկայացմանը, ապա այստեղ ոչ պետական դերակատարները մասնակցություն չեն ունենում:

### 3.3. ԱՇԽԱՏԱՆՔ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՀԵՏ. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՈՐՁԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Ինչպես արդեն խոսեցինք նախորդ բաժիններում, տեղական կառույցների ներգրավվածությունը ՊՄ-ների և ՀԸ-ների աշխատանքում մեծապես ազդում է այս մեխանիզմների արդյունավետության, պետության վրա ճնշում գործադրելու և առանձին խնդիրների/հարցերի միջազգային տեսանելիության մեծացման դրանց հնարավորությունների վրա:

Հիշեցնենք, որ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության գրեթե բոլոր պայմանագրերը՝ բացի Բոլոր աշխատող միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության կոնվենցիայից: Միևնույն ժամանակ, ոչ բոլոր կոմիտեների անհատական դիմումների գործառույթին վերաբերող կամընտիր արձանագրությունները կամ դրույթներն են վավերացվել ՀՀ կողմից: Հայաստանի Հանրապետությունն ընդունել է միայն Մարդու իրավունքների կոմիտեի, Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի իրավասությունը՝ քննելու մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ անհատական դիմումները:

Հարկ է նշել, որ ներկայումս վավերացման փուլում են գտնվում ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի՝ հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրությունը և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը, որոնցում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ ՀՀ ՍԴ-ն կայացրել են դրական որոշումներ<sup>95</sup>:

Հայաստանյան հասարակական կազմակերպությունները, մասնավորապես՝ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ները և մասնագիտական/ոլորտային շրջանակները՝ իրավաբանները, իրավապաշտպանները, ունեն ՊՄ-ների և ՀԸ-ների աշխատանքի տարաբնույթ փորձ և գիտելիքներ:

95. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշումները հասանելի են այստեղ. <http://concourt.am/armenian/decisions/common/2020/pdf/sdv-1557.pdf>, <http://concourt.am/armenian/decisions/common/2020/pdf/sdv-1556.pdf>

Սույն ձեռնարկը պատրաստած հետազոտական թիմի նախաձեռնած առցանց հարցումը ցույց է տալիս, որ ոչ պետական դերակատարներն ավելի տեղեկացված և փորձառու են ՊՄ-ների հետ աշխատանքի առումով, մինչդեռ ՀԸ-ների շուրջ գիտելիքներն ու պրակտիկ փորձը համեմատաբար զիջում են:

Հարցումն իրականացվել է 2020 թ. հուլիս ամսվա ընթացքում: Նախապես պատրաստված առցանց հարցաշարը<sup>96</sup> լայնորեն տարածվել է մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների, անհատ փաստաբանների, ոլորտային մասնագետների շրջանում: Չնայած լայն տարածմանը՝ հարցմանը մասնակցել է 18 անհատ՝ վերոնշյալ խմբերից: Ըստ այդմ, հարցման միջոցով ստացված տվյալների ամփոփումը չի հավակնում որևէ ընդհանրական պատկեր ներկայացնել: Միևնույն ժամանակ, անգամ նման սահմանափակ ընտրանքի պարագայում արտաձված որոշ միտումներ հաստատվում են պրակտիկ դաշտի ուսումնասիրմամբ արվող արձանագրումներով:

Հարցաշարում տեղ գտած հարցադրումների մի մասը միտված էր վեր հանելու հարցվողների՝ ՊՄ-ների և ՀԸ-ների վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածության մակարդակը, մյուսը՝ թիրախային խմբի՝ այս մեխանիզմները կիրառելու պրակտիկ փորձի բացահայտմանը:

Այսպես. առաջին խմբի հարցերում տեղ են գտել այնպիսի հարցադրումներ, ինչպիսիք են՝ *«Ինչպե՞ս կզնահատեք պայմանագրային մարմինների գործունեության, ընթացակարգերի, գործիքակազմի վերաբերյալ Ձեր գիտելիքները»*, *«Ինչպե՞ս կզնահատեք ոչ պետական կառույցների կողմից (ՀԿ-ներ, նախաձեռնություններ, միջազգային ոչ կառավարական կազմակերպություններ և այլն) պայմանագրային մարմիններին զեկույցներ ուղարկելու վերաբերյալ Ձեր գիտելիքները»*, *«Ինչպե՞ս կզնահատեք ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերի գործունեության վերաբերյալ Ձեր գիտելիքները»*, *«Ինչպե՞ս կզնահատեք հատուկ ընթացակարգերի և պետության միջև հնարավոր համագործակցության /աշխատանքների իրականացման փորձերակների վերաբերյալ Ձեր գիտելիքները»* և այլն: Երկրորդ խմբում տեղ են գտել այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ *«Ի՞նչ մասնակցություն էք ունեցել ՄԱԿ-ի Պայմանագրային մարմինների հետ աշխատանքներում»*, *«Ի՞նչ մասնակցություն/առնչություն էք ունեցել ՄԱԿ-ի Հատուկ ընթացակարգերի հետ աշխատանքներում»*, *«Ինչպե՞ս կզնահատեք ՄԱԿ-ի Պայմանագրային մարմիններին անհատական դիմումների ներկայացման Ձեր պրակտիկ հմտությունները»*, *«Ինչպե՞ս կզնահատեք Պայմանագրային մարմիններին զեկույցներ ներկայացնելու Ձեր պրակ-*

96. Տես, Հավելված 4:

տիկ հմտությունները», «Ինչպես կգնահատեք ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերին տեղեկություններ ներկայացնելու Ձեր պրակտիկ հմտությունները» և այլն:

**Տեղեկացվածության առումով**, հարցվողների 1/3-ը (27%) Պայմանագրային մարմինների գործունեության և ընթացակարգերի մասին տեղեկացվածության աստիճանը գնահատել է իբրև միջին (ընտրելով «3» ցուցանիշը՝ «0»-ից «5» սանդղակում), 22.2%-ը նշել է, որ ունի լիարժեք պատկերացում ՊՄ-ների գործունեության և ընթացակարգերի մասին (ընտրելով «4» ցուցանիշը՝ «0»-ից «5» սանդղակում) և նույնքան հարցվող իր գիտելիքների մակարդակը գնահատել է միջինից բարձր (ընտրելով «2» ցուցանիշը՝ «0»-ից «5» սանդղակում): ՀԸ-ների վերաբերյալ՝ նույն հարցին ի պատասխան՝ միջին մակարդակի իմացության մասին փաստել է 22,2%-ը, իսկ միջինից բարձր և լիարժեք պատկերացման տարբերակները նշել է հարցվողների 16,7%-ը:

Ինչ վերաբերում է **պրակտիկ փորձին**, ապա ՊՄ-ների հետ աշխատանքի փորձի առկայության մասին փաստել է հարցվողների 61%-ը, իսկ ՀԸ-ների հետ՝ 55,5%-ը:

Ինչպես տեսնում ենք, աշխատանքը ՊՄ-ների հետ թե՛ տեղեկացվածության և թե՛ կիրառելիության առումով ավելի տարածված է, քան աշխատանքը ՀԸ-ների հետ: Այնուամենայնիվ, երկու պարագայում էլ հարցվողների գրեթե կեսը երբևէ չի առնչվել մեխանիզմներից ոչ մեկին, ինչը փաստում է ընդհանուր առմամբ ոչ բավարար իրազեկվածության, կարևորման և կիրառման մասին:

Պրակտիկ կիրառման առումով հետաքրքրական է նաև հետևյալ պատկերը:

Ըստ տրված պատասխանների՝ թե՛ ՊՄ-ների և թե՛ ՀԸ-ների հետ աշխատանքների իրականացման ամենատարածված ձևաչափ է ներգրավվելը շահերի պաշտպանության և հանրային իրազեկման աշխատանքներում: Նման ներգրավվածության մասին՝ իրենց մասնագիտական գործունեության շրջանակներում, փաստել է պատասխանողների 58%-ը:

ՊՄ-ների հետ աշխատանքներում ներգրավման հաջորդ ամենատարածված ձևաչափերն են ներգրավվածությունը դատավարական աշխատանքներում, որի արդյունքում անհատական դիմումներ են ներկայացվել կոմիտեներ, և պայմանագրային մարմիններին ուղղված՝ մարդու իրավունքների խնդիրների վերաբերյալ զեկույցների պատրաստումը:

Պրակտիկ դաշտի ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ անհատական դիմումների քննության ընթացակարգերի արդյունավետությամբ



յունը Հայաստանի համար կարելի է գնահատել շատ ցածր՝ ելնելով ներկայացված դիմումների քանակից և փորձից:

Մինչ օրս Հայաստանում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ երեք անհատական դիմում է ներայացվել Մարդու իրավունքների կոմիտե, որոնցից երեքն էլ ըստ էության քննության փուլ այդպես էլ չեն հասել, երեքն էլ ճանաչվել են ընդունելիության չափանիշներին չհամապատասխանող: Առաջին դիմումը եղել է «Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի» գործով: 2005 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ դիմումը ճանաչվել է անընդունելի ՔՔԻԴ-ի 2-րդ հոդվածի հիմքով<sup>97</sup>: Եվս երկու դիմում ՄԻԿ են ներկայացվել 2016 թ. դեկտեմբերի 28-ին և վերաբերել են նույն իրադարձություններին: 2018 թ. դեկտեմբերի 11-ի որոշմամբ դիմումները ոչ ընդունելի են ճանաչվել՝ կրկին ՔՔԻԴ 2-րդ հոդվածի հիմքով՝ ներպետական ատյանները սպառված չլինելու հիմնավորմամբ<sup>98</sup>:

Ինչ վերաբերում է այլընտրանքային և ստվերային զեկույցների ձևաչափի կիրառմանը, ապա այստեղ պատկերը, առնվազն քանակական տեսանկյունից ավելի դրական է:

Այսպես, օրինակ, Հայաստանում մարդու իրավունքների իրավիճակը ՄԻԿ-ի կողմից դիտարկվել է երեք շրջափուլերի ընթացքում և ներկայացվել են եզրափակիչ դիտարկումներ 1998 և 2012 թվականներին<sup>99</sup>: Հայաստանի կողմից վերջին զեկույցը ներկայացվել է 2018 թ. և դիտարկվել 2020 թ. շրջափուլի ընթացքում: 2011-2012 թթ. հասարակական կազմակերպությունների կողմից ՄԻԿ է ներկայացվել 12 զեկույց, ընդ որում՝ երեքը եղել են միացյալ զեկույցներ: Եվս տասներկու զեկույց ներկայացվել է 2020 թվականի ՄԻԿ շրջափուլին ընդառաջ, որոնցից չորսը՝ կազմակերպությունների միացյալ զեկույցներ են, իսկ երկուսը՝ կազմակերպությունների միավորումներ, ինչպիսիք են՝ Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիան, «Հյուման րայթս

97. UN Treaty Body Database. CCPR/C/85/D/1056/2002: [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolNo=CCPR%2fC%2f85%2fD%2f1056%2f2002&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolNo=CCPR%2fC%2f85%2fD%2f1056%2f2002&Lang=en)

98. UN Treaty Body Database. CCPR/C/124/D/3064/2017: [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolNo=CCPR%2fC%2f124%2fD%2f3064%2f2017&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolNo=CCPR%2fC%2f124%2fD%2f3064%2f2017&Lang=en), UN Treaty Body Database. CCPR/C/124/D/3075/2017: [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolNo=CCPR%2fC%2f124%2fD%2f3075%2f2017&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolNo=CCPR%2fC%2f124%2fD%2f3075%2f2017&Lang=en)

99. UN Treaty Body Database. CCPR/C/ARM/CO/2: [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolNo=CCPR%2fC%2fARM%2fCO%2f2&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolNo=CCPR%2fC%2fARM%2fCO%2f2&Lang=en), UN Treaty Body Database. CCPR/C/79/Add.100: [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolNo=CCPR%2fC%2f79%2fAdd.100&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolNo=CCPR%2fC%2f79%2fAdd.100&Lang=en)

հաուս Երևանը»<sup>100</sup>: Ձեկույցներն անդրադարձել են այնպիսի տարաբնույթ հարցերի, ինչպիսիք են զինձառայության հետ կապված հարցերը, հաշմանադամություն ունեցող անձանց իրավունքները, ԼԳԲՏ անձանց իրավունքները, էթնիկ փոքրամասնությունների իրավունքները, կյանքի իրավունքը, մինչդեռ տական կալանքը, երեխաների մարմնական պատիժը:

Կանանց նկատմամբ խտրականության դեմ կոմիտեն ՀՀ կոնվենցիոն պարտավորությունների կատարումը քննել է 1997 թ., 2002 թ., 2009 թ. և 2016 թ.: Ընդհանուր առմամբ, բոլոր շրջափուլերին ընդառաջ, հասարակական կազմակերպությունների կողմից ԿՆԽՄ ներկայացվել է 10 այլընտրանքային/ստվերային զեկույց, որից 2-ը՝ միացյալ:

Խոշտանգումների դեմ կոմիտեի կողմից դիտարկման շրջափուլերը տեղի են ունեցել 1996 թ., 2000 թ. և 2016 թ., և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվել է 7 զեկույց:

Միևնույն ժամանակ, Հաշմանադամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտե հայաստանյան ՀԿ-ների կողմից ուղարկվել է 1 զեկույց (2015 թ.), 3 զեկույց ուղարկվել է Երեխայի իրավունքների պաշտպանության կոմիտե (2012 թ.), 5 զեկույց՝ Սոցիալական, տնտեսական և մշակութային կոմիտե, որոնցից 4-ն ուղարկվել է ՀԿ-ների նույն կոնսորցիումի կողմից (2019 թ.):

Կախված ոլորտային շրջանակից՝ ՊՄ-ների հետ աշխատանքի պատկերը տարբեր է, այնուամենայնիվ, այլընտրանքային/ստվերային զեկույցների ներկայացման մեխանիզմը ոչ պետական դերակատարների կողմից բավարար կիրառում ունի:

Եթե անդրադառնանք ՀԸ-ների հետ աշխատանքների իրականացմանը, ապա հարցվողների կողմից իբրև առավել տարածված ձևաչափ է նշվում Հատուկ զեկույցողներին/աշխատանքային խմբերին տեղեկատվության տրամադրումը և ոտնահարված իրավունքների վերաբերյալ ահազանգումը (ուսումնասիրությունների, զեկույցների ներկայացման միջոցով):

ՀԸ-ներին ուղարկված կոմունիկացիաների մեկ միասնական բազա հասանելի չէ, ինչպես, օրինակ, այլընտրանքային/ստվերային զեկույցների պարագայում:

Ուշագրավ է, որ ՀԸ-ներին ահազանգման մեխանիզմը ակտիվ կիրառում գտավ ՀԿ-ների շրջանում 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի

100. UN Treaty Body Database. CCPR - International Covenant on Civil and Political Rights. 129 Session (29 Jun 2020 - 24 Jul 2020): [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/SessionDetails1.aspx?SessionID=1374&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/SessionDetails1.aspx?SessionID=1374&Lang=en)

կողմից Արցախի և Հայաստանի հանդեպ սանձազերծված պատերազմի ընթացքում: Ընդ որում՝ ուղարկված բոլոր կոմունիկացիաները կրել են մասնակցային/միասնական բնույթ, այսինքն՝ ոլորտի դերակատարների կողմից դիտարկվել են իբրև հրատապ խնդիրների մասին ՄԱԿ-ին տեղեկացնելու գործիք: Այսպես, օրինակ, Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունները նամակով դիմել են Ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույն հասանելի չափանիշին հասնելու իրավունքի հարցերով հատուկ զեկուցողին՝ պահանջելով հնարավորինս արագ երկխոսություն սկսել Ադրբեջանի կառավարության հետ՝ վերջ տալու վերջինիս կողմից Արցախի խաղաղ բնակչության թիրախավորմանը և այդ թիրախավորման արդյունքում Արցախի ու Հայաստանի բնակչության առողջության վրա վնասակար ազդեցությանը<sup>101</sup>:

Հրատապ դիմում է ուղարկվել նաև Խոշտանգման և այլ դաժան ու անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի և պատժի հարցերով հատուկ զեկուցողին<sup>102</sup> ու Վարձկանների հարցերով աշխատանքային խմբին<sup>103</sup>:

101. Letter to UN Special Rapporteur on the Right of Everyone to the Enjoyment of the Highest Attainable Standard of Physical and Mental Health. հասանլի է այստեղ. [https://prwb.am/2020/11/05/letter-to-un-special-rapporteur-on-the-right-of-everyone-to-the-enjoyment-of-the-highest-attainable-standard-of-physical-and-mental-health/?fbclid=IwAR1kwmj8uxlMa9-sM931GLVgQg5IH2M2dX7wDJZrrZZ\\_euR060VeOzictaM](https://prwb.am/2020/11/05/letter-to-un-special-rapporteur-on-the-right-of-everyone-to-the-enjoyment-of-the-highest-attainable-standard-of-physical-and-mental-health/?fbclid=IwAR1kwmj8uxlMa9-sM931GLVgQg5IH2M2dX7wDJZrrZZ_euR060VeOzictaM)

102. Urgent Call for Action on instances of extrajudicial and arbitrary executions, torture and other cruel, inhuman or degrading treatment based on hatred against Armenians and public display of such acts on social media by the Azerbaijani armed forces: <https://prwb.am/wp-content/uploads/2020/10/Urgent-Call-for-action-on-instances-of-executions-torture-and-ill-treatment-based-on-racial-hatred-against-Armenians-by-Azerbaijan-23.10.2020.pdf>

103. Complaint to the Working Group on the use of mercenaries: <https://www.rightsresearch.net/post/complaint-to-the-working-group-on-the-use-of-mercenaries>

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ



Այսպիսով՝ Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները տարբեր ծավալներով կիրառվում են Հայաստանի Հանրապետությունում գործող հասարակական կազմակերպությունների և իրավաբանների կողմից: Դրանց արդյունավետության գնահատումը, սակայն, հնարավոր է մեծ ժամանակային կտրվածքում: Միևնույն ժամանակ, կարճաժամկետ արդյունքների վերլուծություն հնարավոր է: Օրինակ, պայմանագրային մարմիններին ուղղված զեկույցների և դրանց ջատագովության արդյունավետությունը կարող է գնահատվել բարձրաձայնված խնդիրների առնչությամբ կոմիտեների եզրափակիչ դիտարկումներում տեղ գտած անդրադարձների և հանձնարարականների հիման վրա: Հատուկ զեկուցողների զեկույցներում ևս արտացոլվում է նրանց ուղղված արդյունավետ ջատագովության արդյունքը՝ համապատասխան խնդիրների բարձրաձայնման և դրանց առնչությամբ առաջարկների տեսքով: Միևնույն ժամանակ, արդյունքների գնահատման և դրանց հետևանքների նկատմամբ վերահսկողության միջոցների տեսանկյունից պայմանագրային առավել լայն հնարավորություններ են առկա անհատական դիմումների կիրառման ընթացքում: Օրինակ՝ այն հանգամանքը, որ Հայաստանի կողմից ՄԻԿ ներկայացվել է երեք անհատական դիմում, որոնք չեն համապատասխանել ընդունելիության չափանիշներին, վկայում է դրանց ոչ արդյունավետ կիրառման մասին: Այս հանգամանքը կարող է պայմանավորված լինել նախևառաջ այն հանգամանքով, որ տարածաշրջանում որպես մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ միջազգային ատյան՝ ընկալվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որի վճիռների կատարումը Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար ունի պարտադիր բնույթ, և առկա են դրանց նկատմամբ վերահսկողության մեխանիզմներ: Մյուս կողմից, ի տարբերություն պայմանագրային մարմինների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գերձանրաբեռնվածության պատճառով դիմումների քննությունը բավականին երկար ժամանակ է պահանջում: Բացի դրանից՝ պայմանագրային մարմինները գործում են մարդու իրավունքների ոլորտային փաստաթղթերի հիման վրա և կոչված են ապահովելու այդ խմբերի իրավունքների պաշտպանությունը, ինչը հնարավորություն է տալիս առավելապես բաշխել կոմիտեների ծանրաբեռնվածությունը՝ ըստ ոլորտների:

Ելնելով նրանից, որ Հայաստանում՝ մարդու իրավունքների հիմնահարցերով զբաղվող ոչ պետական դերակատարների շրջանում ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները ոչ այնքան ակտիվ կիրառում ունեն, դրանց արդյունավետության գնահատումը ամբողջական չի կարող լինել: Միևնույն ժամանակ, այլ պետությունների փորձը

ցույց է տալիս, որ դրանց արդյունավետությունը առավելապես կախված է դրանց կիրառումից և ջատագովությունից: Հետևապես, **ակտիվ կիրառումն ու ներկայացված առաջարկների շուրջ պետության ներսում տարվող ակտիվ ջատագովությունը կարող են բարձրացնել դրանց արդյունավետությունը և հանգեցնել էական փոփոխությունների:**

Կարևոր է նաև այդ մեխանիզմների կիրառման, դրանց ուղարկվող զեկույցների և անհատական դիմումների վերաբերյալ իրազեկվածության մեծացումը՝ հասնելու համար դրանցում արժարժված խնդիրների ըստ էության քննությանը, գնահատմանը և դրանց ուղղությամբ առաջարկների ներկայացմանը:

### **Առաջարկներ քաղաքացիական հասարկության և իրավաբանների համար՝**

- Մեծացնել իրազեկվածությունը ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ՝ դրանց կիրառման արդյունավետության բարձրացման նպատակով:
- Ակտիվորեն կիրառել ինչպես Պայմանագրային մարմինների մեխանիզմները, այնպես էլ Հատուկ ընթացակարգերը՝ խթանելու համար դրանց արդյունավետությունը:
- Հետևել Պայմանագրային մարմինների զեկույցման շրջափուլերին և Հատուկ ընթացակարգերի գործունեությանը՝ դրանց ներկայացնելով տեղեկատվություն համապատասխան ոլորտներում առկա խնդիրների, պետության ծախսողումների և անհրաժեշտ միջամտության վերաբերյալ՝ ապահովելու համար իրավիճակի բազմակողմանի ներկայացումը:
- Հետևել Պայմանագրային մարմինների և Հատուկ զեկույցողների կողմից ներկայացված դիտարկումներին, դիրքորոշմանը և կոնկրետ պետությանն ուղղված առաջարկներին և իրականացնել պետության կողմից դրանց հիման վրա համապատասխան օրենսդրական փոփոխությունների կամ լրացումների, քաղաքականության ընդունման ջատագովություն:

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ<sup>104</sup>

- Պարզ լեզու: Դիմումը մշակելիս օգտագործեք պարզ և ուղիղ լեզու: Սա Կոմիտեի համար ավելի հեշտ է դարձնում ձեր փաստարկների ընկալումը: Պարզ լեզվի օգտագործումը ավելի նպաստավոր կդարձնի նաև թարգմանության գործընթացը:
- Ամփոփումներ և էջերի սահմանափակումներ: ՄԱԿ-ի խնդրագրերի և հարցումների բաժինը այժմ նախատեսում է էջերի սահմանափակում՝ 50 էջի շրջանում: Եթե հայցը 20 էջից ավել է, պահանջվում է նաև ամփոփագիր՝ մինչև հինգ էջի սահմաններում, որոնք ներառվում են ընդհանուր էջերի քանակում: Հայցի ամփոփագիր ներկայացնելը լավ պրակտիկա է, և այն պետք է ներառի բոլոր հիմնական կետերը, որոնք ցանկանում եք, որ Կոմիտեն հաշվի առնի, ներառյալ՝ անդրադարձ դիմումի ընդունելիության հարցին և դրա առնչությամբ ծագող ակնհայտ խնդիրներին:
- Նեղ մասնագիտական լեզվից զերծ: Խուսափեք տեխնիկական իրավական տերմիններից և հնարավորության դեպքում օգտագործեք պարզ լեզու: Եթե Ձեզ անհրաժեշտ է վկայակոչել դատարանի, փաստաթղթի կամ ընթացակարգի տեխնիկական իրավական անվանումը, բացատրեք այն, քանի որ Կոմիտեն (և թարգմանիչները) կարող են ծանոթ չլինել ձեր երկրի իրավական համակարգին և պայմաններին:
- Ակտիվ լեզու: Որպեսզի ձեր լեզուն անգլերեն պարզ ու անմիջական լինի, օգտագործեք ոչ թե պասիվ բայեր, այլ ակտիվ բայեր. օրինակ՝ Բ-ին խոշտանգել են:

104. Օգտակար փաստաթղթեր ՄԱԿ-ի պայմանագրային մարմիններին անհատական դիմումներ ներկայացնելու համար. Մարդու իրավունքների կոմիտեին և Խոշտանգումների դեմ կոմիտեին ներկայացվող դիմումների վերաբերյալ ուղեցույցը հասանլի է այստեղ. <https://www.justiceinitiative.org/uploads/507acc52-2c91-4d0f-8410-62c31cb2f391/litigation-toolkit-torture-20180427.pdf>, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը հրատարակել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների պայմանագրերի, այդ թվում՝ ՄԻԿ-ին և ԽԴԿ-ին ուղղված պահանջները անհատական գանգատներ ներկայացնելու վերաբերյալ իր թիվ 7 փաստաթղթում: «Մարդու իրավունքների հայցը» կազմելու սկզբունքներն ու գործընթացը ավելի մանրամասն պատկերացնելու համար «Արդարադատության նախաձեռնությունը» պատրաստել է Գործնական նշում մարդու իրավունքների հայցերի մշակման վերաբերյալ: Խոշտանգումների դեմ համաշխարհային կազմակերպությունը (OMCT) նաև խոշտանգումների հայցերի պատրաստման վերաբերյալ ուղեցույց է ներկայացնում խոշտանգումների գոհերի համար միջոցներ որոնելու մասին. ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների անհատական բողոքների ընթացակարգերի վերաբերյալ ձեռնարկ:

- Անհատականացնել զոհին: Մարդկանց ներկայացնել անուններով, հատկապես խոշտանգումների զոհին՝ նրան «զոհ» կամ «հեղինակ» անվանելու փոխարեն: Սա ավելի անմիջական է, անհատականացնում է զոհին և նվազեցնում է շփոթության ռիսկը:
- Կարճ նախադասություններ: Երկար նախադասությունները կարող են շփոթության մեջ գցել, և ընթերցողը կարող է կորցնել հիմնական մտքի հետքերը:
- Պարբերություններ: Յուրաքանչյուր փաստ կամ կետ ներկայացնել առանձին պարբերությամբ: Յուրաքանչյուր պարբերություն ընթերցողին ազդանշան է տալիս այն մասին, որ սկսվում է նոր փաստ, փաստարկ: Համարակալեք յուրաքանչյուր պարբերություն. սա հնարավորություն է տալիս խուսափել հետագայում տեղեկատվությունը կրկնելուց, ինչպեսև՝ հեշտությամբ հղումներ կատարել փաստերին:
- Իրավակարգավորումների և փաստերի տարանջատում: Դիմումը մշակելիս ձեր փաստերը և իրավական փաստարկները ներկայացրեք առանձին բաժիններով: Ընդհանուր առմամբ, «փաստեր» բաժնում մի՛ բերեք իրավական փաստարկներ, մի՛ օգտագործեք իրավական գնահատականներ: Օրինակ՝ փաստերը ներկայացնելիս մի՛ նշեք, որ անձը խոշտանգումների է ենթարկվել: Փոխարենը՝ հստակ և ուղիղ նկարագրեք կառավարության գործակալի գործողությունները: Այնուհետև, փաստարկների բաժնում, մեկնաբանելով խախտումները՝ կբացատրեք, թե ինչու է առաջին բաժնում նշված գործողությունները խոշտանգում համարվում:
- Հիմնավորում: Ձեր գործը հիմնավորելու համար Կոմիտեին տրամադրեք ապացույցներ և հղումներ: Փաստերը ներկայացնելիս մատնանշեք այն ապացույցները, որոնք ցույց են տալիս փաստի աղբյուրը: Կոմիտեի համար շատ ավելի հեշտ է հետևել ձեր ապացույցներին (և ձեր դիմումին), եթե մատնանշում եք համարակալված ապացույցներ: Դուք պետք է ձեր ներկայացրած յուրաքանչյուր հիմնական փաստի համար վկայակոչեք ապացույցներ: Նմանապես, հղումներ կատարեք իրավական փաստաթղթերի (օրինակ՝ ընդհանուր մեկնաբանություններ, նախորդ որոշումներ և հանձնաժողովի զեկույցներ), որոնցով հիմնավորում եք ձեր մեկնաբանությունները: Դրա նպատակն է առնվազն մեկ իրավական հիմք տրամադրել ձեր ներկայացրած յուրաքանչյուր հիմնական իրավական փաստարկի համար:
- Ներկայացնել դեպքը: Ինչպես փաստերով, այնպես էլ փաստարկներ



րով մի՛ չափազանցրեք ձեր գործը: Եթե գերազնահատում եք (այնդու՛մ եք, որ խախտումն ավելի վատ է, քան փաստերի ապացույցն է) կամ չափազանցնում եք, կորցնում եք Կոմիտեի վստահելիությունը, ինչը կարող է ազդել ձեր ամբողջ գործի վրա: Եթե ապացույցները չեն համապատասխանում ձեր ներկայացրած փաստերին, Կոմիտեն կարող է ձեր դեմ որոշում կայացնել, նույնիսկ եթե փաստերը ակնհայտորեն խախտում են հանդիսանում:

- Կենտրոնացեք փաստերը նկարագրելու վրա, ապա ցույց տվեք Կոմիտեին, թե ինչու է դա խախտում: Կոմիտեին մի ասեք, որ անձը «խոշտանգվել է»: Փոխարենը, հանձնաժողովին ցույց տվեք գործի կոնկրետ փաստերը: Իրավական փաստարկն ավելին է պահանջում, քան պարզապես եզրակացություն պնդելը:
- Կառուցվածքը և վերնագրերը: Համոզվեք, որ ձեր դիմումը տրամաբանական կառուցվածք ունի: Կաղապարը տալիս է հիմնական բաժինները, սակայն օգտագործեք ենթավերնագրեր՝ փաստերը կամ փաստարկները խմբավորելու և ընթերցողին դրանց կապերի վերաբերյալ ճիշտ պատկերացում տալու համար: Համոզվեք, որ ենթավերնագրերը պարզ են, և ընթերցողին պատմեք, թե ինչ է ցույց տալիս փաստերի կամ փաստարկների յուրաքանչյուր խումբ: Պարզ, լավ կազմակերպված ենթավերնագրերը ընթերցողին թույլ են տալիս զննել ձեր փաստաթուղթը և հասկանալ հիմնական փաստարկները:
- Համոզվեք, որ ձեր ենթավերնագրերը համապատասխանում են կայուն կառուցվածքին:
- Իրավական փաստարկներ: Յուրաքանչյուր փաստարկի համար, անկախ նրանից՝ դա վերաբերում է ընդունելիությանը կամ խախտմանը, հաճախ օգտակար է օգտագործել հետևողական կառուցվածք՝ (1) թեմատիկ նախադասություն, (2) համապատասխան իրավական ստանդարտներ, (3), ինչպես են փաստերը հատում իրավական չափանիշները և (4) ինչպես է պետությունը պատասխանատու:
- Թեմատիկ նախադասություններ. Յուրաքանչյուր բաժին պետք է սկսվի թեմատիկ նախադասությամբ, որը բնութագրում է (1) այն հարցը, որին կանդրադառնա բաժինը և (2) հիմնական կետը կամ փաստարկը, որը դուք բերում եք այդ հարցի վերաբերյալ: Այդպիսով Կոմիտեն գիտի, թե ինչ էք ցույց տալու, և նրանց համար ավելի հեշտ է հասկանալ փաստերը և դրանց առնչությունը ձեր փաստարկներին: Օրակարգը սահմանելով՝ դուք կարող եք շեշտել կարևոր կետերը և հիմնավորել փաստարկները: Թեմատիկ նախադասություն-

ները, ինչպես լավ ենթավերնագրերը, գործում են նշանների պես՝ ընթերցողի համար հեշտացնելով ձեր փաստաթղթին հետևելը:

- Իրավական ստանդարտներ: Ձեր իրավական փաստարկները ներկայացնելիս առաջնորդվեք այն ստանդարտներով, որոնք տվյալ Կոմիտեն սահմանել է իր որոշումներում կամ ընդհանուր մեկնաբանություններում, իսկ այնուհետև լրացրեք դրանք՝ վկայակոչելով ՄԱԿ-ի պայմանագրային այլ մարմինների կամ մարդու իրավունքների այլ մեխանիզմների որոշումները: Եթե Ձեզ անհրաժեշտ է վկայակոչել հատուկ զեկուցողների եզրափակիչ դիտարկումները, ուղեցույցները կամ զեկույցները (soft law), ապա դրանք պետք է լինեն վերջին ներկայացվածները:
- Նախադեպային իրավունքի օգտագործում: Ներկայացնելով համապատասխան դատական պրակտիկա՝ ստուգեք այդ հարցի առնչությամբ վերջին դեպքերը, հատկապես ձեր կողմից դիմած Կոմիտեի քննության առարկա գործերում, եթե առկա են: Կոմիտեները նոր գործերը գնահատելիս հաճախ հղում են կատարում իրենց մշակած և կիրառած իրավական սկզբունքներին: Հետևաբար, հաճախ օգտակար է Կոմիտեին ուղղել դեպքեր, երբ նրանք սահմանում կամ կիրառում են ձեր փաստարկները հիմնավորող սկզբունքներ, կամ դեպքեր, երբ նրանք խախտումներ են հայտնաբերել՝ հիմնվելով ձեր գործի փաստերին նման փաստերի վրա:
- Վկայակոչել իրավական հիմքերը: Իրավական փաստարկներ ներկայացնելիս համոզվեք, որ տալիս եք ընթերցողին անհրաժեշտ բոլոր տեղեկությունները՝ գտնելու այն իրավական մարմինները կամ աղբյուրները, որոնց վրա հիմնվել են այդ փաստարկները: Իրավական աղբյուրներն ավելի հեշտ է կարդալ և գտնել, երբ դրանք ներկայացվում են կայուն ձևաչափով:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱԳՐԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Համփոփումն Բաժին 2.2-ում և Բաժին 3.2.-ում ներկայացված տեղեկության՝ ստորև ներկայացնում ենք որոշակի հիմնական առավելություններ, ինչպես նաև սահմանափակումներ, որոնք ոչ պետական դերակատարները պետք է հաշվի առնեն՝ ՀԸ-ների հետ աշխատանքներ նախաձեռնելիս:

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ
<p>ՀԸ-ներն իրենց գործունեության մեջ <b>անկախ են:</b></p> <p>Իբրև չվճարվող անկախ փորձագետներ՝ իրենց գործունեության շրջանակներում մանդատակիրներն ուղղորդվում են միայն մասնագիտական մոտեցումներով, հաշվետու չեն որևէ կառավարության կամ քաղաքական ուժի, ինչպես նաև որևէ ոչ պետական կառույցի:</p>	<p>ՀԸ-ների գործունեությունը <b>չի առաջացնում որևէ իրավական հետևանք</b> պետությունների համար:</p> <p>ՀԸ-ների կողմից պետություններին ուղղված կոմունիկացիաները <b>պարտադիր իրավական ուժ չունեն:</b></p>
<p>ՀԸ-ների գործունեությունը ծածկում է մարդու իրավունքների <b>թեմատիկ լայն շրջանակ</b>՝ հնարավորություն ստեղծելով ոչ պետական դերակատարների համար՝ մանդատակիրներին դիմել ամենաարագ բեր իրավունքների ոտնահարման պարագայում:</p> <p>ՀԸ-ներին ներկայացվող գրություններն ու կոմունիկացիաները որևէ կերպ չեն սահմանափակվում այն իրավունքներով և խնդիրներով, որոնց պաշտպանության կամ որոնց վերաբերող իրավական գործիքներին՝ կոնվենցիաներին, պայմանագրերին, տվյալ պետությունը միացել է: Կոնվենցիաների վավերացման բացակայությունը <b>չի սահմանափակում</b> մանդատակիրին այս կամ այն իրավունքի պաշտպանության խնդրով կառավարություններին կոմունիկացիա հղելու գործում:</p>	<p>ՀԸ-ները չեն կարող կատարել իրենց մանդատից բխող այցեր՝ առանց պետության պաշտոնական հրավերի առկայության:</p>

ՀԸ-ներին գրություններ ուղարկելիս ոչ պետական դերակատարները **պարտավորված չեն սպասել**, մինչև իրենց կողմից նշվող իրավունքի խախտման գործով **սպառվեն ներպետական դատական ատյանները**, եթե նման գործընթացներ նախաձեռնված են:

ՀԸ համակարգի քաղաքականացվածությունն էականորեն խաթարում է մանդատակիրների գործունեության արդյունավետությունը: Նոր մանդատների ստեղծումը կամ գործող մանդատների վերանայումը, հատկապես պետության վերաբերյալ մանդատների պարագայում, հաճախ քաղաքականապես պայմանավորված և ըստ այդմ խոչընդոտվող գործընթաց է՝ անկախ նրանից, թե որքան ակտիվորեն ոչ պետական դերակատարները կջատագրվեն այս ուղղությամբ:

Երբ այս կամ այն խնդիրը կարևորվում է մանդատակրի կողմից, վերջինս իր աշխատանքում ձգտում է լինել հնարավորինս **արագագործ և փեսանելի՝** հասցեագրված գրություններին և կոմունիկացիաներին արագ արձագանքելով, դրանց վերաբերյալ միջազգային իրազեկվածությունը բարձրացնելով, ինչը կարող է ազդեցություն ունենալ իրավունքի հետագա խախտումների կանխման գործում:

ՀԸ համակարգում առկա է մանդատների որոշակի համընկնում (overlapping), ինչի արդյունքում ոչ պետական դերակատարների համար կարող է դժվար լինել կողմնորոշվել, թե իրենց արձարծած խնդրի պարագայում ՀԸ-ներից որի հետ են ադվոկացիոն աշխատանքներն առավել արդյունավետ և թիրախային:

Ոչ պետական դերակատարների կողմից ուղարկվող գրություններն ու և տեղեկությունները ուսումնասիրելու և նրանց հետ կապ հաստատելու և պահպանելու գործում մանդատակիրները ձգտում են լինել առավել **ճկուն և հասանելի**, բաց՝ համագործակցության համար, նաև կապելով իրենց դիմած դերակատարներին այլ մանդատակիրների հետ, եթե ներկայացված գրություններից այդպիսի կարիքը տեսանելի է:

ՀԸ-ների գործառույթների մասին տարբեր երկրներում առկա է տեղեկացվածության ցածր մակարդակ, որի արդյունքում վերջիններս հաճախ դուրս են մնում ոչ պետական դերակատարների ադվոկացիոն աշխատանքներից: Իրազեկվածության բարձրացման գործում մեծ դերակատարում կարող են ունենալ ՄԱԿ-ի տեղական գրասենյակները:

**ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱԳՐԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ<sup>105</sup>**

	<b>ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱԳՐԵՐ</b>	<b>ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ</b>
<b>Ինչպիսիք մշտադիտարկման մեխանիզմ է</b>	<p><b>Թեմատիկ կամ պետության հարցերով պայմանավորված</b></p> <p>ՀԸ-ները դիտարկում են կոնկրետ երկրում մարդու իրավունքների վիճակը (ՊՀԸ) կամ կենտրոնանում են մարդու իրավունքների խնդիրների (թեմաների) վրա՝ որպես ընդհանուր դիտարկման մաս</p>	<p><b>Միայն պետության հարցերով պայմանավորված</b></p> <p>ՊՄ-ները դիտարկում են միայն պետությունների կողմից վավերացված կամ միացած պայմանագրերի հիման վրա ստանձնած պարտավորությունների կատարումը</p>
<b>Ո՞վ է առաջարկներ ներկայացնում</b>	<p><b>Անկախ փորձագետներ</b></p> <p>Անհատները կամ փոքր խմբերը առաջարկներ են ներկայացնում նախ և առաջ պետություններին: Փորձագետները չեն ընտրվում պետությունների կողմից, համատեղությամբ չեն կարող իրականացնել պետական որևէ գործառույթ, նաև ՄԱԿ-ի համակարգի աշխատակիցներ չեն, չեն վճարվում</p>	<p><b>Պետությունների կողմից առաջադրված փորձագետներ</b></p> <p>Փորձագետների կոմիտեն առաջարկներ է ներկայացնում պետություններին: Կոմիտենտրում ներգրավվող փորձագետներին առաջադրում են պետությունները</p>

105. ՀԸ վերաբերյալ Մարդու իրավունքների միջազգային ծառայության պատրաստած ձեռնարկը, էջ 11 հասանելի է այստեղ. [https://www.ishr.ch/sites/default/files/documents/a\\_practical\\_guide\\_to\\_the\\_un\\_special\\_procedures\\_final.pdf](https://www.ishr.ch/sites/default/files/documents/a_practical_guide_to_the_un_special_procedures_final.pdf)

<p><b>Ո՞ր մարդու իրավունքներին են անդրադառնում</b></p>	<p><b>Բոլոր</b></p> <p>ՀԸ-ները կենտրոնանում են կամ երկրների վրա, կամ որոշակի թեմաների, որոնց մանդատը ստացել են Մարդու իրավունքների խորհրդից:</p> <p>Բոլոր պարագաներում պետության կողմից ՄԱԿ-ի մարդու իրավունքների որևէ գործիքի (պայմանագիր, կոնվենցիա) վավերացումը նախապայման չէ դիտարկում իրականացնելու համար</p>	<p><b>Կոնվենցիոն հիմքով</b></p> <p>ՊՄ-ները կենտրոնանում են միայն իրենց վերահսկողության առարկա հանդիսացող պայմանագրերով ճանաչված իրավունքների վրա</p>
<p><b>Կարող են արդյոք պետություններ այցեր իրականացնել</b></p>	<p><b>Այո</b></p> <p>Բոլոր ՀԸ-ները կարող են պետություններ այցեր իրականացնել, սակայն պաշտոնական այցեր հնարավոր են, եթե տվյալ պետությունը իրենց հրավիրել է</p>	<p><b>Այո</b></p> <p>Որոշ ՊՄ-ներ կարող են այցեր իրականացնել պետություններ. օրինակ՝ Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն</p>
<p><b>Ի՞նչ հաճախականությամբ է տեղի ունենում դիտարկումը</b></p>	<p><b>Ընթացիկ և փարեկան</b></p> <p>Յուրաքանչյուր հարուկ զեկուցող հրապարակում է զեկույց իրեն տրված թեմայի կամ պետության շուրջ: Նրանք նաև կարող են կոմունիկացիա հաստատել փարվա ընթացքում՝ որևէ երկրում մարդու իրավունքների լուրջ խախտումների դեպքում</p>	<p><b>Տարբեր է</b></p> <p>Պետությունները դիտարկման են ենթարկվում մոտավորապես 4 փարին մեկ անգամ, բայց սովորաբար ավելի քիչ հաճախականությամբ: Սա կախված է պետության կողմից տեղեկատվության ներկայացման ժամկետից և ՊՄ-ի ծանրաբեռնվածությունից</p>
<p><b>Ո՞ր պետություններն են դիտարկվում</b></p>	<p><b>Բոլորը</b></p> <p>Չնայած նրան, որ որոշ հարուկ զեկուցողների տրված է հստակ պետության իրավիճակի ուսումնասիրման մանդատ</p>	<p><b>Որոշները</b></p> <p>ՊՄ-ները կարող են դիտարկել միայն այն պետությունները, որոնք վավերացրել են այդ մարմինների գործունեության հիմք հանդիսացող պայմանագրերը</p>

<p><b>Ինչ կշիռ ունեն առաջարկները</b></p>	<p><b>Փորձագիտական</b></p> <p>Առաջարկները կատարվում են անկախ փորձագետների կողմից, ինչը դրանց բավականին հեղինակություն է հաղորդում: Առաջարկներն ինքնին պարտադիր չեն, հետևաբար դրանց կատարումը պետությունների կողմից պարզապես խրախուսվում է:</p>	<p><b>Պարտադիր</b></p> <p>ՊՄ առաջարկները հեղինակավոր պնդումներ են առայն, թե ինչ պեք է անեն պետությունները՝ կատարելու համար իրենց սրանձնած պարտավորությունները: Այնուամենայնիվ, դրանց չկատարման դեպքում պարտամիջոցներ նախատեսված չեն: Առաջարկները սովորաբար ձևակերպվում են իրավական լեզվով և կարող են շար առանձնահատուկ լինել:</p>
--	--	---

## ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՄԱԿ-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

### ԲԱԺԻՆ. Հարցվողի տվյալներ\*

- Մասնագիտություն:
- Զբաղվածություն (անհատական պրակտիկա, աշխատանք հասարակական կազմակերպությունում, իրավաբանական գրասենյակում և այլն):
- Ոլորտ, մասնագիտական ուղղվածություն:
- Նշված տարբերակներից ընտրեք Ձեր գործունեությանը/մասնագիտական փորձին համապատասխանող տարբերակը կամ տարբերակները՝
  - Ունեմ դատավարական աշխատանքներում ներգրավման փորձ
  - Ունեմ շահերի պաշտպանության, հանրային իրազեկման աշխատանքներում ներգրավման փորձ
  - Ունեմ մարդու իրավունքների խնդիրների վերաբերյալ տեղական զեկույցների պատրաստման փորձ
  - Ունեմ մարդու իրավունքների խնդիրների վերաբերյալ միջազգային զեկույցների պատրաստման փորձ
  - Նշվածներից ոչ մեկը
  - Այլ (Other):
- Գործունեության աշխարհագրական վայր՝
  - ք. Երևան
  - Արագածոտնի մարզ
  - Արարատի մարզ
  - Արմավիրի մարզ

\* տվյալ բաժնի բոլոր հարցերը ենթակա են պարտադիր լրացման



- Գեղարքունիքի մարզ
- Լոռու մարզ
- Կոտայքի մարզ
- Շիրակի մարզ
- Սյունիքի մարզ
- Վայոց ձորի մարզ
- Տավուշի մարզ

▪ **Կրթություն (աստիճան և մասնագիտացում)**

**ԲԱԺԻՆ. Ընդհանուր տեղեկություններ, իրազեկվածություն**

▪ **Նշեք Ձեզ ծանոթ՝ ՄԱԿ-ի Պայմանագրային մարմիններից մի քանիսը: Եթե դժվարանում եք պատասխանել, անցեք հաջորդ հարցին:**

▪ **Ինչպես կգնահատեք պայմանագրային մարմինների գործունեության, ընթացակարգերի, գործիքակազմի վերաբերյալ Ձեր գիտելիքները.\***

→ *Նման գիտելիքների չեմ տիրապետում:*



→ *Ունեմ լիարժեք պատկերացումներ Պայմանագրային մարմինների գործունեության, ընթացակարգերի, գործիքակազմի վերաբերյալ:*

▪ **Ինչպես կգնահատեք պայմանագրային մարմինների հանդեպ պետության հաշվետվողականության պարտավորությունների և ընթացակարգերի վերաբերյալ Ձեր գիտելիքները.\***

→ *Նման գիտելիքների չեմ տիրապետում:*



→ *Ունեմ լիարժեք պատկերացումներ պայմանագրային մարմինների հանդեպ պետության հաշվետվողականության պարտավորությունների և ընթացակարգերի վերաբերյալ:*

- Ինչպէս կգնահատեք ոչ պետական կառույցների կողմից (ՀԿ-ներ, նախաձեռնություններ, միջազգային ոչ կառավարական կազմակերպություններ և այլն) պայմանագրային մարմիններին զեկույցների ներկայացման վերաբերյալ Ձեր գիտելիքները.\*

→ Նման գիտելիքների չեմ տիրապետում:



→ Ունեմ լիարժեք պատկերացումներ պետական կառույցների կողմից (ՀԿ-ներ, նախաձեռնություններ, միջազգային ոչ կառավարական կազմակերպություններ և այլն) պայմանագրային մարմիններին զեկույցների ներկայացման վերաբերյալ:

- Ինչպէս կգնահատեք պայմանագրային մարմիններին անհատական դիմումներ ուղարկելու վերաբերյալ Ձեր գիտելիքները.\*

→ Նման գիտելիքների չեմ տիրապետում:



→ Ունեմ լիարժեք պատկերացումներ պայմանագրային մարմիններին անհատական դիմումներ ուղարկելու վերաբերյալ:

- Նշեք Ձեզ ծանոթ՝ ՄԱԿ-ի Հատուկ ընթացակարգերից մի քանիսը: Եթե դժվարանում եք պատասխանել, անցեք հաջորդ հարցին:

- Ինչպէս կգնահատեք ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերի գործունեության վերաբերյալ Ձեր գիտելիքները.\*

→ Չեմ տիրապետում նման գիտելիքների:



→ Ունեմ լիարժեք պատկերացումներ Պայմանագրային մարմիններին անհատական դիմումներ ուղարկելու վերաբերյալ:

- Ինչպէս կգնահատեք Հատուկ ընթացակարգերի և պետության միջև հնարավոր համագործակցության /աշխատանքների իրականացման տարբերակների վերաբերյալ Ձեր գիտելիքները.\*

→ Չեմ տիրապետում նման գիտելիքների:

- 0
- 1
- 2
- 3
- 4
- 5

→ Ունենմ լիարժեք պատկերացումներ հատուկ ընթացակարգերի և պետության միջև հնարավոր համագործակցության/աշխատանքների իրականացման տարբերակների վերաբերյալ:

- **Ինչպես կզնահատեք ոչ պետական կառույցների կողմից (ՀԿ-ներ, քաղաքացիական նախաձեռնություններ, անհատ քաղաքացիներ, անհատ փորձագետներ, միջազգային ոչ կառավարական կազմակերպություններ և այլն) Հատուկ ընթացակարգերին տեղեկություններ ուղարկելու վերաբերյալ Ձեր գիտելիքները.\***

→ Ձեմ տիրապետում նման գիտելիքների:

- 0
- 1
- 2
- 3
- 4
- 5

→ Ունենմ լիարժեք պատկերացումներ ոչ պետական կառույցների կողմից (ՀԿ-ներ, քաղաքացիական նախաձեռնություններ, անհատ քաղաքացիներ, անհատ փորձագետներ, միջազգային ոչ կառավարական կազմակերպություններ և այլն) հատուկ ընթացակարգերին տեղեկություններ ուղարկելու վերաբերյալ:

## ԲԱԺԻՆ. Դատավարություն

- **Ինչ մասնակցություն եք ունեցել ՄԱԿ-ի Պայմանագրային մարմինների հետ աշխատանքներում.\***

→ Անհատական դիմումի ներկայացում

→ Ներկայացված դիմումի շրջանակներում որպես երրորդ կողմի կարծիքի (*amicus curiae*) ներկայացում

→ Ներկայացված դիմումի շրջանակներում փաստահավաք աշխատանքների իրականացում

→ Ներկայացված դիմումի շրջանակներում հետազոտական աշխատանքների իրականացում

→ Իմ աշխատանքում երբևէ չեմ առնչվել ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների հետ

→ Այլ (*Other*):

- Ինչպե՞ս կգնահատեք ՄԱԿ-ի պայմանագրային մարմիններին անհատական դիմումների ներկայացման Ձեր պրակտիկ հմտությունները: Եթե նման հմտություններ չունեք, նշեք «0» տարբերակը.\*



- Ձեր գործունեության ընթացքում արդյոք կիրառե՞լ եք միջազգային որևէ դատական ատյան: Եթե այո, և եթե հնարավոր է՝ խնդրում ենք մանրամասնել: Եթե ոչ՝ խնդրում ենք անցնել հաջորդ բաժին:

### ԲԱԺԻՆ. Շահերի պաշտպանություն, զեկուցում, հանրային իրազեկում

- Ի՞նչ մասնակցություն եք ունեցել ՄԱԿ-ի Պայմանագրային մարմինների հետ աշխատանքում.\*

- Պետության կողմից պարբերական զեկույցների ներկայացման աշխատանքներում
- Այլընտրանքային կամ սրվերային զեկույցների պատրաստման և ներկայացման աշխատանքներում
- Այլընտրանքային կամ սրվերային զեկույցների ներկայացման շրջանակներում ադվոկացիոն աշխատանքներ պայմանագրային մարմինների հետ
- Պայմանագրային մարմինների եզրափակիչ դիտարկումների հիման վրա պետության ստանձնած պարտավորությունների կատարման մոնիթորինգ
- Պայմանագրային մարմինների եզրափակիչ դիտարկումների հիման վրա պետության ստանձնած պարտավորությունների վերաբերյալ հանրային իրազեկման իրականացում
- Իմ աշխատանքում երբևէ չեմ առնչվել ՄԱԿ-ի Պայմանագրային մարմինների հետ:

- Ինչպե՞ս կգնահատեք Պայմանագրային մարմիններին զեկույցներ ներկայացնելու Ձեր պրակտիկ հմտությունները: Եթե նման հմտություններ չունեք, նշեք «0» տարբերակը.\*



▪ **Ինչ մասնակցություն/առնչություն եք ունեցել ՄԱԿ-ի Հատուկ ընթացակարգերի հետ աշխատանքներում.\***

- Հատուկ զեկուցողներին/աշխատանքային խմբերին տեղեկատվության տրամադրում, ոտնահարված իրավունքների վերաբերյալ ահազանգում, ուսումնասիրությունների ներկայացում:
- Հատուկ զեկուցողներին/աշխատանքային խմբերի պաշտոնական այցերի ընթացքում կապերի հաստատման, շահերի պաշտպանության աշխատանքների իրականացում:
- Հատուկ զեկուցողներին/աշխատանքային խմբերի պատրաստած զեկույցների տարածում, հանրայնացում, իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում:
- Իմ աշխատանքում երբևէ չեմ առնչվել ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերին:
- Այլ (Other):

▪ **Ինչպե՞ս կգնահատեք ՄԱԿ-ի Հատուկ ընթացակարգերին տեղեկություններ ներկայացնելու Ձեր պրակտիկ հմտությունները: Եթե նման հմտություններ չունեք, նշեք «0» տարբերակը.\***



**Եզրափակիչ հարցեր**

- **Ունե՞ք այլ դիտարկումներ, ասելիք:**

# ABSTRACT



The effective delivery of UN Treaty Bodies and Special Procedures largely depends on the level of civil society actors' performance. Possessing the knowledge, tools, and skills, necessary for engaging with UN Treaty Bodies and Special Procedures, non-state parties may expand their influence over developments in their own country or elsewhere, advocating for the solution of the most urgent and sensitive issues on the ground.

This handbook describes the possibilities and ways of involving non-state actors in the UN human rights mechanisms, the logic underlying and the practices applied by the UN Treaty Bodies and Special Procedures. The manual also discusses the local and international experience accrued due to such involvement, along with the possibilities for strategic litigation.

The handbook was compiled within the framework of the Eurasia Partnership Foundation's "Promoting UN Complaints Procedures in Armenia" project, which aims to increase the effectiveness of the implementation of UN human rights mechanisms and contribute to a more efficient investigation and better protection of human rights through the application of international complaint procedures. The project is supported by The Office of the United Nations High Commissioner for Human Rights.

## ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ՄԱԿ-ի Պայմանագրային մարմինների և Հատուկ ընթացակարգերի աշխատանքի արդյունավետությունը մեծապես կախված է քաղաքացիական հասարակության դերակատարների ակտիվությունից: Տիրապետելով Պայմանագրային մարմինների և Հատուկ ընթացակարգերի հետ աշխատանքի համար անհրաժեշտ գիտելիքների, գործիքների և հմտությունների, ոչ պետական դերակատարները կարող են ընդլայնել սեփական ազդեցությունը իրենց երկրում կամ այլուր տեղի ունեցող գործընթացների վրա, բարձրաձայնել իրավունքի պաշտպանության առավել սուր և զգայուն խնդիրները:

Այս ձեռնարկը ներկայացնում է ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմների հետ ոչ պետական դերակատարների ներգրավման հնարավորություններն ու եղանակները, Պայմանագրային մարմինների և Հատուկ ընթացակարգերի աշխատանքների տրամաբանությունն ու պրակտիկաները, քննարկվում է նման ներգրավման շրջանակներում ծավալված տեղական և միջազգային փորձը, ինչպես նաև ռազմավարական դատավարությունների իրականացման հնարավորությունները:

Ձեռնարկի պատրաստումը մաս է կազմում Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից իրականացվող՝ «ՄԱԿ-ի բողոքների ներկայացման ընթացակարգերի խթանումը Հայաստանում» ծրագրի, որի նպատակն է բարձրացնել ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմների իրացման արդյունավետությունն ու բողոքների միջազգային ընթացակարգերի կիրառման միջոցով նպաստել մարդու իրավունքների ունահարումների առավել արդյունավետ հետաքննությանն ու այդ իրավունքների պաշտպանությանը: Ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի մարդու իրավունքների Գերագույն հանձնակատարի գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:





*This publication is a part of the series of manuals published under the 'EPF University' heading.*

## **PUBLICATIONS UNDER THE 'EPF UNIVERSITY' HEADLINE**

- The Culture of Violence in Armenia (in Armenian). (2020) <https://epfarmeria.am/hy/document/Culture-of-Violence-in-Armenia>
- The Culture of Violence in Armenia: Reflections and Recommendations. (in Armenian). (2020) <https://epfarmeria.am/hy/document/Roots-of-Violence-in-Armenia-recommendations>
- The Probation Service in the Republic of Armenia. Part 1 (in Armenian). (2020) <https://epfarmeria.am/hy/document/Baseline-research-on-probation-service-in-RA>
- Issues Related to the Rights of and Opportunities for Yezidi Girls Residing in Armenia. (2020) <https://epfarmeria.am/document/Issues-Related-to-the-Rights-of-and-Opportunities-for-Yezidi-Girls-Residing-in-Armenia>
- Relations Without Interactions. (2020) <https://epfarmeria.am/document/Relations-without-Interactions>
- Armenia 3.0. Understanding 20th Century Armenia. (2020) <https://epfarmeria.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia>
- Armenia and The Region (in Armenian). (2019) [https://epfarmeria.am/hy/document/Armenia\\_and\\_the\\_Region](https://epfarmeria.am/hy/document/Armenia_and_the_Region)
- Publishing Guide (in Armenian, with English abstracts). (2019) <https://epfarmeria.am/hy/document/publication-algorithm>
- Present-day knowledge for effective advocacy (in Armenian, with English abstracts). (2019) <https://epfarmeria.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs>
- Critical Thinking: Logical Fallacies and Misleading Rhetorical Tricks (in Armenian). (2019) <https://epfarmeria.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking>

- About the Methodology of Systemic Thought Activity (MSTA) and Creative Games. (2018) <https://epfarmeria.am/document/MSTA-Creative-Game>
- Society and Local Self-Governance. Conclusions and Recommendations from Organizational Activity Seminar. (2018) <https://epfarmeria.am/document/OAS-Highlights-CELoG-2018>
- Culture, Literature and Art. (2018) <https://epfarmeria.am/document/EPF-Culture-Literature-Art>
- Manifestations of Tolerance and Intolerance in Armenian Literature (in Armenian, with English abstracts). (2018) <https://epfarmeria.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature>



Այս հետազոտությունը «ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրատարակվող գրքերի շարքի մաս է կազմում:

## **«ԵՀՀ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԽՈՐԱԳՐԻ ՆԵՐՔՈ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԱՅԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ**

- Բռնության մշակույթը Հայաստանում, 2020. <https://epfarmeria.am/hy/document/Culture-of-Violence-in-Armenia>
- Բռնության մշակույթը Հայաստանում. անդրադարձ և առաջարկներ, 2020. <https://epfarmeria.am/hy/document/Roots-of-Violence-in-Armenia-recommendations>
- Պրոբացիայի ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում. Մաս 1, 2020. <https://epfarmeria.am/hy/document/Baseline-research-on-probation-service-in-RA>
- Հայաստանում բնակվող ազգությամբ եզդի աղջիկների իրավունքներին և հնարավորություններին առնչվող խնդիրները, 2020. <https://epfarmeria.am/hy/document/Issues-Related-to-the-Rights-of-and-Opportunities-for-Yezidi-Girls-Residing-in-Armenia>
- Հարաբերություններ առանց շփումների, 2020, <https://epfarmeria.am/hy/document/Relations-without-Interactions>
- Արմենիա 3.0. հասկանալ 20-րդ դարի Հայաստանը (անգլերեն), 2020. <https://epfarmeria.am/hy/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia>
- Հայաստանը և տարածաշրջանը, 2019, [https://epfarmeria.am/hy/document/Armenia\\_and\\_the\\_Region](https://epfarmeria.am/hy/document/Armenia_and_the_Region)
- Հրատարակչական գործընթացի ուղեցույց, 2019, <https://epfarmeria.am/hy/document/publication-algorithm>
- Այժմեական գիտելիք շահերի արդյունավետ պաշտպանության համար. ձեռնարկ, 2019, <https://epfarmeria.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs>
- Քննադատական մտածողություն. տրամաբանական սխալներ և հոետորաբանական շեղող կիրառուկներ, 2019, <https://epfarmeria.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking>

- Համակարգված մտագործունեության մեթոդաբանություն և կրեատիվ խաղեր, 2018, <https://epfarmeria.am/hy/document/MSTA-Creative-Game>
- Հասարակություն և տեղական ինքնակառավարում. Կազմակերպագործունեական խաղի արդյունքները, 2018, <https://epfarmeria.am/hy/document/OAS-Highlights-CELoG-2018>
- ԵՀՀ-ն և մշակույթը, գրականությունն ու արվեստը (անգլերեն), 2018, <https://epfarmeria.am/document/EPF-Culture-Literature-Art>
- Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ, 2017, <https://epfarmeria.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature>

ՀՏԴ 341.231.14(07)

ԳՄԴ 67.412.1g7

Պ 505



### **Hasmik Petrosyan, Anahit Simonyan**

Employing the UN Human Rights Protection Mechanisms in Advocacy Work: A Practical Handbook for Civil Society Actors and Lawyers/

Պ 505

Authors of the Study: Hasmik Petrosyan, Anahit Simonyan

Editorial board: Nikolay Hovhannisyan, Narine Aleksyan, Angela Avagyan

Eurasia Partnership Foundation, 2021 - 119 pages



This research is a part of the series of manuals published under the “EPF University” heading. This publication is a part of Civil Society (CS) direction. The series include texts which belong to four large thematic directions:

**Critical Thinking (CT)**

**War and Peace (WP)**

**Civil Society (CS)**

**Education, methodology of history, culture and values (EMHCV)**

ՀՏԴ 341.231.14(07)

ԳՄԴ 67.412.1g

ISBN 978-9939-1-1256-5

© Eurasia Partnership Foundation, 2021

ISBN 978-9939-1-1256-5



9 789939 112565